



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

2-83







19 NOV 2011

891.542-3(08)

Գ-ՑՅ

ԱՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Ա Մ

# ՊԱՏԵՐԱԶՄԸ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրիւտարներ բոլոր յերկիրներէ, միացեր

891.542-3/0811

Զ-83

19

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

333

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1925



13744-57



12 APR 2013

30118

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀԱՏՈՐ III.

№ 285. Գրառակար 199բ. Տիրաժ 5000.

Պետհրատի յեկրորդ տպարան Յերեանում. № 116:



ՊԱՏԵՐԱԶՄԸ



Դատի - 31/12 39/1  
I

Փոքր, աննշան գյուղ և Կաղնուտը, այնպես վոր  
յերը պետական վորևե պաշտոնյա յեղնում և շրջանը  
պտտելու՝ նա սկի Կաղնուտ չի մտնում: Բայց լավ  
պարտեզներ ունի Կաղնուտը և ավելի շատ բարդիներ,  
անթիվ շեկ բարդիներ, վորոնց ուղղաձիգ շարքերին  
նայողը զարմանում և իսկապես, թե ինչու այդ շենի  
անունը Կաղնուտ և դրված, յերբ մի կաղնի անգամ  
չկա այնտեղ: Աննշան ու փոքր և նաև Կաղնուտի  
տեղը. արձակ դաշտերից հեռացած՝ նա, խռոված թե  
քամիներից պաշտպանվելու համար ասես, թագնվել և  
մի նեղ ձորակում և՛ յերբ մի վերստ հեռավորությու-  
նից նայում ես նրան—տեսնում յես միայն բարդի-  
ների անհամար կատարներ, վոր առաջին պահ թվում  
են թփեր՝ ամառ ժամանակ, իսկ ձմեռը հիշեցնում են  
չորացած ճալախոտի փնջեր... Այսպես՝ մի նեղ ձորա-  
կի մեջ, սարի արեաղեմ լանջին կպած՝ Կաղնուտը  
նայում և յերկնքին, մեկ ել կողքից անցնող յերկա-  
թուղուն, վորտեղից գիշեր ցերեկ շրխկոցով ու սու-  
լոցով անցնում են գնացքներն իրար յեակից: Անց-  
նում են հեիհե, շտապ՝ շուտով կայարան հասնելու,  
վոր ութ վերստի վրա յե Կաղնուտից:

✕ Կաղնուտը... այդտեղ ամեն ինչ նույնն է, ինչ  
վոր մեր բոլոր գյուղերում—մի փոքրիկ, տխուր յե-  
կեղեցի՝ քարերը մամուռով ծածկված, վառե չորս



վոտի վրա կանգնած բարձր մի զանգատուն՝ զանգերի  
թեկերը սյուներից մեկին կապած, մի փոքրիկ տերտեր,  
վոր կարգալու ժամանակ տեղից թռկալով կապում է ա-  
կանջներին, մի խանութպան, վորի կապույտ ներկած  
դններով խանութում նավթի հետ միասին ծախվում է  
«փունջուղով» կանֆետ, և մի տանուտեր, վոր կռա-  
վարում էր մոտակա յերկու, կաղնուտից ավելի փոքր ու  
աննշան, գլուզն էլ, և, քահանայի վորդի լինելով, սի-  
րում էր խոսել զբարառ — «Զի քոյե, համենայն դեպս»...  
Յեվ ինչպես բոլոր գլուղերում, կաղնուտում էլ ապ-  
րում էյին մարդիկ այնպես, ինչպես հարյուր, հազար  
տարի առաջ ժամ էյին գնում, մատաղ անում սրբե-  
րին, ցանում էյին, հնձում. գարուն, ամառ, աշուն  
աշխատանք, աշխատանք, անձրև կարկուտ ու յերաշտ. 2  
ձմեռը զրույց ոգաներում, հարսանիք ու բուռ. . Սպ-  
րում էյին ամեն մեկն իր հոգսով, հանգիստ, հավա-  
տալով, վոր իր «ճակատին եղ է գրած»... Գլուզն  
ընդհանուր անհանգստություն էր ընկնում միայն աշ-  
նանը, յերբ տղերանցը տանում էյին «սալդաթ»: Տա-  
նում էյին հեռու, հեռու տեղեր՝ **Վարճաղ, Ագես, Կո-  
վիլ...** «Ընկածներին» կաղնուտցիները հյուրասիրում  
էյին հերթով, տալիս էյին նրանց գուլպա, շապիկ,  
թաթման ու գրեթե գեղովի ճանապարհ գցում մինչև  
կայարան: Յեվ յերբ «պոեղը» տանում էր տղերանց,  
նրանք յերկար նայում էյին պոեզի յետևից, նրա ծը-  
խի ամպակուտակ քուլաներին, նրա հեռացող, սարերի  
մեջ կորչող ճամփին և հառաչում խմբով. «Անտեր մը-  
նաս, անտեր»...: Ու բոլորին թվում էր, վոր յեթե չը-  
գար այդ **պոեզը**, իրենց վորդիներին չէյին տանի  
այդքան հեռու-հեռու տեղեր **Կովիլ, Վարճաղ, Ագես,**

եւ ինչ իմանաս ուր, վոր ծայրն աշխարհի... Բայց  
գլուղի հանգստությունը վրդովվեց ավելի այն ժա-  
մանակ, յերբ տանուտեր Արսենը հայտնեց թե՛ «կոխ  
և բացվել» և թուղթ է յեկել **գապաս** տղերանց հա-  
վաքելու:

Կաղնուտցիները այդ ուրը լավ են հիշում:

Տղամարդիկ հունձ էյին գնացել. կանայք լսելով  
այդ՝ իրար զլիսով անցան: Վաղում էյին նրանք տնե-  
տուն և ծնկներին խփելով՝ հաղորդում իրար. «Իմա-  
ցո՛ք, աղչի. կոխ է, ասում են. տղերանցը տանելու  
յեն»... «Վո՛ւյ, քոռանամ յես, վո՛ւյ խավարեք դուք.  
ո՛վ ասավ, աղչի»... «Կանցիլարը թուղթ է եկել». .  
«Վույ, խավարեք դուք»... Ու լուրն իսկույն տարած-  
վեց ամեն կողմ, շուտով հասավ և հանդը, ուր տղերքը  
խոտ էյին հնձում... Ու յերեկոյան տղերքը հնձից յե-  
կան թե չե, տանուտերը բոլորին կանչեց **կաճցիլար...**  
Դրանց մեջ էր, ամենից առաջ, Մաճկալանց Դավիթը,  
հետո Ծիրանանց Արշն, ժամհարի տղա Զաքարը, Ան-  
գարդ Սեթոն, և, վոր մեկի անունը տաս, բոլորն էլ  
ջահել տղաներ, բայց զրանց մեջ Դավիթն էր մենակ,  
վոր վեց ամիս չկար եկել էր «ծառայութենից» և  
յերեք ամիս էր ինչ պսակվել եր... Մի խոսքով, տա-  
նուտերը սրանց բոլորին կանչեց և հայտնեց, վոր  
«թուղթ է յեկել **գապասը** հավաքելու», թող պատրաստ  
կենան վաղը քաղաք գնալու, այսինքն այն գլուղա-  
քաղաքը, ուր պրիստաֆն էր նստում, իսկ այդ տեղից,  
ինչպես կարգն է, պիտի գնային գավառային քաղաք...  
**կաճցիլարը** լուսավորված էր մի հատիկ լամփով, այն  
էլ զրազերը զրել էր սուսջին, ասպակուն հազցրել էր  
մի սպիտակ թուղթ և սենյակի մեծ մասը թողել մթան



մեջ: Տղերքը կիսախավարի մեջ, տախտակե յերկար  
հաստարանների վրա տեղավորված՝ լուռ լսեցին տա-  
նուտներին, լսեցին և, յերբ նա վերջացրեց, սկսեցին  
միանգամից դուռնալ:

— Կռվի, ես նեղ մաջալին եղ եր պակաս, — խո-  
սեց առաջինը Ծիրանանց Արշուն:

Բա մեր արտերը, արտերը վճնց պիտի անենք. —  
բղավեց ժամհարի տղա Զաքարն իր հաստ, բամբ ձայնով:

Ու ամեն կողմից սկսեցին՝ «արտեր, արտեր»...  
Բոլորը խոսում էին արտերի մասին, վորովհետև ար-  
տերը հասնելու վրա էին: Իսկ Անդաբդ Սեթուն, ինչ-  
պէս ամեն բանում, այստեղ էլ անդաբդ ձևացավ:

— Ե՛, տնաշենի տղերք — արտեր, արտեր... Ենտեղ  
կհնձենք էլի. մարդ թե արտ մին չի...

Ուրիշ ժամանակ, գուցե, տղերքը ծիծաղելին այս  
խոսքերից, բայց այսօր վոչ վոք ուշադրութիւն չդար-  
ձրեց, մի յերկուսը նույնիսկ տհաճությամբ նայեցին  
նրան. «Սարսաղ, սավալակ»...

— Իսկ ի՞նչ կռիվ և, խալիա, հարցրեց Ծիրա-  
նանց Արշուն տանուտներին:

— Վճրտեղ, ո՛ւմ հետ, — հարցրին մյուսներն իրար  
յետևից:

— Եղ արդեն գիքոն. կերթաք ինքներդ կը տե-  
նաք: Յեա ինչ գիտեմ. վճրտեղ և, ուսերը վեր քաշեց  
տանուտները և գործն արդեն վերջացած համարելով՝  
թեքվեց ծեր, ճաղատ գլխով գրագրի՝ Արշակ տղի կող-  
մը և սկսեց ինչ վոր բաներ հարցնել: Լամիւր լուսա-  
վորեց նրա յերկար սուր բեխերը և չերփղի չուխի  
արծաթե վազմաճեւը, վոր մինչև այդ լավ չէին յի-  
րուում: Գրագիրն ակնոցի վերևից, հոնքերի տակով

նրան նայելով՝ շարունակ գլխով եր տնում. «Հն, հն,  
պատրաստ ե՛»... Իսկ տղերքը բանը գնա վերջացած չե-  
լին համարում, և իրենց համար գոնե ուղում էլին պար-  
զել ինչ կռիվ և, ինչ կարող և լինել, ինչ պիտի անեն  
տնեցիներն — իրենց գնալուց հետո... Ու վտաի վրա  
խոսում էին, անդիւում, և այդ աղմուկի մեջ ամենից  
բարձր լսվում եր ելի ժամհարի տղա Զաքարի ձայնը,  
վոր կրկնում եր շուտ-շուտ. «Ես նեղ մաջալին եղ եր  
պակաս»...:

Այս բոլոր ժամանակ Մաճկալանց Դավիթը լուռ  
եր: Նրան թվում եր, վոր ամենը, ինչ կատարվում և  
շուրջը — յերազ և, հանկարծահաս, ծանր մի յերազ:  
Կռվի. ինչ կռիվ. վճրտեղ, ի՞նչի համար: Հինգ տարի  
«ծառայութենից» հետո մի քանի որ չկա յիկել և — նո-  
րից հրացան, նորից կազարմա, այն էլ, ով գիտի,  
վճրտեղ... Ու կռիվ բառը կարծես հարվածում եր նը-  
րա գանգը — կռիվ, կռիվ... Տղերքը խոսում էլին, աղ-  
մըկում, բայց նա այդ աղմուկների մեջ տեսնում եր  
միայն հրացան, կազարմա, ցեխոտ ճանապարհներ,  
ուր քաշ և գալիս իրենց հետևակ գունդը՝ հոգնած,  
զաղրած, փթաչափ բեռան տակ... Ծեր ծնողները հա-  
զիվ ուրախացել էին, հազիվ մի կարգին ցանքա եր  
արել — հիմի այդ բոլորը, զրանց հետ ևլ ջահել կնոջ  
թող ու գնա... Դավիթն իր մտածումներից սթափվեց  
միայն այն ժամանակ, յերբ աղմուկը լուց. տղերքը  
շուրս էին գնացել: Նա էլ վեր կացավ և գլխարկը,  
իր զինվորական հին, կանաչ կանթով գլխարկը, վոր  
վեց ամիս առաջ բերել եր հետը, դրեց գլխին ու զուրս  
գնաց:

Դուրսը՝ գեղամիջին, տղերքը դեռ խոսում էլին



տան մասին, արտերի մասին, հնձած խոտերի մասին: «Բա մեր սարի խոտը», մտածեց Դավիթը. «ով պիտի բերի, յիթե ինքը գնա: Հայրը, նա չի կարող...: Մտածեց Դավիթը, մտածեց և մտքում վճռեց — «Գնամ մի խալիին խնդրեմ, կարելի յե մի յերկու որով թողնի»: Ու յետ դարձավ **կանցիլար**: Տանուտերն ու գրագիրը մենակ էյին: Դավիթն զգուշությամբ, վոր չխանգարի, անձայն քայլերով առաջ գնաց, զլիարկը վերցրեց և կանգնեց տանուտերի առաջ: **Խալիե** ինչ վոր թուղթ եր ստորագրում՝ տառերը հատ-հատ գրելով, և ամեն մի գիծը քաշելիս՝ նրա սրածայր բեխերը շարժվում էյին շրթունքների հետ: Յերբ, վերջապես, վերջին տառի պոչը քաշեց ցած, գլուխը բարձրացրեց.

— Հը, ինչ կա, Դավիթ աղա...

— Դուք վողջ ըլիք, խալիա. մի բան յեմ ուզում խնդրել, — խոսեց Դավիթը ժպտալով և միաժամանակ նայելով գրագրին, վոր գլուխն առանց բարձրացնելու գրում եր շարունակ ճկույթը մյուս մատներից բաժանած. — Ուզում եյի խնդրել, խալիա, վոր մի որով թողաս ինձ...

— Ձի քոս, — ընդհատեց նրան տանուտերը, — եղպես բան չկա. առավոտը պատրաստ կըլիս. գեղի տղերքը ծեղին հստեղ կըլեն:

— Խնդրում եմ, խալիա: Սարի գլխին խոտ ունեմ ախր...

— Յես ել ունեմ:

— Դե, քու բանն ուրիշ, խալիա. դու յերկու որից յետը ելի կգաս, կը բերես կամ բերել կտաս...

— Քուսն ել թող հերդ բերի. հերդ ինչ ե:

Դավիթը խնդաց տխուր:

— Ե՛հ, խալիա, նա սկի կարում չի կառափած կալումը ման գա, ուր մնաց սարից խոտ բերի:

— Թող ախպերդ բերի:

— Նա ել, դե, իրա համար. իրա բանը գոռով ե անում... խնդրում եմ, խալիա. թեղ կը վերջացնեմ — ձեղ կը հասնեմ...

— Քեղ ասի վոր՝ դեք ե, — վեր կացավ տանուտերը, չերթեղի չուխայի փեշերն ու դռնին ուղղվով. — յես բանդ նստելու իշտան չունեմ համենայն դեպս...

Դավիթը գուշնը քցեց, փորին բռնած գլխարկը դողդողաց նրա ձեռին.

— Ուրեմն, վախճում ես՝ փախչեմ, — խոսեց նա փոխված ձայնով:

— Յես ինչ գիտեմ — փախար-փախար, — ասավ տանուտերն ու արագ-արագ դուրս յեկավ:

Մի յերկու րոպե Դավիթը մնաց մտածվածքների մեջ կանգնած, նայեց գրագրի՝ Աբշակ աղի ճաղտո գլխին, վոր փայլում եր լամփի լույսի տակ, նրա ճրկույթին, վոր դողդողում եր մյուս մատներից բաժանված, և «լավ» ասավ ամբողջ կրծքով ու դուրս յեկավ տանուտերի յետևից:

Հետեյալ որը, վաղ առավոտյան, գյուղացիների մի մեծ խումբ կաղնուտից ճամփա ընկավ դեպի կայարան: Մարդ, կին, ջահել ու ծեր իրար խառնված գնում էյին զաշտի ճանապարհով, վոր վողոր-մողոր ձգվում եր արտերի միջով և աշպես գնում դեպի կայարան...: Պարզ որ եր. արտուտները խաղում էյին ողի մեջ. քամին, մի բարակ, զով քամի անցնում եր



ցորենները վրայով և արտերը վետ-վետ ու ալիքավոր հորձանքով գնում ելին դեպի բլուրները... Արտերին նայելով, գյուղացիները գնում ելին մի հսկայական թավոր կազմած: Ամենից առաջ իր ճերմակ ձիուն նստած՝ գնում էր տանուտեր Արսենը՝ չերքեզի չուխին հագին, ինչպես միշտ, տանուտերական նշանը դեղին շղթայով վիզը գցած, ինչպես անում էր առհասարակ պաշտոնական գործերով տեղ գնալու ժամանակ (մի ուրիշ նշան էլ փոքրիկ ողով կարած էր կրծքին): Տանուտերի յերկու կողմից, մի քանի քայլ հարգալից հեռավորության վրա, գնում ելին յերկու գզերն իրենց նիհար, վոստոստուն ձիերով: Իսկ դրանց, յետևից տղերք, կանայք, յերեխաներ: Դրանք Կաղնուտի և մյուս յերկու գյուղի **գապասներն** էին (պահեստի զինվորները), վաթ գնում էին կայաբան: Իսկ նրանց հետ ազգականն ու բարեկամ—մայր, յեղբայր, հայր, էին կամ քույր—մի-մի կապոց ձեռներին՝ ուղեկցում էին տղերանց:

Նմբի մեջ էր և Մաճկալանց Դավիթը: Հաղթ կուրծքը դուրս գցած, գլուխը բաց, հին շինելն ուսին, գնում էր նա և փնթփնթում տանուտեր Արսենի վրա: Նրա հետ գնում էին պառավ մայրը՝ Մարան նանը—մի քանի ձու և յերկու խաշած հավ կռնատակին, և էինը՝ Վարդիշաղը նույնպես մի փոքրիկ կապոց ձեռքին: (Հայրը՝ ծեր Վոսկանը մնացել էր տնպահ): Վարդիշաղը, վորպես նորահարս, գնում էր աչքերը գետին գցած: Պսակից հետո առաջին անգամն էր մարդու հետ դուրս գալիս հասարակության մեջ... այն էլ այդքան բազմության մեջ: Բոլորը նայում էին նրան, նրա շալ շորերին, նրա կապիսոնե դեղին գո-

տուն, շրջագլխտի փոթփոթ ծայրերին, և նա բազմաթիվ այդ նայվածքներից ամաչելով՝ աշխատում էր մարդու հետ չքայլել, այլ շարունակ կեսոր կողքից: Վարդիշաղն ամաչում էր, բայց նրան մխիթարում էր այն հանգամանքը, վոր ուրիշ ջահել հարսեր էլ կային իրենց հետ, թեյիվ իրա պես յերեք ամսվա պսակված չեյին, բայց էլ ջահել էին: Մեկը, որինակ, Ծիրանանց Արշոյի քույրը, վորը յեկել էր մարդուն ու յեղրորը ձամփու գնելու, մյուսը՝ Իրիցանց հարսը՝ ամուսնուն և տեգորը:

Արտերին նայելով՝ տղերքը բոլոր ժամանակ խոսում էին, կատակում:

— Յեթե ավինդն ըսենց գնա, ցորենները մի շաբաթից կը հասնեն,—ասում էր ժամհարի տղա Զաքարն իր մանր ու խոր աչքերն արտերից չհեռացնելով:

— Վճնց չե, դու էլ կուտես,—ծիծաղեց Անդարդ Սեթոն, վոր խմբից-խումբ անցնելով, հանաքներ էր անում տղերանց, կանանց հետ.—տեսնաք դու կուտես, թե ուրիշները քու հոգու համար:

— Դե, բերանդ խերով բաց արա, նկատեց նրան Մարան նանը՝ Դավթի մայրը.—Շաշանալ մի, հարսանիք չես գնում:

— Հարսանիք,—ծիծաղեց նորից Սեթոն.—ինչ պակաս է: Մի քանի տմիս կմնամ, մեկ էլ տեսար՝ տիր-նա-նի-նա, տիր-նա-նի-նա...—նվագեց Սեթոն բերանով և մատները շարժեց բերնի առաջ,—ի՜նչ է—Սեթոն Ռուսաստանից բերում է մի մաթուշկա... մազերը շեկ, աչքերը չալ...

Չենդ կտրի,—սաստեց նրան նանը.—քու մերը մաթուշկա պահող չի:



— Ե՛, Մարան նանի.— ձեռները շարժեց Սեթոն իբրև թե պառավի միամտությունը ցույց տալով.— Մնի տեղ յերկուսը պիտի բերեմ. յերկճւսը, յերկճւսը — խողացրեց նա ձեռները գլխի վերև և սկսեց պարել.— յերկճւսը, յերկճւսը...

— Զվալիդ բերանը փակի, մասխարա.— վրդովվեց նանը.— Մեր հայ հավատին եղ եր պակաս: Մաթուշկա—են ել յերկուսը...

Ու յերեսը շրջելով՝ առաջ քայլեց:

Ճաշի մոտ հասան կայարան: Մինչև գնացքի դալը նստեցին ստվեր տեղերում—պատերի տակ, ակացիների և բարդիների շվաքում՝ հանգստանալու և «մի քիչ նհար» անելու: Սակայն չանցավ մի քանի րոպե, դանգը տվին. գնացքը դուրս յեկած՝ գալիս եր: Բոլորը իրարով անցան, կապոցները վերցրին ու խմբավեցին պլատֆորմի վրա: Պառավ Մարանը մի կողմից հարսին հսկելով, վոր «գյաղա-գյուղեք» չգիպչեն նրան, մյուս կողմից վորդու փեշը բռնած՝ ասում եր. «Դավիթան, նամակդ անպակաս կանես, ջանեկ հարս և, սիրաւ կտորի վոչ»... Իսկ Դավիթը շարունակ ժպտում եր «Հա, նանի, հա. դու գիլ կաց», ասում եր նա մորը և, կնոջը ցույց տալով՝ ավելացնում. «ես շաշին լավ կը պահես»...

— Բեզ համար. ինչ բերեմ, աղչի,— դարձավ նա կնոջը կամաց ձայնով.— ինչ կուգես, հը...

Վարդիշաղը, ձեռները կրծքին, գլուխը թեթեւ շարժեց, և գլխի այդ շարժումով կարծես հասկացնել եր ուզում, թե դու վողջ վերադարձիր, ինչ վողչինչ ել հորեկավոր չի:

Գնացքը սուրեց հանկարծ, հեվալով յեկավ և

շրխկոցով կանգ առավ: Վագոններից դուրս թափվեցին «վերի գեղերից» յեկող զապասները, վազեցին ջրի աակառի մոտ և իրար հրելով, իրար վրա ջուր ցանկելով՝ սկսեցին ջուր խմել: Իսկ վագոնների լուսամուտներից գլուխները դուրս հանած՝ զրանց, կայարանին և բոլորին նայում էին դեղին կոճակներով, ակնոցով և կրախմբով մարդիկ:

— Դե, տղերք, տեղավորվեցեք, լավեց տանուտեր Արսենի ձայնը, վոր մինչ գնացքի դալը զալումը նստած պապիրոս եր քաշում:— Դե, դե...— Ու աչքը վագոնների մեծավոր մարդկանց, նա վզի շղթան ու կրծքի վազմաճեղք ուղղելով՝ անցնում եր տղերանց առաջից և կարգադրություններ անում:

Դավիթը նրան նայելով՝ սկսեց նորից փնթփնթալ:

— Զեռ քաշի, Դավիթ ջան, բան չունես, հանգըստացնում եր նանը նրան,— ձեռ քաշի...

Տղաները կամաց-կամաց տեղավորվեցին: Դավիթը նույնպես մտավ վագոն: Նանն ուղեկցեց նրան մինչև վագոնի շեմքը (նրանք գնում էին ապրանքատար վագոնով): «Զվերը կտորես վոչ, Դավիթ ջան, ադն աղուխի տոռումը կապած ա», խորհուրդներ, ցուցումներ եր տալիս նա իրար յետևից և ձեռը ծոցը դրած նայում, թե հարմար տեղ և նստիլու արդյոք Դավիթը և կապոցը չի՞ գցի արդյոք աշապիտի տեղ, վոր ձվերը կտորվին: Յեվ նա վագոնից հեռացավ այն ժամանակ միայն, յերբ գնացքը սուրեց: Նա վախով յետ կանգնեց ու շարժվող գնացքի յետևից ձեռները բարձրացրեց վեր, դեպի յերկինք:

— Դու հարկաւոր ես, Դավիթ, պարավոր սուրը Մարգիա...



533 13244-57



Տղերանց գնալուց հետո Կաղնուտն իրեն զգում էր հանկարծ թալանված: Շատ քիչ տուն կար, վոր կռիվ գնացած զինվոր չունենար կամ ազգական ու բարեկամ չլինեիր գնացածին: Իսկ Կաղնուտում գրեթե բոլորն ազգական ու բարեկամ էին իրար հայդ պատճառով, տղերանց գնալուց հետո, բոլորը գրեթե սպասում էին լուր, նամակ: Ով վճռոտեղ գնաց, ուր մնաց, ի՞նչ յեղավ... Սպասում էին անհամբեր, ջգագրգիռ ու տագնապով: Այդ տագնապն ավելանում էր մանավանդ այն ժամանակ, յերբ մուլթն ընկնում էր կամ յերբ յերկիրն քր ծածկվում էր ամպերով, յերբ անձրև էր գալիս: Բոլորի մեջ, սակայն, և ամենից ավելի անհանգիստ էր Մարան նանը: Աշխատանքի միջոցին թե պարապ ժամանակ նա Դավթին չէր մոռանում. թե դաշտում, յերբ հասած արտերում զրնգում էր գերանդին, թե այն ժամանակ, յերբ կովերը բառաչելով գալիս էին հանգից, թե տանը, յերբ հարսը ման էր գալիս առաջին—նա վորդուն մտաբերելով շարունակ քրթմնջում էր ինչ-վոր: Իսկ յերբ յեկեղեցու դանգակները կանչում էին «ծլիինգ-ծլին, ծլիինգ-ծլին» —նա խաչակնքում էր յերեսը և աղոթքի կանգնում: «Տեր, դու ոգնես»... Իսկ ծեր Վոսկանը, Դավթի գնալուց հետո, հարևան Պետրոսի ոգնությամբ, մի կերպ բերեց սարի խոտը և դիզեց, հետո, յերբ արտերի հունձն սկսվեց, նա՛ իր հին գերանդին ու սրոցը վերցրած՝ գնաց արտերը հնձելու: Մարան նանը, յերբեմն և Վարդիշաղը գնում էին նրան ոգնելու: Թե և պառավը չէր ուզում, վոր հարսը այդ տեսակ աշխատանք անի, բայց վորովհետև նա մենակ պիտի ձանձ

րանար տանը կամ լաց լինեիր—նանը նրան տանում էր իր հետ: Վորքան էլ չէր թողնում բանելու, բայց Վարդիշաղը, սովոր լինելով դաշտային աշխատանքի և պարապ նստելու ամոթից՝ ոգնում էր ծերերին: Փոյխում էր, միջակներում մնացած հասկերն էր պոկում կամ յեղանը ձեռքին բլուրներ էր շինում, և միշտ գլխաշորը ճակատին քաշած, վոր արևը դեմքը չվառի: Այնուհետև կալին՝ բոլորն աշխատում էին միասին: Յեվ բոլոր այդ աշխատանքների մեջ անհամբեր սպասում էին ելի նամակի:

Վերջապես այդ նամակը յեկավ: Գյուղի մարդիկ գեպքերը՝ մեծ թե փոքր, լավ են հիշում, իսկ թիվ և ամիս—ամենեվին. «Ես բանը պատահեց են տարին, յերբ մաշինը ձամփեն յեկավ» ասում են, կամ՝ «են տարին, յերբ տերտերակինը մեռավ»: Այդպես էլ Դավթի առաջին նամակն իր գնալուց վորքան ժամանակ հետո յեկավ, դժվար է ասել, բայց նա յեկավ Աստվածածնու տունին: Դավթը գրում էր, վոր ինքը լավ է և «կուզի վոր դուք էլ լավ լինեք և գործով աջողակ»: Շատ բարով էր անում նանին, ամուն՝ հորը և կնոջը՝ Վարդիշաղին: Ել—դուք վողջ լինեք: Կովի մասին վողինչ չէր գրում: Վերջում ասում էր միայն, վոր գնում են «Գերմանի կողմը»: Դե, այդքան էլ վոր գրել է, հերիք է, ինքը վողջ լինի. միայն թե նամակը անպակաս անի... Բայց յերկրորդ նամակն ըստացվեց շատ ուշ:—Անցավ նոր տարին, անցավ Բարիկենդանը, անցավ մեծ պատը—նոր գատկին միայն մի բաց նամակ յեկավ՝ յերեսին մի ծեր մարդու պատկեր: Դարձյալ շատ բարով էր անում բոլորին և զրնգում էր, վոր իրենց «պուկը կարպատումն է»: Տնե-



ցիւներն, իհարկեւ, շատ ուրախացան, վոր, վերջապէս, նամակ յեկավ, և այդ նամակը մի քանի անգամ կարգաւ տվին սրան-նրան: Բոլորը լավ էր, հասկանում էին, բայց թե ինչ բան էր այդ «կարգատը» — վոչինչ չհասկացան: Մինչև անգամ տերտերն էլ բան չհասկացավ: Ակնոցի թելերն ականջների յետևը կապած՝ նա նայեց նամակին, նայեց և գլուխը շարժեց: — Որհնովածը հնենց չի գրում, վոր մի բան հասկանա... Կարպեօ թե Կարապետ, քաղաք է, գյոճւղ — ինչ իմանա...:

— Բա ես պատկերն ինչ է, տերտեր ջան, ցույց տվեց նանը բացիկի յերեսի ծերունու նկարը:

— Դե, դա էլ պատկեր է ելի, ով է իմանում...

Այդ որվանից հետո էլ նամակ չեկավ: Պառավ նանը վորդու նամակները բոլոր ժամանակ պահում էր ծոցում, և յեթե մեկը հարց էր տալիս Դավթի մասին — հանում էր դրանք և ցույց տալիս. «Ես յերկու նամակն է դու արել...»: Ու նամակները ծոցին, ամեն կիրակնաօրու, գնում էր յեկեղեցի, չեչից շինած կարմիր մոմեր էր վառում և աղոթում Դավթի համար — «Տեր, դու խնայես ամեն դարիքի ու ամեն կորածի»... Հետո, յեկեղեցուց դարձին՝ մտնում էր Ծիրանանց տուն, ժամհարի տուն և առհասարակ այն բոլոր տները — ում տղեն զինվոր էր. — ով է իմանում, գուցե, մի բան էլ Դավթի մասին գրած լինեն... Բայց վոչինչ չէր լինում: Ժամհարի տղա Ջաքարը, ասում էին Վարչավ է, Իրիցանց Սեթոն՝ Վան թե Երզրում, Ծիրանանց Արշոն առաջ Գերման էր (անունն էլ գրեվար է ասվում, ով գիտի ինչ կորած մոլորած տեղ է), հիմի էլ տարել են, ասում է, Տրապիզոն... Դե՛հ — Տը-

րապիզոն... դու խնայես, ով ձիավոր սուրբ Գեվորգ...: Մեկ-մեկ էլ պառավ նանն այնպիսի յերազներ էր տեսնում. այդ ժամանակ խունկ ու մոմ վերցրած՝ գնում էր զբոսացի մոտ. և վարի դոդոն ամեն անգամ ասում էր միևնույնը. «Տեղը դժվար է, բայց ձառփա է ընկնում»... Մինչ նանն այսպես դեռ ու դեն էր ընկնում Դավթից մի լուր ստանալու հույսով, հայրը՝ ծեր Վոսկանը բանի վրա թե տանը նստած՝ յերբեմն, մեկ էլ տեսար խոսեց ինքն իրեն. «Են տղիցը նամակ չեկավ ելի»... Նրան պատասխանում էր հարսը կամ կինը, յեթե լսում էին, իսկ յեթե պատասխան չէր ստանում, նույնը կրկնում էր մի քանի անգամ. «Են տղիցը նամակ չեկավ ելի»... և ապա կամաց, շատ կամաց ավելացնում էր. «Ով գիտի ինչ պատահեց»... Ու այսպէս անցնում էին որեր, շաբաթներ ու ամիսներ. անպես անցնում էին որեր, շաբաթներ ու ամիսներ. անպատ տարի, տարի ու կես — նամակ չկար ու չկար: Վարդիշաղը դեռ ջահել հարս՝ տխրում, լաց էր լինում թաքուն տեղեր, մանավանդ տխրում ու լաց էր լինում, յերբ քաղաքից յեկողները պատմում էին կովի մասին: Պատմում էին հազար ու մի բաներ. պատմում էին, թե թուրքը ժաժ է յեկել և թե ինչպիսիք գնում է թուրքի վրա — նավով, գործով. պատմում էին՝ թե ֆրանկները մի այնպիսի թոփ են հնարել, վոր տաս լուծ գոմեշ չի քաշի, վորը յերբ քցում են — մի անգամից մի քաղաք է սրբում, հոդն ու փոշին ամպի նման չոքում է մի քանի որ, իսկ ձայնից հեռվում խլանում են զինվոր ու զորք... Ազատես, տեր. ինչեր չեյին պատմում... Կռիվը մեծ է, ասում էին, Կռիվը յերկաթ. ամեն ազգ ու ցեղ վեր են կացել իրար վրա...: Զե, շուտ չի վերջանա...: Պառավ նանն ինքն էլ տես-



նում եր, վոր կոխվը մեծ ե, շատ մեծ... Ամեն որ, ամեն որ, Աստու որ ու գիշեր պոեզը չի կտրվում պոեզի յետևից, և ամեն որ, ամեն որ վագոնները տանում էյին զինվոր, զինվոր, զինվոր—հրացանով, անհրացան... Տանում էյին բաց վագոններով, փակ վագոններով և մի տեսակ խաչ նկարած վագոններով. սրբանք ել, ասում էյին, վիրավորներ են... «Կուրանա՞նք մերը»... Գնում, գալիս էյին պոեզները, շվացնում գյուղի մոտ, գրգռվով անցնում կամուրջը և գնում, գնում իրար յետևից։ Տանում էյին ելի զինվոր, ձի, թուփ, ու ելին ասես։ Տանում էյին, գնում ու ճշում «Ուսմե՞ն»...

— Աստու կրակ, Աստու կրակ, ասում եր նախն ամեն անգամ գնացքի ձայնը լսելիս և յերբեմն չանջում նրա յետևից։— Տարար բեխիս չոլերը քցեցիր, յերբ պըտի, այ անտեր, մի խաբար բերես...

Շաբաթը մի անգամ, յերկու անգամ Կաղնուտի գղերները գնում էյին սաճցիճ թղթեր, նամակներ բերում, և շաբաթը մի անգամ Մարան նանը գնում եր Կաճցիլաբ գրագրի՝ Արշակ-աղի մոտ։ Դավթից վոչինչ չեր լինում։

— Մի են տակի թղթերը տես,—ասում եր նանը գրագրին ամեն անգամ, յերբ նա բացասական պատասխան եր տալիս. — կարելի չե լավ չես տեսել...:

— Կա վոչ, այ պառավ, կա վոչ. վոր ըլի հո գրվիս չեմ տալու։

— Բա ես վոչնց պըտի ըլի, Արշակ-աղա. ինչի՞ նամակ չի դու անում։

Գրագիրը շարունակ գրում եր և առանց գլուխը բարձրացնելու պատասխանում անտարբեր.

— Ո՞վ ե իմանում. կարելի չե փող չունի...

— Փող, քոռանամ յես,—մատը ցամաք շրթունքին եր գնում նանը.—թող գրի թե փող չունեմ... Հավ, ձու կտանեմ ստանցին՝ կծախեմ, փող կղրկեմ, միայն թե գրի—տեղն իմանամ՝ վոչտեղ ե... Թե արեւ-վըդ ապրի, Արշակ-աղա, կարա՞լ չես մի տեղն իմանաս,—շարունակում ե նանը ձեռքը ծոցը տանելով.—ես հրես իրա նամակները, աղբեսն ել միջին ա.—Ու նանը նամակները գնում ե գրագրի սեղանին.—Հը Արշակ-աղա, չի ըլի մի նամակ գրես իրա մեծավորների վրա։ Գրես թե՛ ես Գավիթ Մաճկալովը վոչտեղ ա. կարելի չե մի խաբար անեն...

— Ե՛հ, դժվար ե, պառավ, դժվար, ասում եր գրագիրն ու շարունակում իր գրությունը։

Դժժար... Նանը չեր հասկանում ի՞նչն ե դժար—մեծավորներին գրելը, թե նրանցից պատասխան ըստանալը։

Մի որ ել, յերբ նախն այսպես խոսում եր գրագրի հետ, ներս մտավ տանուտեր Արսենն իր արծաթե վագմաճեղով չերքեզի չուխեն հագին։

— Ելի՞... դե, այ պառավ, ասավ, վոր սաղ ըլի—դու կանի ելի...

Սաղ... Ուրեմն կարող ե պատահել Դավիթը մեռած լինի. սպանված... Նանի լեզուն չի գորում, լեզուդ չորանա, տաճուտեր Արսեն... Թե չեր հավատում պառավը, բայց նրա սիրտը մի մութ կասկած ընկավ. ի՞նչ կանի, յիթի Դավիթը մեռած լինի իսկապես... Կարող ե պատահել, վոր այդպես բան լինի... Ե՛, չե մի—ինչեր ե մտածում,—խոսք եր ելի, Արսենի բերանն եկավ՝ ասավ, «Աստված վոր աղոսվի ձենը լսի—վարթիվորին ձին կգա... Թող ասի, հողեմ գլուխը»...



Տխուր վերադարձով պառավը տուն և նստեց շեմքին:

Աշուն էր, քամի. տան առաջի բարդիները խըշշում էյին ու տերեւթափ լինում: Նրանց հետ խըշշում էյին և բոլոր բարդիները. խըշշում էյին միատեսակ խուլ, համատարած խըշշոցով, և ընդհանուր այդ խըշշոցի ժխորից բացի գյուղում ուրիշ ձայն չէր լսվում: Խըշշում, խըշշում էյին բարդիները և նրանց զեղնած տերեւները խմբով թռչում էյին քամու հետ կամ ողապրտույտ տատանումներով թափվում գետին: Յեւ գետին ընկնելով, ահից հալածված ասես, խմբվում էյին իրար մոտ, հավաքվում անկյուններում, թագնվում խոռոչների մեջ կամ մտնում ծածկույթների տակ...

Մարան նանը շեմքում նստած դնդնում էր ու հետն էլ մտածում — չլինի իսկապես մի բան և պատահել եդ տղին, ինչո՞ւ հապա նամակ չի գրում... Յեթե մի բան պատահած լինի և հարսի ծնողներն իմանան — ի՞նչ կանեն: Վարդիշաղին կտանեն յերևի... Նանը լըսել էր, վոր նրանք այդպիսի մտադրություն ունեն: Այստեղ-այնտեղ խոսում էյին այդ մասին և այդ խոսքերը նանի ականջն էյին հասնում: Թեև հարսի հերանք հեռու էյին, կադնուտից յերկու գեղ այն կողմ, բայց նրանց մտադրության մասին նանը լսել էր: Ուղում էյին Վարդիշաղին տանել... Ե՛հ, յերկու տարուց ավելի յե, քիչ ժամանակ չի, մարդը չկա, մեռածում էր նանը հարսի մասին: Իսկ շունը նրա վտանների մոտ պանկած հանդարտ մոռում էր: Դա գայլանման, մազերը սևվին տվող, ականջների ծայրերը կլտրած, պոչատ շուն էր: Յերբ պառավը դնդնում էր լըսելի ձայնով, նա կտրած պոչն ու ականջները շար-

ժում էր և նայվածքը հառում պառավի դեմքին:

— Յերանի քեդ, այ Չամբար, — խոսեց նանը հանկարծ շանը դիմելով. — Յարար քու միտն էլ գալիս և Դավիթը, այ, Չամբար:

Շունը կտրած պոչն ու ականջներն ավելի շարժելով՝ տխուր նայեց տիրուհուն:

— Նա քեդ շատ էր սիրում, այ Չամբար. իհարկե, վճնց կմոռանա...

Շունը հանկարծ մոռաց բարձր, և աչքերը բակի դռանը, կանգնեց վտանների վրա. հսկող հայացքով նայեց և, տեսնելով յեկողը ծանոթ և, նորից նստեց: Մանրը քայլերով, ձեռնափայտը, ավելի շուտ մի ճիպոտ կոնատկին՝ գալիս էր մի շեկ ու փոքրիկ, տարիքով մարդ: Նանն իսկույն ճանաչեց — Վարդիշաղի հայրն էր — Դեղին Ծիտը, ինչպես անվանում էյին նրան իրենց գյուղացիները՝ գեղին մազերի և բարակ ձայնի պատճառով:

— Բարի ուր քեդ, խնամի Մարան, ասավ նա գեռ հեռվից մի այնպիսի բարակ ձայնով, վոր կարծես դուրս էր գալիս մի նեղ, ասեղի ծակի չափ նեղ, կուկորդից:

— Բարին արևիդ, խնամի Խունկի, — պատասխանեց պառավը, տեղից յեղնելով:

Բարեկեղծով՝ նրանք նստեցին իրար կողքի, հենց շեմքի մոտ ընկած գերանին:

— Ե՛հ, վճնց էք, խնամի Մարան:

— Փառք իրան, խնամի Խունկի, տպրում ենք ելի:

Խնամի Խունկին չիրուխը հանեց գոտիկից և, միջի մոխրերը թափ տալու համար մի յերկու անգամ խըփեց գերանին, ապա սկսեց հանդարտ լցնել թուփունով:



— Եհ, խնամի Մարան, ապրել ել կա, ապրել ել, — շարունակեց նա իր ճովողուն ձայնով և միաժամանակ չիբուխը լցնելով. — ապրել կա խոսքով, ապրել կա վստիկով...։ Նա նորից լսեց, չիբուխի յետեից ընկած, և յերբ պատրաստեց այն, նախ քան բերանը կոխելը, ձեռքն զգուշությամբ գիպցրեց պառավի թեւին. — Բա ես վիճեց պըտի ըլի, խնամի Մարան, — աւա՛վ նա հանդարտ հոգոցով, ու խոսքը չաւարտած՝ չիբուխը վառեց։

— Ի՞նչը, խնամի Խունկի։

— Ես մեր Դավթի բանը, խնամի Մարան։

Պառավի ձեռներն ու ծնկները դողացին նստած տեղը։ Նա ցամաք շուրթերը սեղմեց և յերկչոտ նայվածք նետեց խնամու աչքերին, նրա գեղին հոնքերի տակ, գեղին արտեանունքների մեջ հանգիստ նստած աչքերին։

— Բան գիտե՞ս, խնամի։

Խնամի Խունկին հանդարտ չիբուխը հանեց ատամների արանքից։

— Չե՛, խնամի Մարան։ Ասում եմ՝ մի խարար չեկա՞մ ելի։

— Ո՛ւր ե թե։ Վճրտեղից, — հառաչեց պառավը։

— Հը՛ւմ, — մղդաց խորհրդավոր ու յերկար խընամի Խունկին և, առժամ լռելուց հետո, հարցրեց. — Ես քանի տարի ելավ...

Նանը նորից հառաչեց։

— Յերկու տարուց ավելի յե, խնամի Խունկի. Վարթիվորին իրեքը կթամամի։

Խնամի Խունկին նորից մղդաց։

— Հը՛ւմ... Յերկու տարի, — խոսեց նա բերանի

անկյունով, չիբուխն առանց հանելու և, քիչ հետո, չիբուխը ձեռն առնելով՝ զլուխն իջեցրեց ու աչքերը հանեց գետին. — Բա ես վիճեց պըտի ըլի, — շարունակեց նա դարձյալ աչքերը գետնին. — եղ աղջկա, Վարդիշաղի բանը...

Նանը հասկացավ Դեղին Ծառի միտքը։ Նա լսել եր, վոր Վարդիշաղին ուզում են տանել, լսել եր ի այն, վոր մի ինչ-վոր ունեւոր լորուտեցի առաջարկ եր արել հորը, Վարդիշաղի մասին։

— Ինչի՞ համար ես հարցնում վոր, խնամի, — խոսեց նանը, շուրթերը հուպ տալով, վոր ցույց եր տալիս՝ թե արդեն գլխի յե ընկել բանն ինչու՞նի ե և պատրաստվում ե հարկավոր պատասխանը տալու։

— Ինչի՞ հմար... Դե, դու ել կնիկարմատ ես, խընամի Մարան, կհասկանաս ելի... Զահել աղջիկ ե, սիրտը կտրած...

Նանը շուրթերն ավելի սեղմեց և նստած տեղը լուռ տրորվեց։

— Գիտեն մարդիկ, գիտե Աստված, խնամի Խունկի, — խոսեց նա հառաչանքով, ծանր և գրեթե հանդիսավոր. — գիտեն ամենքը, վոր աղջկանդ աչքիս լսի պես եմ պահում։ Ասած չեմ մի որ՝ ես ծուխը քեզ, կամ՝ մեկնած վոտդ քեզ քաշի...

— Շնորհակալ եմ, խնամի Մարան, հաստատ մընա... Բայց ասում եմ, Զահել աղջիկ ե ելի, ո՞վ ե իմանում... Մերն ասում ե՛ թող մի քանի որ ել դա մեր տուն։ Ասում ե՛ րիխանց մեջ սիրտը կրացվի մի քիչ...

Մի քանի անգամ ել հերանք այգուկս ուղել եյին հարսին, մի յերկու անգամ նանը համաձայնել եր, մի յերկու անգամ չեր համաձայնել, պատճառ բերելով



իրենց մենակությունը, աշխատանքը. խոստացել էր, վոր ինքը կտանի Վարդիշաղին հերանց տուն (և տա-  
րել էր ու ինքն էլ հետը մի քանի որով մնացել): Բայց  
այդ բոլորն արել էր մեծ դժվարությամբ. առանց հար-  
սի դժվար էր, չէր կարողանում ապրել: Վոչ թե գոր-  
ծի—քանի համար—վոչ: Նանն առաջվա պես սկի չէր  
ուզում հարսին բանի գնել: Բանն այն էր վոր—քանի  
հարսը տանն էր, նրան թվում էր՝ վորդին ապահով է,  
բայց հենց վոր նա հեռանում էր աչքից—նա՛նը հու-  
սահատվում էր. ամեն բան դատարկ ու անպետք էր  
թվում, իսկ հարսը «սրտին սին էր տալիս», ինչպես  
ինքն էր ասում: Սակայն հոր խնդիրն այս յերրորդ  
անգամը լինելով, չկարողացավ մերժել: Չկարողացավ  
նրա համար, վոր աշունք էր, բան ու գործը պատճառ  
չէր կարող բերել, և նրա համար, վոր խնամին չնե-  
զանա իրանից և աղջկանը կռվով, զոռով տանի, ինչ-  
պես արել էր մեկը հարևան խաչի գեղում:

— Թող գա խնամի ջան, ասավ,—յես էլ ուզում  
եմ սիրտը բացվի, ջահել ե... Պառաջն անկեղծ էր խո-  
սում.—ջահել է, թող գնա մի քիչ ազատ ման գա, ի-  
րա պատճառով շարունակ կողքին նստելու չի, գուցե  
հենց այդպիսի մի ցանկություն էլ ունի Վարդիշաղը,  
վոր մի քանի որով գնա հերանց տուն.—թող գա, լը-  
նամի խոնկի, բայց թեկ յես բերեմ. մենակ կարժ  
չեմ. սովորել եմ... Հրեա մեր հայն էլ կգա՝ տենենք  
ինչ է ասում:

Պառավը խոսում էր մարդու մասին:

Քիչ հետո ծեր Վոսկանն ու հարսը՝ Վարդի-  
շաղը, յեկան բոստանից մի-մի դուռն ձեռներին: Ծե-  
րունին արխալուղով էր, Վարդիշաղն ամենորյա իր կա-

պույտ շորերով, մի սև գոգնոց կապած և կանաչ գըլ-  
խաշորով: Հորը տեսնելով՝ նա գլխաշորն ուղղեց, ա-  
մաչկոտ քայլերով մոտեցավ բարևեց, և մտավ ներս՝  
շորերը կարգի բերելու: Իսկ ծեր Վոսկանը նստեց գե-  
րանին: Խնամու գալու նպատակն իմանալով՝ տվեց իր  
համաձայնությունը:

— Թող գա բեխեն, ինչ կա վոր, թող գա,—խո-  
սեց նա անատամ բերանը չապացնելով, այնպես, վոր  
ճիւղմակած և դեղնած բեխերը քիչ էր մնում բերանը  
մտնելին.—թող գա...:

Յերեկոյան դեմ Դեղին Ծխոն աղջկա առաջն ըն-  
կած՝ տարավ իրենց գյուղը: Վարդիշաղն իր շորերից  
մի կապոց արավ, համբուրեց կեսուր, կեսարարի ձեռքը  
ու գնաց: Ծերերը ճանապարհ դրին նրան մինչև բա-  
կի դուռը:

— Թեկ կգաս հո, —պատվիրեց նա՛նը մի քանի  
անգամ:

Վարդիշաղը գլխով անելով հեռացավ:

Բայց նրա գնալուց հետո տունը նանին թվում  
էր դատարկ: Նա հաճախ նստում էր տան շեմքին և  
որերը համբուր, թե յերբ պետք է Վարդիշաղը գա:  
Յերեկոն էլ անհանգիստ, տխուր դիմում էր մարդուն.

— Վարդիշաղը յեկավ վոչ, ա՛յ մարդ...

Յեկ ծեր Վոսկանն ամեն անգամ, բերանը չըպ-  
պացնելով, պատասխանում էր.

— Կգա էլի. բա հո մնալ չի... Մի որ կգա...

Յերեկ շաբաթ հետո, սակայն, լուր յեկավ, վոր  
Վարդիշաղն էլ չի գալու. նրան տվել են լորու-  
տեցուն:

Տվել են լորուտեցուն... Ուրեմն Դավիթը մե-



ոած ե, Դավիթը չկամ... Դրա համար եր ասում տա-  
նուտեր Արսենը...

— Լեզուդ չորանա, տանուտեր Արսեն...

### III

Ծեր ամուսինները մնացին մենակ: Ամբողջ աշուն  
ու ձմեռ տնից գրեթե դուրս չեկան: Նանը մինչև ան-  
գամ յեկեղեցի չէր գնում. «Յեթե նրանում մի գորու-  
թին կար, բսենց չէր ըլի», ասում էր նա հաճախ:  
Չեյին գնում և մեծ վորդու տուն (բաժանքից հետո  
առհասարակ ստեղ եյին): Նրանց յերկար ճանապար-  
հը տնից գոմն էր, գոմից տուն. բոլոր ժամանակ ըզ-  
բաղվում եյին տավարի և հավերի հոգսով: Յերբեմն  
մինչև ուշ գիշեր ծերունի Վոսկանը ճրագը ձեռին մը-  
նում էր գոմում, սպասելով վոր տավարը դարմանն  
ուտեն. ով է իմանում յեղներից մեկը հանկարծ կա-  
րող է կապը կտրել և կովին հարու տալ, վոր հսոր-  
եզուց կարող է ձնի: Իսկ նանն այդ ժամանակ մի հին  
գուլպա ձեռին նստում էր տանը՝ ոչախի մոտ, և ըստ  
սովորության, դնդնում: Դուրսը քամին ու բուքը թը-  
չում եյին Կաղնուտի գլխով և անվերջ սուլում, շը-  
վշվում ու շառաչում բարդիների մեջ. թափում եյին  
ձյունը կտուրներից, ձյունով խփում եյին լուսամուտ-  
ների և վնգվնգում ծխնելույզներում: Ու ամբողջ գի-  
շեր այդ ցրտի ու բուքի մեջ գնացքները գնում ե-  
յին ելի, սուլում, ձչում եյին գյուղի մոտ և գրգռվով  
անցնում կամուրջը: «Անտեր մնաք, յարար ել ձւմ  
տունն եք քանդելու», ասում էր նանն ամեն անգամ  
գնացքի սուլոցը լսելիս: Ու հիշում էր այն օրը, յերբ  
Դավիթը վաղոն նստեց և ասավ. «մնաս բարով, նա-

նի»...: «Մեռնի քու մերը, իմ թառյան բալա. վորտեղ  
մնացիր յարար, վոր չոլի մեջ, վոր քարի տակ... գոնե  
մի կտոր շոր, մի նշան հասնելը»... Ու տրորվելով՝ դըն-  
դնում էր նանը, մինչև վոր ծեր Վոսկանը դալիս էր  
գոմից: Ու այսպես մինչև գարուն: Իսկ գարնանը, յերբ  
վար ու ցանքն սկսվեց, ծերունին արորը սարքեց և  
գնաց վար:

Յեվ մի քանի օր էր արդեն վար էր անում:

Գարնան արեֆն տնուշ տաքություն էր փուխ Կաղ-  
նուտում. տավարը բաղերում տաքանում եյին, հա-  
վերը քրքրում եյին անցած տարվա աղբակույտերը:  
Ամեն կողմից լսվում էր գոռան ձայն, յերեխաների  
աղմուկ. հանգից լսելի եյին գութանավորների և մե-  
նավոր չթվորների ձայնը, վոր խրախուսում եյին յեղ-  
ներին: Ողբ լիքն էր ձայների ժխորով:

Ճաշն անց էր: Պառավ Մարանը շեմքի մոտ աման-  
ներ էր սրբում ավազով: Հինգ-վեց հավ աքլորի հետ  
միասին վիզները յերկարած՝ վոսնե-վոս մոտենում  
եյին նրան, սպասելով, վոր տիրուհին, ինչպես միշտ,  
ամաններից մի բան կթափի, բայց նանը՝ անուշաղբ  
հավերի ցանկության՝ խորասուզված՝ իր գործն էր ա-  
նում: Չամբարը նրա կողքին նստած, գլուխը թաթե-  
րին, աչքերը յերբեմն-յերբեմն բանալով, նայում էր  
պառավին, նայում էր հավերին և նորից ննջում՝ ա-  
րևի ախորժելի տաքությունը վայելելով: Մեկ ել նա  
մոռաց հանկարծ և մի ակնթարթում ցատկեց տեղից  
ու հաչալով առաջ վազեց: Հավերը կչկչացին և վիզ-  
ները ձրգ-ձրգ տալով՝ խմբվեցին աքլորի շուրջը: Ո՞վ  
է... Նանը ձեռը դրեց ձակատին և իր քաղված աչքե-  
րով նայեց շան յետևից: Ինչ վոր մեկը դալիս էր դե-



պի իրենն—մի հաստ ձեռնափայտ ձեռին: Գալիս էր կամաց-կամաց ու ծանր-ծանր շուրջն էր նայում: Հագին զինվորի շինել ու զլիարկ էր, բայց ինքը զինվորի նման չէր յերևում—կաղում էր մի քիչ, զլիարկըն էլ աչքերին էր քաշել: «Տենաս ո՞վ է» — մտածեց նա՛նը ձեռը ճակատին: «Շլինի Դավոյի մասին մի բան գիտի»... Յեկողն աչքերը չորս՝ ելի նայում էր ամեն կողմ: Այս բանը և վախեցրեց և զարմացրեց պառավին: Բայց նրան զարմացրեց ավելի այն, վոր շունը յերկու բերան հաչելուց հետո—սկսեց հոտոտել յեկողի փեշերը և փաթաթվեց վտաններին: Տեր Աստված, ով պիտի լինի սա... Նանը, առանց տեղից շարժվելու, շարունակում էր նայել զարմացած, հետո ամանները հավաքեց իրար մոտ, վոր հավերը չդիպչեն նրանց, ու դարձյալ նայեց: Յեկողը յեկավ կաղալով, յեկավ ու հանկարծ—«Բարով, նա՛նի» ասավ: Պառավը գրեթե ծուլ յեղավ տեղից:

— Ախ, Դավո ջան...

Ու ծեր Չամբարից բացի վոչ-վոք չտեսավ, թի ինչպես մայր ու վորդի գրկեցին իրար ու լաց յեղան... Պառավը զարմացած էր. առաջին կանգնած էր մի ուրիշ Դավիթ. ձայնը նրանն էր, բայց ինքն սկի նման չէր. աչքերը խոր ընկած, վտակորները սրված, մի թըշի վրա յեղ ինչ-վոր սպի կար. գնդակի տեղ էր, ի՛նչ էր... Նանն ուզում էր հարց ու փորձ անել, բայց չըկարողացավ: Յեվ քիչ հետո, յիրը մտան ներս, յերկու փոքրիկ, քառակուսի լուսամուտներով սենյակը՝ նա հուզումից սկսեց անկապ, կցկտուր խոսել:

— Ո՞վ զորավոր սուրբ Սարգիս... Ախր յերազում տեսում եյի, Դավո ջան, տեսում եյի, վոր՝ չէ... Ու

խոսում, խոսում էր յերկար և կարծես, ուզում էր մի քանի տարվա անց ու դարձը պատմել մի քանի բուպիյում.—Գնում եյի նամակի, սրան եյի հարցնում, նրան եյի հարցնում. «Կա վոչ, վոր կա վոչ»... Իսկ գարի քցողն էլ ասում էր՝ նեղ տեղ է: Հերվա ֆորթն էլ մատաղ էյի խոստացել—սատկեց... Խոսում էր պառավը և տան անկարգ դրած իրերը կարգի բերում, խոսում էր և նայում Դավթին: Տեսնելով, վոր Դավիթը նայում է տան իրերին, ծալքին, խոսքի ընթացքը փոխեց.—Հա, ճոթ ու կտորն էլ ենք ա՛ն թանգացել է, վոր վոչ յորդանի յերես ենք կարում առնել վոչ դոշակի: Սաղ ճղվել, իրարից ելել են... Ամեն բան կրակի գին է դառել, այ կրակվին դրանք... Ելած ձուն նաֆթի ու սպիչկի չի հերիքում. են էլ շատ ժամանակ չի ըլում. ամիսներով անթեղ եմ տնում...

Դավիթը մորը լսելով՝ նայում էր միաժամանակ կից սենյակի դռան և ղեպի բակը: Յերկար լսելուց հետո նա, վերջապես, ընդհատեց մորը.

— Բա ես մերոնք հուր են, հարցրեց հանկարծ:

— Մերոնք, յերկարեց խոսքը նանը, շուրթերը սեղմելով:—Հերդ, Դավո ջան, գնացել է վար անելու: Յերկու որ է մեր Դիմացի արտը վարում է... Հողը, ասում է, շատ է պնդացել: Դե, իրա ուժն էլ չկա են վաղվա... Խեղճ հայը հալից ընկել է: Դու էլ մի խաբար չես անում... Միշտ ասում է. «Գա յերեսիս մի բուռ հող քցի,—ե՛լ՝ հեչ...» — նա հառաչեց յերկար ու շարունակեց.—Ծիրանանց Արշոն, ասում են, իմացի՞լ ես, կուրանա նրա մերը, ընկել է ձիու տակը՝ սպանվել... Կալավիր է յեղել, ի՛նչ է, գիտեմ վոչ... Իսկ Իրիցանց Սեթոյի, են մեր շաշ, անդարդ Սեթոյի վոտ-



հերը, ասում է, կտրել են բաժնիցումը, իմացել են...  
Հերն ուզում է յեզը ծախի, դնա վորդուն տես, մեծ  
տղեն թողում չի: Հերն ասում է՝ «Բա Սեթոյին մի  
յեզը չի հասնի»... Իսկ մեծ տղին թե՛ «յես կը բաժան-  
վեմ, ասում ես, յեթե եղպես բան անես»... Ու եղպես  
մնացել են...

Լուռ լսում եր Դավիթը մորը և ելի նայում կից  
սենյակի և բակի դռան: Յերկար լսեց, լսեց և նորից  
ընդհատեց մորը.

— Բա են հարսն ուր ե գնացել...

Վորդու հարցը շփոթեց պառավին. նա չկարո-  
ղացավ իսկույն պատասխանել: «Իմացել ե տենաս,  
թե չե», մտածեց և՛ աչքերը գետնին՝ սկսեց թախտի  
կարպետի ծավաժ ծայրերն ուղղել:

— Վարդիշաղը, խոսեց նա կարպետի հետ խա-  
ղալով. — Վարդիշաղը հերանց տուն ե գնացել... — ու  
խոսքը չավարտած՝ հռուհի: Նրա ցամաք շուրթերը  
դողում էին. չեր իմանում ինչ պատասխանի վորդուն,  
քիչ եր մնում լաց լինի, բայց զսպում եր իրեն, շուր-  
թերը սեղմում եր ելի, և նրա կուշ յեկած դեմքը դրա-  
նից ավելի յեր կուշ գալիս:

Դավիթը նկատեց մոր հուզումը և կանաչ կան-  
թով գլխարկը, վոր մինչ այդ գլխին եր, վերցրեց և  
նստեց թախտի ծայրին:

— Ի՞նչ կա, բան ե պատահել...

Նանը լուռ եր:

— Դե ասա, — տենենք, ի՞նչ կա, — շարունակեց  
Դավիթը, մոր լուռթյունից ինքն ել անհանգստացած:  
Պառավը փղձկաց հանկարծ և սկսեց արտասվել:

Ու պատմեց բոլորը:

— Ա՛խ, ասողի լեզուն չորանա, չորանա...

Մի ժամ, ժամից ավելի, Դավիթը մնաց լուռ նըս-  
տած միևնույն տեղը, արմունկները ծնկներին, գլուխն  
ափերի մեջ առած՝ մտածում եր: Հետո յեկավ տեղից,  
գլխարկը վերցրեց, փայտը ձեռն առավ և գնաց դեպի  
դուռը: «Ո՛ւր, Դավո ջան», հարցրեց նանը վախեցած:  
Դավիթն առանց հետ դառնալու՝ «Գնամ տենամ ի՞նչ  
ե անում ապին», ասավ ու առաջ գնաց կաղալով:  
Մայրը հուզումի մեջ մոռացել եր վորդու կաղալը:

— Բա եդ վոսիդ ի՞նչ ե պատահել, ա՛յ տղա,  
հարցրեց հոգատար յերկյուղով:

— Հե՛չ, պատասխանեց Դավիթն առանց յետ դառ-  
նալու:

Մայրը հասկացավ, վոր գնդակի դիպած պիտի  
լինի, և չուզեց հարց ու փորձել, տեսնելով վոր Դա-  
վիթը տրամադիր չե խոսելու. հետո մանրամասն կը  
պատմի յերեկ...

— Կաց, Դավո ջան, ասավ նանը տեղից յերնե-  
լով. — բա մի բան չես ուտո՞ւմ: Կաց մի թեթեւ ձվածեղ  
անեմ:

— Չե, հարկավոր չի, — հրաժարվեց Դավիթը:  
Բայց նանը լսել անգամ չուզեց և, «կաց, կաց» ասե-  
լով՝ դուրս գնաց: Յեվ Դավիթը սենյակի փոքրիկ քա-  
ռակուսի լուսամուտից տեսավ ինչպես մայրն արագ-  
արագ գնաց դեպի գոմը. յերեկ ձու բերելու, — մտա-  
ծեց Դավիթը, և նանը նրա աչքին այնպես փոքրա-  
ցած ու թեթեւ յերեաց, կարծես պառաված յերեխա  
լիներ, վոր քայլում եր արագ-արագ: «Վոտներն ել բո-  
րիկ են» մտածեց Դավիթը և նոր ուշ դարձրեց մոր  
հագուստին, վոր նման եր մուրացկանի շորերի: «Վոնց



վոր ուղղորդող շորերը ըլին», մտածեց Դավիթը և ինչպե՞ս տխուր, «իսկ Վարդիշաղը մարդի յե գնացել»... Վարդիշաղը... Ոտարականի պես կանգնել էր Դավիթը սենյակի մեջտեղը և չորս կողմն եր նայում։ Ծալքը նորից նրա աչքովն ընկավ և մոտեցավ ծալքին. տեսնես տալի՞ս է Վարդիշաղն իր անկողինը, բաժինքի շորերը, թե՞ չէ... Դավիթը հիշում էր կնոջ վերմակն ու դոշակը յերեսի կտորից—մեկը գուլ-գուլ էր, մյուսը՝ վարդագույն նախշերով։ Վոչինչ չկար... Դե, ել ինչի՞ յե նայում. «իհարկե տարած կլինի», մտածեց նա և, մորը չսպասելով, փայտը ձեռին դուրս յեկավ բակը։

— Ուր, Դավ... ջան, ուր ես գնում, ձայն տվեց նա՛նը գոմի կողմից։ Նա ինչ-վոր, զգուշությամբ, բերում էր գոգնոցով։

Դավիթը չպատասխանեց։

— Մի բան ուտե՛իր, այ տղա։

Դավիթը ձեռը թափ տվեց։ Հարկավոր չի...

Ու գնաց։ Նա՛նը մինչև փողոց աչքով ճամփուղերեց նրան մի թագուն ահ սրտում. ինչո՞ւ եսպես հանկարծ գնաց Դավին...

Դավիթը կամացուկ ու դանդաղ դուրս յեկավ փողոց և քայլերն ուղեց գեպի գիմացի արտը։ Վարի որ եր, փողոցում մարդ սակավ էր պատահում. պատահողներն էլ կանգնում էին և նայում նրան։ Գյուղում գինվոր հազվադեպ էր լինում, այդ պատճառով նայում էին ուշադիր, հետաքրքիր։ Մի կին, վոր յերկու հորթ իրար կապած, առաջն արած քշում էր — յերկար նայեց նրան և դարձավ կողքի կնոջը. «Մաճկալանց Դավիթը չի, աղչի. Վոսկանի տղին»... «Հի վոնց վոր նա ըլի», պատասխանեց մյուսը։ Դավիթը ճա-

նաչեց այդ կանանց, — մեկն իրենց հարևան Պետրոսի կինն էր, մյուսը Ժամհարի հարսը, բայց չպատասխանեց նրանց տարակուսանքին։ Նա էլ իր հերթին նայում էր գյուղի տներին, վորոնք՝ բոլորն էլ կարծես իջել, փոքրացել, խրվում էին գետնի մեջ. ելի Արտեմի խանութն էր մենակ, վոր աչքի յեր ընկնում ներկած դռներով... Գնում էր նա և նայում տներին. տեղ-տեղ շները հաջում էին նրա վրա, յերեսաները կանչում էին «ուռու՛ւս, ուռու՛ւս»... Այս բոլորին նա վոչ մի ուշ չեր դարձնում, թվում էր նրան, թե գնում է ոտար մի գյուղի միջով, այնպես, ինչպես գնում էր Կարպասի, Պուլսի և Ռուսաստանի գյուղերի միջով։ Բայց վոչ մի տեղ — վոչ Կարպասում, վոչ Պուլսում, վոչ էլ Ռուսաստանում նա իրեն այնպես ոտար ու մենակ չեր զգացել, ինչպես այստեղ՝ իր հայրենի գյուղում։ Նրա մտքից չէին հեռանում մոր խոսքերը — «Վարդիշաղը մարդու յե գնացել», ու այնքան վատ էր զգում իրեն, վոր չեր ուղում մարդ տեսնել, և աշխատում էր շուտով, շտապով դուրս գալ դաշտ... Այլ վոտի վրա կալավով, ձեռնափայտը ձեռին, վերջապես, դուրս յեկավ գյուղից յեվ հասավ գետափ։ Դեռ գյուղամիջից, յերբ շները չէին հաչում, լսվում էր գետի խշխշոցը։ Զրի այդ ձայնը ծանոթ էր Դավթին, բայց դա յել հեռավոր ու ոտար էր թվում։ Գետը հոսում էր հորդացած ջրերով, պղտոր ու մթնած ալիքները մրմռում էին և հրհրում միմյանց կավի պատնեհների մեջ ու բոլոր ժամանակ խշխշում, թշշում, կարծես բողբոջում, տրտռնում ու զայրանում էին ում վոր դեմ։

«Վարդիշաղը մարդու յե գնացել» կրկնում էր Դավիթը մտքում դետի ջրերին նայելով, և նրան թը-



վում եր, վոր ալիքները ճշում են «կինդ չկա, կինդ չկա»... Այո, չկա... Ուրեմն ի՞նչ, ինքն ավելորդ է...  
**Չկա.** լավ, ո՞վ է մեղավոր ուրեմն. ի՞նքն թե նա... Յեթե ժամանակին լուր ուղարկեր, — նա ի հարկե, չեր գնա... ո՞վ ասաց թե չեր գնա... Հայրը — Դեղին Ծիտը, միևնույն է, կտաներ ելի... Բայց վո՞չ — հագել թե... Յեթե լուր ուղարկեր — հագել թե... Իսկ ինչո՞ւ Վարդիշաղն այդպես արավ. — յեթե նա սիրում եր՝ պիտի համբերեր... Համբերե՞ր... Մտածում եր Դավիթն ալիքներին նայելով, և ալիքները, թվում եր՝ կանչում էին ելի. «կինդ չկա, կինդ չկա»... Լավ, ուրեմն ինքն ավելորդ է: Ավելորդ... ինչո՞ւ յե ավելորդ... Կերթա ասա իր ծեր հորն ոգնելու, կերթա հիմա կփոխարինի նրան, վոր վաղուց ի վեր սպասում է իրեն, հոգնած ու հալից ընկած... Ինչո՞ւ յե ավելորդ. կերթա, կգաղվի նորից հին գործով — արտ կցանի, կալ կըկասի, ինչպես առաջ...

Բայց վորքան ել Դավիթն ուզում եր մոռանա կնոջը — չեր լինում. ալիքները, գետափի ուռիները և քիչ վերև յերևացող կամուրջը՝ բոլորը հիշեցնում էին նրան. — այս ջրի միջով եր, վոր ձիով գնացին նշան. ուռիներն այսպես նոր էյին կանաչել, յերբ պսակվեց, և պսակից մի ամիս հետո այն կամուրջով եր, վոր ինքն ու կինը — նորահարս ու նորափեսա միասին — գնացին Վարդիշաղի հերանց տուն, և ջրի են կողմն եր, վոր Վարդիշաղն անավ. «ինձ համար կըրնկավոր բաշմակ կառնես»:

Յերկար պիտի մնար Դավիթը գետափին կանգնած, յեթե չսթափեցնեյին նրան մի խումբ վտարորդիկ յերեխաներ, վոր, հայտնի չե վորտեղից, աղմուկ

թափվեցին գետափ և սկսեցին կատվի պես մազցել ուռիները: «Տենանք ով շուտ, տենանք ով շատ» կանչում էյին նրանք և կտրտում ուռիների նոր բացված դեղնականաչ ճյուղերը: Նրանց նայելով՝ Դավիթը գլուխը շարժեց, ժպտաց յերեխաների ճարպիկության վրա և նորից կաղալով շարունակեց ճանապարհը դեպի Դիմացի արտը: Յերբ կամուրջն անցավ՝ արտը յերևաց. կեսից ավելին վարած եր արդեն. յերևում եր, վոր յերկու որվա վար է. մի մասը շեկին եր տալիս, իսկ մյուս մասը սև և թարմ եր: Դավիթը կամաց-կամաց մոտեցավ արտին: Ծեր Վոսկանն ուրախ արխալուզի գոտին խրած՝ զառամած ձայնով անընդհատ խրախուսում եր յեղներին. — հա, քե մատաղ, հա, քաշի, հա... Յեվ յեղները մեջքները լարած՝ գնում էյին համաշափ քայլերով, իսկ նրանց յետև բացվող ակոսից բարձրանում եր թեթև, բարակ ծխի նման թեթև գուրշի:

— «Բարի աջողում, ամի, ասավ Դավիթը հորը մոտենալով, յեվ, քրտնած լինելով՝ գլխարկը վերցրեց:

Հայրն ավելի ուշ ճանաչեց վորդուն, քան մայրը: Դավիթը... Յերկար չեր հավատում և ձեռն աչքերին հովանի արած՝ նայում եր: Յերբ վերջապես, համոզվեց Դավիթն ինքն է — բռնեց վորդու գլուխը և համբուրեց նրա քունքի մաղերը, ապա սկսեց գանգատվել, վոր այսքան ժամանակ նամակ չեր գրում, իրենք ել, ո՞վ է իմանում, ինչե՞ր էյին մտածում:

— Խեղճ մերդ ամեն որ լաց եր ըլում. — Հայ ես վո՞նց ելավ, ես ի՞նչ ելավ, — խոսում եր ծերունի Վոսկանը դանդաղ, զառամ ձայնով և նրա անատամ բերանը չպլպում եր, և բիխերի մաղերը, քիչ եր մնում, բերա-



նը մտնեյին: Մոր պես հայրն ել փոքրացած ու թեթեւացած եր թվում Դավթին. ավելի նիհարել եր ու ծերացել. հոնքերը բոլորովին ճերմակել էյին և կախ ընկել աչքերի վրա, մինչև անգամ ականջների մազերըն ել սպիտակել էյին:—Դե, լավ արիր, վոր յեկար, վորդի, լավ արիր,—ասում եր նա շուտ-շուտ:

Յեվ յերբ բավական խոսել եր, մի ձեռով մեջքը բռնած, մյուսով գետնին դիմհար տալով՝ յեկավ վարը շարունակելու: Բայց Դավիթը չթողեց:

— Թող, ապի, ասավ, յես կը վարեմ...

Յեվ ձեռնափայտն ու շինելը թողնելով հոր մոտ՝ մաճը բռնեց: Յեղներն առանց ճիպոտի շարժեցին: Դրանք հին յեղներն էյին, վոր այժմ բավական պառավել էյին, բայց և ավելի փորձառու դարձել: «Ե՛հ, գնացել ե, գնացել» մտածում եր Դավիթը կնոջ մասին. «Թող գնա... ել կնիկ չի՞ ճարվի աշխարհում», ավելացնում եր դառնացած, վրեժխնդիր և մաճն ամուր սեղմում ձեռքում: Վարժ յեղները գնում էյին համաշափ քայլերով, և ակոսները կանոնավոր շարում էյին իրար կողքի: Գոհ եր Դավիթը. յեղների հմտութունը զարմացնում եր նրան, այնպես կարգով էյին քայլում: Չորրորդ թե հինգերորդ ակոսի վերջում, սակայն, արորը հանկարծ դուրս պրծավ ակոսից և վարածն ընկավ: Դավիթը վոտը դեմ տվեց արորն իր տեղը գցելու և, հանկարծ... ծունկը բռնեց ու չոքեց: Ի՞նչ պատահեց: Նա սաստիկ ցավ զգաց. ծնկին դիպած հին գնդակի տեղն այնպես ծակեց, կարծես մեկը շամփրեց նրան. վոտից մինչև գլուխ վազեց մի տաք հոսանք և քրտինքը միանգամից ծածկեց նրա ճակատը: Նա ծունկը բռնեց և կամոց շփեց: «Վոչինչ, բան չկա»

վատ տեղ դիպավ»—մտածեց նա և շարունակեց վարը: Հետևյալ ակոսում կրկնվեց նույնը:

Այս անգամ ծերունի Վոսկանը նկատեց և մոտեցավ վորդուն.—Ի՞նչ պատահեց, Դավո ջան...

— Հեյ, ծունկս չթին դիպավ,—պատասխանեց Դավիթը ծունկը բռնած:

Հայրը ձեռը մեկնեց մաճին, վոր ինքը վարի, բայց Դավիթը դարձյալ չթողեց և, ծունկը ցավելով, վարը շարունակեց: Հայրը նստած նայում եր նրան և հոգով խնդում ուրախությունից, վոր մենակ չմնաց, վոր կորած Դավիթը յեկավ նորից... Մոմտում եր ծեր Վոսկանը և խանդաղատանքով նայում վորդու յետևից: Մեկ ել տեսավ՝ Դավիթը չոքեց նորից: Ի՞նչ պատահեց ելի: Նա կրկին մոտեցավ վորդուն: Դավթի դեմքն այս անգամ ծամածովել եր ցավից և գույնը թուխ... Ծնկից դարձյալ մի տաք հոսանք եր վազում դեպի գլուխը, և ծունկը կարծես շամփրում էյին:

— Խամությունից կըլի, խամությունից, ասավ հայրը.—դու նստի, նստի, յես կը վարեմ...

Դավիթը ծունկը բռնած՝ գնաց դեպի շինելը: Նա զարմացած եր. ինչո՞ւ հանկարծ ծունկը ցավ տվեց այդպես: Ժիշտ ե, գնդակը դիպել եր ծնկին, հանել էյին, և դրանից եր, վոր թեթև կաղում եր, բայց նրան թվում եր միշտ, վոր այնուամենայնիվ իրենց գործը կանի: Նա ձեռքից ել, վոտից ել վիրավորվել եր կարպատներում կամ, ինչպես ինքն եր ասում—**Կարպատում**, պառկել եր հիվանդանոցում, և ամբողջ հիվանդանոցի հետ գերի յիր ընկել, նորից հիվանդանոցի հետ աղատվել եր գերությունից, և միշտ ել նրան թվացել եր, վոր, լավ և վիրավորվել ե, այդպիսով



կազատվի ծառայությունից, և վորքան ել ձեռն ու վոտը ֆնասված լինեն, այնուամենայնիվ իրենց գեղական գործը կարող է անել: Բայց ասանք — ել ինչի՞նչ յե պետք... Հայրը՝ ծեր մարդ, նա պիտի աշխատի՝ ինքը նայի... Մտածում եր Դավիթը դառնացած և նայում հորը, վոր մեջքը կքած՝ հազիվ կարողանում եր քաշ գալ արորի հետ: Նայում եր հորը, նայում եր գյուղին և մտածում: Այնքավոր ողբ վետվետում եր նրա առաջ, ագռավները հանդարտ, անվախ իջնում եյին հոր ցանքսի վրա և ցորենի հատիկներ վեր քաղում: Հեռվից, մոտիկից, գյուղի այն կողմի արտերից, բլուրների լանջերից լսվում եյին գութանավորների և չթվորների ձայներ. գյուղում բառաչում եր մի, ըստ յերևույթի, նորածին կով — յերկարաշունչ ու սրտախոր մի բառաչով, վորը տարածվելով գյուղի վրա՝ դողդողում եր ջինջ ողբի մեջ և արձագանքներով գնում դեպի դաշտերը. յերբեմն լսվում եր նայել շների հաջոց, յերեխաների աղմուկ... Ու այդ բոլորը՝ թե գութանանավորների ուրախ հոգովելը, թե կովի կարոտակեղ բառաչը, թե շների հաջոցը և թե յերեխաների աղմուկը — բոլորը, բոլորը, թվում եր Դավիթին, վոր միևնույն բանն են կրկնում, վոր ինքն ավելորդ է, անպետք... Բոլորը — մեծ, փոքր, մարդ թե անասուն — պետք են մի բանի, իսկ ինքն ինչի՞նչ յե պետք իր վոտքով... Յեվ ցավող ծունկը բռնած՝ տխուր նայում եր նա բարդիների մեջ կորած կաղնուտին, լսում եր ջինջ ողբում տարածվող ձայները, հիշում եր կնոջը և կրկնում միևնույնը, վոր ինքն այլևս ավելորդ է, անպետք է: «Ել ինչի՞նչ յեմ պետք»... Ու իր հարցին պատասխան չեւր գտնում:

Որը կամաց-կամաց յերեկոյանում եր, բայց նա տեղից չեւր յեկնում. ծունկը դեռ մոմոում եր: Հայրը մի քանի անգամ խորհուրդ տվեց գնալ տուն: Չուզեց: Ո՛ւր գնալ, ի՞նչ պիտի անի տանը... Ծեր մարդն աշխատի հատեղ, ինքը գնա՞ տուն: Ի՞նչ կա տանը... Յեվ նա նույն տեղը նստած ֆնաց այնքան ժամանակ մինչև վոր հայրն յեզներն արձակեց ու սայլը լծեց: Նա ոգնեց հորը սայլը լծելու, ապա շինելը հագավ և կաղալով, առաջվանից միքիչ ավելի կաղալով՝ գնաց դեպի գյուղ: Ո՛ւր է գնում, ի՞նչ պիտի անի տանը, ի՞նչ կա տանը, մտածում եր նա և վայրույթով ցավող վոտքն ավելի ամուր խփում գետին...

Այն ժամանակ, յերբ նա թեքվում եր դեպի գետը, նկատեց, վոր իր յետնից, նույնպես դեպի գյուղն եյին գալիս յերեք ձիավոր: Ուշ չդարձնելով յեկողներին՝ նա շարունակեց ճանապարհը: Չիավորները մոտենում եյին հետզհետե: Դրանցից մեկը տանուտեր Արսենն եր, մյուս յերկուսը՝ նրա գզիրները՝ հրացանները թիկունքով զգած: Տանուտեր Արսենը, ինչպես միշտ, չեւրքեղի չուխան հագին, գդակը թեք, բիսերը յերկաբ ու սուր, վոր հիշեցնում եր Նասըր-Եղգին շահին, ուղիղ՝ շիփ շիտակ նստել եր ձիուն, և ձին նրա տակ գնում եր «ջրի պես», բաշը քամուն տված: Իսկ գզիրների ձիերը հետևում եյին նրան սայլում լծվող հոգնած յարունների պես ցինգիր-ցինգիր անելով: Տանուտեր Արսենը գալիս եր իր կառավարությանը յենթակա խաչի գեղից, ուր գնացել եր դասալիք զինվորներ բռնելու: Յերկուսը առաջ նա «սրոյնի» թուղթ եր ստացել, վոր խաչի գեղցի յերկու զինվորներ փախել են — գրանց առունը գրած եր թղթում — պետք է



բռնել և ուղարկել: Հրամանը պրիստավից եր և շատ խիստ: Բացի դրանից թղթում գրած էր, վոր ընդհանրապես հետեւել պիտի, վոր փախած զինվորները չըթագնվեն գյուղերում: Յեւ ահա՝ տանուտեր Արսենը գնացել եր այդ հրամանը կատարելու: Խուզարկել եր փախած զինվորների տները, մարագը, գոմը, նայել եր ամեն տեղ, մինչև անգամ նրանց ազգականի տները, հարց ու փորձել, սպառնացել եր նրանց ծննդոներին, հարազատներին և... վոչինչ: Փախածները չեյին գտնվել: Քանի անգամ բռնել եր այդպիսի «լրբերի»՝ թքել, մրել, ուղարկել և ելի — հե՛չ — գալիս են... Հենց այդ Խաչի գեղցի մեկը փախել եր յերեք անգամ երգրումից... Բայց թե վճռեղ պիտի թագնված լինեյին այժմ խաչիգեղցի այդ տղեքը — նա հասկանալ չեր կարողանում: Այսպիսի անաջողություն չեր ունեցած յերբեք ի՞նչ պատասխան պիտի տար պրիստավին... Մտածում եր տանուտեր Արսենը և վոտներով շտապեցնում ձիուն, ու ձին նորից գնում եր «Ջրի պես»՝ բաշը քամուն տված...

Գետափին հասավ Դավթին: Մոտենալով՝ ձին կանգնեցրեց և նրան նայեց: Դավթին իսկույն ճանաչեց տանուտեր Արսենին. նա բոլորովին չեր փոխվել, փոխվել եր միայն հին չերքեղի չուխան. այսինքն առաջվա սևագույնի փոխարեն, այժմ հագել եր դարչնագույն. վաղմաները նույնն էյին, նույնն եր գըդակը. ելի նույն 45-50 տարեկան մարդն եր մնացել: Դավթին ամեն բան լավ եր հիշում: Բայց տանուտերը չճանաչեց Դավթին. և ի՞նչպես ճանաչեր — Դավթի նման այնքան մարդ կար միատեսակ շորերով. բայց գոցե և չուզեց ճանաչել, դժվար է ասել. այնուամենայնիվ,

ձին կանգնեցնելով՝ հարցրեց արագ — Դավ և վճռեղից է գալիս:

Դավիթը չպատասխանեց:

— Քեզ եմ հարցնում է, զինվոր ես:

Դավիթը դարձյալ չպատասխանեց. նա շարունակում եր քայլել դեպի կամուրջը:

— Լսիր քեռուս տղա, — շարունակեց տանուտերը հեգնանքով, ցուցամատը դեպի իրեն շարժելով, ինչպես անում են մանուկներին կանչելիս. — դակումենա, բան, ունես, թե՛ զիքոն:

Դավիթը շինելը թեից ուսը քցեց և լեզուն չըպպացնելով՝ գլուխը շարժեց. — Հը՛մ... Նրա այդ անտարբերությունը, գլխի շարժումը և լեզվի «չպպոցը» վրդովեց տանուտերին (ով է սա, վոր իրեն մարդատեղ չի դնում, իր հարցերին չի պատասխանում) և նա ձին քշեց դեպի Դավիթը, կամենալով իջնել ձիուց, բայց, մինչ այդ՝ յետ ընկած գզիրները մոտեցան, և Դավթին ճանաչելով, յերկուսը միասին բացականչեցին.

— Սա հո մեր Դավիթն է, խավիս...

Տանուտերը տնքաց, գլուխը թափահարեց, վիրավորանքից թե թյուրիմացությունից՝ հայտնի չե, և ձիու սանձը բաց թողեց նորից:

Գզիրներն ուզում էյին զրույց բացել Դավթի հետ, իմանալ յե՞րբ է յեկել, վճռեղից, բայց Դավիթը, անուշադիր նրանց ցանկության, ստաֆները սղմած՝ գլուխը շարժեց տանուտերի յետևից, ինչ վոր փընթփընթաց ինքն իրեն և շարունակեց ճանապարհը կամուրջով:

Կես ժամից հետո նա տանն եր արդեն: Հագիվ



մտել եր ներս՝ գլխերսերից մեկն յեկավ և կանչեց նրան **ԿԱՆԳԻՎԱՐ**։

— Ի՞նչ կա, ռվ և կանչում, ինչի՞ համար։

— Տանուտերը...

— Տանուտերը... Գլուխը քարով և տվել տանուտերը... Գնա առա՛ դալիս չեմ,—պատասխանեց Դավիթը վրդով։

Յեվ չգնաց։

Բայց քիչ հետո նույն գլխը նորից յեկավ.

— Սալփեն վռադ կանչում և կանցիլարումը...

Դավիթը դարձյալ չգնաց. ի՞նչ գործ ունի նա տանուտերի մոտ։

Սակայն մի քանի րոպեյից յերկու գլխը միասին յեկան և տարան նրան։

Դավիթը վերցրեց իր ձեռնափայտը և առաջ ընկավ։

«Մի տեսնենք եղ մարդն ի՞նչ և ուզում ինձանից», մտածում եր ճանապարհին։

Տանուտերը ձեռքերը յետևը դարսած՝ անց ու դարձ եր անում **ԿԱՆԳԻՎԱՐԻ** բակում և շրթունքերը կռծում։ Մի քանի գյուղացի և մի կին նրա մոտ կանգնած՝ ինչ-վոր բան եյին խնդրում, բայց տանուտերը աչքը ճամփին՝ գրեթե չեւ լսում նրանց։ Յերբ Դավիթը գլխերսերի հետ միասին ներս մտավ բակը՝ նա ձեռքերը կանթեց մեջքին, կանգնեց և ուղիղ նրան նայեց.

— Հը՛, վերջապես,—խոսեց նա.— Մեր տղա, դու խանի խոռն ես, նամեանիկի թոռն ես, վոր լայադ չես անում գալ...

Դավիթը մի ձեռը նույնպես կանթեց մեջքին և վոտից գլուխ նայեց տանուտերին՝ արհամարհական, դառնությամբ լի հայացքով։

— Ե՛, ի՞նչ կա վոր. ինչի՞ գամ,—խոսեց նա ակամա արհամարհանքով, յուրաքանչյուր բառն առանձին շեշտելով։

— Եղ արդեն քո բանը չի՛ ինչի՞ համար,—շարունակեց տանուտերը.— Գեղ վոր կանչում են—պըտի գաս։ Հասկան՞ում ես... Եստեղ վլաստն և կանչում, հասկան՞ում ես,—բարկացավ տանուտերը և ավելի մոտեցավ նրան.— Դու ինձ են ասա—դակումենտ ունե՞ս թե չե՞... Ե՛լ լիրբ-լիրբ մի խոսի...

— Դե, լավ, հերիք, թափ տվեց ձեռը Դավիթը և ձեռնափայտը բարձրացրեց։

Թե գլխերսերը և թե բակում յեղած գյուղացիները լավ չնկատեցին՝ ի՞նչ պատահեց, վոր տանուտեր Արսենը հանկարծ փռվեց գետին։

Գլխերսերը վրա վազեցին նրան բարձրացնելու։ Բայց նա չեւ շարժվում։

Դավթի հարվածը դիպել եր նրա քունքին—ճակատից արյուն եր գնում։

Դավթին անմշապես ձերբակալեցին և տարան ներս։

Յերբ նրա մոտ յեղած թղթերը վերցրին, գրագիրը գրանց մեջ գտավ մեկը, զինվորական վարչությունից տրված մի թուղթ, վորի մեջ գրված եր «Դավթ Մաճկալով, 28 տարեկան, ազատվում և զինվորական ծառայությունից անպետքության պատճառով»...

Գրագիր Արշակ-աղեն մի քանի անգամ կար-



դաց այդ թուղթը, կարդաց և չհասկացավ, թե ինչո՞ւ  
Դավիթը մի այսպիսի վկայագիր ունենալով՝ ցույց  
չի տվել տանուտերին:

Ի՞նչից ե վախեցել արդյոք, վոր ցույց չի տվել,  
— զարմանում եր նա, — և ի՞նչ ե մտածել, վոր սպա-  
նել ե տանուտերին...

Մտածում եր Արշակ-աղան, մտածում և բան չեր  
հասկանում...

1920.

ՎԱՀԱՆԻ ՑԱՎԸ



Ամսից ավելի յեր Քանանյանների տանը արտասովոր անհանգստություն եր տիրում: Անհանգիստ եյին բոլորը— թե ընտանիքի հայրը՝ մոտ վաթսուն տարեկան այդ ակեզարդ փաստաբանը, թե նրա ծերացող կինը՝ տիկին Աննան, թե նրանց ջահել աղջկերքը, վորոնց մասին քաղաքում ասում եյին «գույգ կեչիների պես բացված կենսաթրթիռ որիորդներ», և թե գեղջկուհի պառավ աղախինը: Յեւ դա սովորական անհանգստություն չեր: Քանանյանը կարծես ծերացել եր մի քանի տարով. որերով քաշվում եր իր առանձնասեւյակը և անձնատուր լինում տխուր խոհերի. տիկին Աննային հաճախ տեսնում եյին միայնության մեջ լաց լինելիս, իսկ որիորդները—այդ մշտաժպիտ խնդմոլիկ աղջկերքը—դարձել եյին զարմանալի զգաստ ու խոհուն. մեկը կարծես մի ծանր նախատինք եր տվել նրանց: Խեղճ աղախինը հո այնպես եր կորցրել իրեն, վոր կերակուրները կամ աղի յեր անում կամ անալի: Խոհանոցի մոտով անցնողը միշտ կարող եր լսել նրա այս խոսքերը. «Տեր, քու դուռը բանաս, մինուճար ե»...

Այս ընդհանուր անհանգստության պատճառը Քանանյանների միակ վորդի Վահանի հիվանդությունն եր, մի հիվանդություն, վոր միանգամայն անհասկանալի եր մնում շրջապատողներին: Քսանյոթ տարեկան մի գունատ, շատ գունատ յերիտասարդ եր Վահանը—կարճահասակ, ծայրերը կտրած բարակ բիւի-



ըով և խոշոր մտախոհ աչքերով, վորոնք յերբեմն ստանում եյին այնպիսի արտահայտություն, վոր թվում եր մի թագուն հուր և վառվում նրանց մեջ: Ոտարոտի բան եր թվում, սակայն, նրա հիվանդությունը: — Քնում, յեղնում, դատում ու խոսում եր Վահանը, ինչպես ամեն մի առողջ մարդ, բայց յերբեմն, — շարաթը մի կամ յերկու անգամ, — երկար կանգնում եր վորեւ մի տեղ և անշարժ, անթարթ աչքերով նայում մի կետի. ու մեկ ել հանկարծ ցնցվում ահաբեկ, տեղական մի սառսուռով, հաճախ ինքն իրեն խոսելով. իսկ լայն բացված աչքերը վառվում եյին բոցավառ մի փայլով: Թվում եր թե պատրաստվում և հարձակվել մեկի վրա կամ պաշտպանվել — ու չի կարողանում անել վոչ մեկը, վոչ մյուսը... Այս ցնցումները պատահում եյին թե ցերեկ և թե գիշեր ժամանակ: Յեւ Քանանյանները ուղղակի չգիտեյին ինչ անել, չըգիտեյին ինչ և իրենց վորդու իսկական ցավը:

Մի ամիս առաջ Վահանին բերել եյին Մոսկվայից՝ այդ հիվանդությունը հետը: Բերող ընկերը պատմել եր, վոր պատերազմի սկզբում իրեն ու Վահանին՝ իրավագիտական մասնաճեղհ ավարտելուն պես՝ վերցրել եյին իբրեւ սպաներ և տարել Գերմանական սահմանը՝ կռիվ: Ծնողներն այդ գիտեյին: Վեց ամիս ճակատում ֆալուց հետո, սակայն, Վահանը սրով վերավորվել եր թեից և բժշկության համար տարվել Մոսկվայի գինգորական հիվանդանոցներից մեկը, ուր և նրա վերքն առողջացել եր բոլորովին: Քանանյաններն այդ ևս գիտեյին: Բայց ինչ եր, իսկապես, վորդու հիվանդությունը — Վահանին բերող ընկերը ուսերն ու հոնքերն եր վեր քաշում միայն, նա ինքը վոչինչ

չգիտեր, բայց հիվանդանոցի բժիշկներն ասել եյին, վոր դա թեթեւ ջղացավ և և հայրենիքում կանցնի:

Բայց ամսից ավելի յեր ահա Վահանը հայրենիքում եր և հիվանդությունը չեր անցնում... Տեղական բժիշկները նույնպես այն կարծիքի եյին, վոր դա շուտով կանցնի, և վոր լավ կը լինի ամառը դալուն պես Վահանին տանեն ամառանոց, ուր՝ բնության գրկում՝ ամեն ինչ պիտի անցներ. իսկ առայժմ — քանի ձմեռ եր — խորհուրդ եյին տալիս զբաղեցնել Վահանին հաճելի ու զվարճալի յերևույթներով. տանել զբոսանքի, կրկեսներ, ուրախ կոմիդիաների ներկայացման և, վերջապես, ամենալավագույն միջոցը — կարգալ ուրախ գրքեր... Մի խոսքով, բոլոր բժիշկների կարծիքը գրեթե մեկ եր. հանգստությունն ու հաճելի մթնոլորտը կը բուժի Վահանին:

Ու Քանանյաններն ամբողջ տնով աշխատում եյին սոեղծել այդ մթնոլորտը. մայրն ու քույրերը հաճախ Վահանին տանում եյին կրկես, ցերեկվա ուրախ ներկայացումներ, արեւ որերը շրջում եյին հասարակաց այգում, իսկ, մեծ մասամբ, քույրերը փոխ-փոխ կարդում եյին զավեշտական գրքեր և աշխատում եյին ծիծաղել ամեն մի նախադասության, նույնիսկ ամեն մի խոսքի վրա, վոր ծիծաղ բերեն և Վահանի դեմքին: Վահանը, սակայն, բոլոր ժամանակ ֆուում եր անտառեր, իսկ յեթե, յերբեմն միայն, ժպտում եր — այդ վարկյանները Քանանյան ընտանիքի համար դառնում եր տոն. ծնողները հրճվում եյին, խանդաղատում, քույրերը զույգ թիթեռների պես թրվում եյին յեղբոր շուրջը, և բոլորը միասին ժպիտներով, ականարկներով ու շարժումներով խնդակցում իրար... Բայց դրանք



վարկյաններ եյին միայն, վոր վոչինչ չեյին փոխում: Վահանի ցաֆն այնու ամենայնիվ կրկնվում եր առաջ-վան պես:

Մի գիշեր, սարսուռով բռնված միջոցին, նա ձեռքը բռնեցք շինած, անկողնի մեջ նստելով՝ գոռաց.

— He смеј!

Մայրը, վոր վորդու հիվանդության պատճառով նրա սենյակումն եր քնում: գիշերվա շապկով վեր թռավ տեղից սարսափահար.

— Ի՞նչ ե, Վահան ջան, ի՞նչ ե:

Մոր ձայնը, կարծես, զգաստեցրեց Վահանին. նա լարված ձեռքն իջեցրեց և գլուխն ուսին թեքելով՝ հառաչեց:

— Ի՞նչ ե, Վահան ջան,—կրկնեց մայրն անհանգիստ.—սեմն եյիլ ասում, այդ սեմ հետ եյիլ խոսում:

— Ուզում ե խփել,—արտասանեց Վահանը հեացող ձայնով, աչքերը սենյակի դռանը հառած.—կարծում ե քնած եմ...

Մայրը բան չեր հասկանում. նայեց դեպի դուռը. այնտեղ վոչ-վոք չկար:

— Ո՞վ, Վահան ջան, սփ եր ուզում խփել. սփ ե կարծում...

Վահանը նայեց մորը և լռեց. իսկ այնուհետև վորքան ել մայրը հարց ու փորձ արավ—բան չխոսեց. ուստի և նա, յենթադրելով, վոր վորդին խոսում ե յերազի մեջ, դադարեցրեց իր հարցերը և նորից մտավ անկողին՝ մի ծանր հառաչանքով:

Մի ուրիշ անգամ սակայն Վահանը մի այնպիսի բան արավ, վոր բոլոր տնեցիներին զարմացրեց:

Զրոհհնքի առներից հետո եր այդ:

Մի ցուրտ առավոտ քաղաքապահ վոստիկանը ինչ-վոր մի թուղթ եր բերել պ. Քանանյանին և, պատասխանի սպասելով, շինելի ոձիքն ականջներին քաշած, թուրը կողքից կախ, ցրտից կարմրած դեմքով, այտերն ուռեցնելով՝ պտտվում եր պատշգամբում և ժամանակ առ ժամանակ, գյուղացիներին հատուկ հետաքրքրությամբ, լուսամուտներից նայում ներս:

Վահանը, վոր այդ ժամանակ մոր և մեծ քրոջ հետ իր սենյակումն եր—վոստիկանին տեսնելով—հանկարծ գունատվեց և նստած տեղից ցատկեց դեպի լուսամուտը՝ ուռսերեն գոչելով.

— Հեռու, հեռու...

Վոստիկանը շվարած կանգ առավ և նայեց Վահանին:

— Հեռու,—կրկնեց Վահանը, այս անգամ վոտից գլուխ դողալով և բռնեցքը վոստիկանի վրա թափ տալով:

Մայր ու աղջիկ բռնեցին Վահանին:

— Ի՞նչ ես ուզում, Վահան ջան, ի՞նչ ես ուզում. նա հայրիկի համար թուղթ ե բերել,—ասին նրանք միասին:

Զգալով, վոր ձեռքերը բռնել են, Վահանը, կարծես, զինաթափվեց և սկսեց հեռվ:

Վոստիկանը կանգնած տեղը շարունակում եր, ապուշի պես, ժպտալ: Տիկին Քանանյանը ձեռքով նըշան արավ նրան հեռանալու. և յերբ վոստիկանը հեռացավ, հիմար մի ժպիտ դեմքին, նա դարձավ վորդուն.

— Դու կարծում ես զոդ ե, Վահան ջան. չե, հայրիկի համար ինչ վոր թուղթ ե բերել ստորագրելու... Վահանը մի վայրկյան հոգնած հայացքով նայեց



մորը, ապա ճակատը բռնելով՝ գրեթե ընկավ գահավորակի վրա ու լաց յեղավ ուսերը ցնցելով:

Տեսնելով այս՝ Քանանյանները կորցրին հավատը դեպի բժիշկները և իրենց ամբողջ հույսը դրին ամառանոցի վրա. ամառը գա՝ ընտանիքով կփոխադրվեն Դիլիշան:

— Զենց մայիսին, — ասում էին աղջկերքը:

— Այո, ի հարկե, մայիսին, — պատասխանում էին ծնողները: — Ամենալավ ժամանակը մայիսն է:

Դիլիշանը նրանց մշտական ամառանոցն էր. նրա անունը Քանանյանների սրտում զարթեցնում էր միշտ քաղցր հիշատակներ — եղևնիների բուրմունք, ջրերի աղմուկ, հավքերի յերգն անտառի թավուտում. նորից հիշում էին յեղևնի արահետները, ոճաձիգ ուղիները, փրփրած կաթը կովի տակ, ճաշը ծառերի հովանու ներքո, ու մի անձառ հիացում՝ հույսերով, սպասելիքներով՝ համակում էր նրանց, և մտածում էին, վոր Դիլիշանում Վահանն անպատճառ կառողջանա, անպատճառ. թող մի մայիսը գա...

\*  
\*  
\*

Բայց մայիսը հեռու էր տակավին: Յեվ Քանանյանները, թեև հուսահատված բոլոր բժիշկներից ու խորհուրդներից, այնուամենայնիվ սկսեցին զվարճության ելի նոր աղբյուրներ վորոնել Վահանի համար. թերևս ամեն ինչ կորած չէ, գուցե ելի մի բան կարելի չե անել մինչև մայիս, — մտածում էին նրանք: Ուստի մեծ յեղավ նրանց ուրախությունը, յերբ մի որ լրագրում կարդացին, վոր քաղաքում բացված է ճոխ պատկերահանդես, վորին մասնակցում էին հայտ-

նի նկարիչներ: Հոգվածի վերջում ասված էր. «Մըսնելով պատկերահան՝ մարդ մոռանում է օրջապատն իր ցավերով յեվ փոխադրվում է բնության կեցասու գիրկը»: Այս մի քանի խոսքը նոր պայծառ հույսեր վառեցին Քանանյան ընտանիքում: Կարծես փրկելու թյան դուռը բացվել էր. բոլորը ձեռք ու վոտք ընկան. — Պետք է գնալ, պետք է Վահանին տանել, վորոշեցին նրանք և վորոշումը հայտնեցին Վահանին:

Վահանը համաձայնեց.

— Այո գնանք, — ասավ նա ևս փոքր ինչ ուրախացած, — վաղուց ե ցուցահանդես չեմ տեսել:

— Յեթե լավ լինի, մամա, մի քանի անգամ կերթանք, — ասին աղջիկները:

Մայրը հավան կացավ այդ մտքին.

— Ինչու չէ, ինչու չէ. կարելի չէ, կերթանք:

Ու իսկույնէյեթ պատրաստություն տեսան դընալու:

Մայրը, չմրսելու համար, հագավ թեքերն ու ոճիքը ճագարի մորթով յեղերած ու բամբակած աստառով տաք վերարկուն, խոր կալոշները. քույրերը, չընայած մոր հորդորներին, կալոշներից հրաժարվեցին, թե վտանները մեծացնում է, բայց նույնպես հագան տաք վերարկուները և վերցրին գառան մորթուց մուֆտիները: Վորովհետև այդ որս սովորականից ցուրտ էր, Վահանին հագցրին հայրելի մեծ, յերկար վերարկուն՝ լայնադարձ ոճիքով, և յերբ փողոցում, քամու պատճառով, այդ ոճիքը բարձրացրին — Վահանի զուլը աներեկվութեցավ նրա մեջ, այնպես վոր յետևից. նայողին թվում էր, թե փողոցով քայլում է վերարկուն:



Քույրերը ծիծաղեցին: Վահանը ժպտաց, և բոլորը միասին ուրախացան. սա լավ նշան է, լավ տրամադրությունը կարող է լավ հետևանք ունենալ:

Պատկերասրահը յերկրորդ հարկումն եր: Մարմարե ցուրտ աստիճաններով բարձրացան վերև, գրնեցին չորս տոմսակ, մի պատկերացուցակ և մտան սրահը:

Բարձր, լուսավոր ու ընդարձակ դահլիճի ամբողջ չորս պատն էլ զարդարված էին բազմաթիվ, մեծ ու փոքր, նկարներով. յեռոտանի կլորիկ պատվանդանների վրա դրված էին գաճե անդրիններ և, խաղատիկնիկնների չափ, փոքրիկ արձաններ: Այցելուները խումբ-խումբ ու մեկուսի՝ դահլիճում ցրված, ցուցակները ձեռներին, հեռանալով ու մոտենալով՝ յեռանդուն աչքերով դիտում էին նկարները. վոմանք դիմում էին ակնոցի ու դիտակի ոգնություն: Հերթապահ նկարիչը՝ յերիտասարդ, բայց արդեն ճաղատ գլխով մի պարոն, սպիտակ գոլավոր մեծ բանտը վզին, անկյունում նըստած լրագիր եր կարդում:

Քանաչյաններն սկսեցին դուռն մոտից:

Առաջին նկարը լճափ եր խիտ յեղեգնուտով. ձկնկուլները մի վոտի վրա կանգնած, յերկար ու սուր կտուցները կախ, կարծես միտք էին անում. ջրերն ասեղնոտում էին, իսկ յեղեգնուտը, թվում եր, շըրշուն է արձակում լճի վետ-վետող ջրերի քով:

Նկարը դուր եկավ:

— Ի՛նչ սիրուն է,— ասավ Վահանը հիացած:

— Այո, շատ,— պատասխանեցին քույրերն ուրախացած վոչ տյնքան նկարի համար, վորքան յեղբոր լավացած տրամադրություն:

— Մյուսներն ավելի լավը կը լինեն, Վահան ջան — ավելացրեց մայրը վորդու տրամադրությունն ավելի բարձրացնելու նպատակով:

Մոտեցան մյուսներին: Յեվ իրավ, դրանք մեկը մյուսից գեղեցիկ էին: «Կեչիների անտառը» հիացրեց նրանց, «Բեռնակիրն» իր բնական գծերով՝ զարմանք պատճառեց, «Չինարկուտը»՝ հիշեցրեց Դիլիջանը, «Ակրոպոլը»՝ հուսաց պատմությունը, «Ախուրյանը»՝ Անին: Ջյունակատար «Արարատի» առջև նրանք ցուրտ զգացին, բայց «Արաքսի հովիտը»՝ արևի վոսկեղեն շողերով ողողված, ջերմություն հաղորդեց նրանց:

Յերկրորդ պատի կոափներն ավելի շատ էին: Բնության տեսարաններին այստեղ գերիշխում էին կյանքի պատկերները: Առաջին կտավը ներկայացնում եր մուրացկաններ, յերկրորդը՝ դրոսավայր — մանուկներով ու սպասուհիներով լիքը: Քանաչյաններն անտարբեր անցան սրանց մոտով և կանգ առան յերրորդ կտավի առաջ, վորը ցուցակի մեջ կոչվում եր «Վրեժ»: Ահագին մի նկար եր դա՝ վոսկե շրջանակի մեջ, վորի փայլը խիստ հակադրություն եր կազմում պատկերի գորշ ֆոնին, տալով նրան մոռյոյ, անհրապույր տեսք: Կտավը ներկայացնում եր ահավոր ու մթամած մի կիրճ, ուր սպառազեն մի յերիտասարդ՝ անհուն հրճվանքն ու հպարտանքը հայացքում՝ կանգնել եր կանաչների վրա փռված դիակի մոտ և իր աջ վոտն ու արյունաթաթավ սրի ծայրը դեմ տվել նրա կրծքին: Սպանվածի շորերը թարմ արյունոտ էին, իսկ բաց գլուխն ընկած եր անոգնակախ: Յերեւում եր, յերիտասարդը վրեժխնդիր է յեղել նրան և այժմ ցնծության մեջ է, անասնական այն ինքնագոհ վիճակում,



վոր ուռեցնում ե մարդու կուրծքը և հուր վառում աչքերում: Յերիտասարդի ինքնագոհ արտահայտությունն այնքան հախուռն եր սպանվածի անմեղորեն ընկած գլխի հանդեպ, վոր տիկին Քանանյանը բարձրաձայն իր կասկածը հայտնեց պատկերի իրական լինելու մասին:

— Այսպիսի բան չի կարող լինել,—ասաց նա գլուխը շարժելով.— Սա հնարովի բան ե:

— Ինչու ե հնարովի,—առարկեցին քույրերը, վոր միշտ աշխատում եյին մորից հասկացող յերևալ.— Այսպիսի բան միշտ ել կարող ե լինել:

— Վոր մարդ սպանեն ու վտան ել դնեն դիակի վրա—հեզնեց տիկին Աննան.— Սա նկարչի յերևակայությունն ե, ուրիշ վոչինչ:

— Բայց և այնպես լավ ե նկարված,—ասին քույրերը միասին:

Մայրը քիթը վեր քաշեց.

— Ի՛նչ...

— Մամա դու բոլորովին մեղջանական ճաշակ ունես,—նկատեց փոքր աղջիկը:

Տիկին Քանանյանը խեթեց:

— Իսկ դուք—արիստոկրատ: Ինչպես չե...

Յեվ մայր ու աղջիկ սկսեցին վիճել, առանց Վահանին նայելու, վոր բոլոր ժամանակ լուռ եր, և յերբ դիմեցին նրա ոգնությանը խնդիրը պարզելու, մայր ու քույրեր սարսափեցին—այնքան վայրենի կատաղություն, վախ և ատելություն կար այդ բոսային Վահանի աչքերում: Նա՛ գուցե զգած, զոգում եր. հրաբորբոք աչքերը խաղում եյին իրենց բներում:

Տիկին Քանանյանը վախեցավ. այդ բոլորը Վա-

հանի հիվանդության նշաններն եյին: Յեվ առաջին միտքը, վոր ծագեց մոր ու քույրերի գլխում—այն եր, թե հիվանդությունը «կրկնվում ե», ուստի և մայրն շտապեց վորդու ձեռները բռնել:

— Գնանք, Վահան ջան, գնանք,—ասավ՝ վորդու ձեռից քաշելով:

Վահանը, իր յերկար ու մեծ վերարկուի մեջ, տիղից չշարժվեց. նա շարունակում եր նայել պատկերին վախով ու ատելությամբ. մեկ ել, հանկարծ, հեքից նրա քթածակերն սկսեցին ուռչել, յերկար վազքից հոգնած նժույգի ուռնգերի նման, և նա, ինչպես միշտ, աջ ձեռքը բռունցք շինած, սկսեց սառսառ վոտից գլուխ՝ այնպես սաստիկ, այնպես տենդագին, վոր նրա ձախ ձեռքը ցնցվում եր մոր սառած ձեռում: Տիկին Քանանյանը, տեսնելով դրությունը յերկյուղալի յե դառնում, հայացքով ոգնության կանչեց աղջիկներին:

— Գնանք, Վահան ջան, գնանք այն կողմը,—ասին քույրերը յեղբոր թեղ մտնելով, և աշխատեցին քաշել նրան դեպի դուռը:

— Թողեք,—մռնչաց հանկարծ Վահանը հեռապառ, ամբողջ իրանով դեպի պատկերը ձգվելով,—թողեք. նա ուզում ե...

— Не смеј...—գոռաց նա ուռերեն այնպես բարձր և անարկու մի ձայնով, վոր այցելուները ցնցված իրարով անցան. մի քանիսը նույնիսկ առաջ կկան զարմացած: Մայրն ու քույրերը, Վահանի թեկերը ավելի ամուր բռնելով, աշխատեցին քաշել նրան դեպի դուռը:

— Խեղադար ե, —ասավ այցելուներից մեկը հաբեմանով:



— Ինչպես յերևում ե...

Մոտեցավ և հերթապահ նկարիչը՝ այլալված, ճաղատ գլուխը կարմրած:

— Ի՞նչ եր, ի՞նչ պատահեց, — հարցրեց նա վախեցած:

— Վոչինչ, վոչինչ, — պատասխանեց տիկ. Քանանյանն իրեն չկորցնելով, — վորդիս մի բիշ վատ ըզգաց իրեն:

Քույրերը քիչ եր ֆնում արտասվելին ամոթից. յեղբոր ձեռները բռնած՝ նրանք աշխատում էին չանել մի ախպիսի շարժում, վոր կարող ե անքաղաքավարի նկատվել: Այնուամենայնիվ, բարապանի ոգնությամբ, նրանք Վահանին դուրս բերին սրահից, միջանցքում ջուր խմեցրին և, կռք նստելով, վերադարձան տուն — տխուր-տրտում, ինչպես սգավորներ:

— Քուռանամ ես, քուռանամ, — գլուխն որորելով ասավ պառավ աղախինն ինքն իրեն, մինչև արմունկները քշտած, լվացքաշրտո ձեռներով դուռը նրանց առաջ բանալով: (Յեկողների տխուր դեմքից նա կըռահեց, վոր «եկի» բան ե պատահել): Յեվ յերբ բոլորը անխոս, Վահանին մեջ տեղ արած, բարձրացան սանդուխքներով, նա իր ցամաքած աչքերը հառեց դուռն արանքով յերևացող կապույտ յերկնքին ու քըրթմընջաց. — Տեր, քու դուռը բանաս...

\* \* \*

Այդ գիշեր Քանանյանների տանը վոչ վոք չբընեց համարյա:

Աղջկերքը շուտ-շուտ պատկերահանդեսի դեպքը հիշելով՝ աշխատում էին հիշել նաև այնտեղ յեղած

մարդկանց. տեսնես ռվքեր կային այնտեղ, ռվքեր տեսան իրենց այդ անհարմար դրության մեջ: Ու հիշելով այս կամ այն ծանոթ մարդուն, կնոջ, նրանց դեմքն ամբողջապես, մինչև ակտիվները, տաքանում եր ամոթից: Մտածելով Վահանի մասին, նրանք իրարից թագուն հառաչանքով՝ բացականչում էին:

— Ախ, յերբ պիտի մայիսը գա...

Յերկար ժամանակ խոհանոցում հառաչում եր և պառավ աղախինը: Իսկ ամուսինները ջուկ-ջուկ մտածում էին՝ չլինի վորդու հիվանդությունն իսկապես ժառանգական արմատ ունենա, ինչ վոր կարծում էին զանազան մարդիկ. երկուսն էլ, սակայն քըքրելով իրենց տոհմը — չէին հիշում նման դեպք: Հայրը — վորքան ել չեր ուզում հաշտվել այդ մտքի հետ — գտնում եր, վոր վորդին ցնորվելու նշաններ ե ցույց տալիս պարզապես, բայց իրեն միթարում եր նրանով, վոր լավ խնամքն ու ամարանոցը դեռ կարող են փրկել նրան: Իսկ մայրը յենթադրում եր, վոր Վահանն ուղղակի գրաբան ե և — իբրև նահապետական ընտանիքի դուստր — կարծում եր, վոր պետք ե այդ բանը փորձել իմանալու մի վորեւ գրեացի մոտ: Յեվ այս միտքն այնքան հավանական թվաց նրան, վոր նա անկողնից յենելով, վերարկուն խալաթի փոխարեն ուսերին քցելով, Վահանի սենյակից գնաց ամուսնու մոտ իր կասկածը հայտնելու... Փաստաբանը անկողնի մեջ՝ գլուխն ափին հենած, արմունկը բարձին, միտք եր անում աչքը լամպի իջեցրած լույսին հառած: Կիսամութի մեջ նա ավելի ծեր և ավելի մռայլ եր յերևում: Լսելով տիկ. Քանանյանի կասկածը՝ նա դուռ խնդաց կնոջ սնահավատության վրա և փոքր ինչ բարկացած նկատեց, վոր



լավ կանի, յեթե Վահանին այլա տնից դուրս չտանի:

— Ախ, վոտս կոտրվեր, վոտս կոտրվեր, չգնայի, — հառաչեց կինը ծնկներին խփելով:

— Այո, չպետք է տանել, — կրկնեց Քանանյանը մտազբաղ. — ինչպես յերևում է, զանազան տարվորություններ ազդում են...

Տիկին Քանանյանը թուլացած նստեց բազկաթոռին:

— Բա հիմի լինչ պիտի անենք, — հարցրեց նա հուսահատ, գրեթե ընկճված ձայնով:

Պատասխանը մարդու համար պարզ էր. պետք է տանը խնամել մինչև մայիս...

— Հետո, յես կարծում եմ ամեն բան լավ կլինի. դժվարը մինչև մայիսն է...

Տիկ. Քանանյանը մտածմունքի մեջ ընկավ:

Յեվ մարդ ու կին լուռ, յերկար մտածում էին կիսախավար սենյակում:

Բոլորից հանգիստ էր այդ գիշեր ինքը՝ Վահանը: Նրա սենյակը լուսավորված էր փոքրիկ գիշերալամպով, վորի թույլ լույսը հազիվ էր հասնում անկյունները: Վահանի դեմքը հանգիստավոր և համարյա ուրախ տեսք ուներ. ձեռք գլխատակին պառկած՝ նա հաճույքով մտածում էր, վոր գտել է, վերջապես, այն տեղը, ուր թափնվում է իր թշնամին և վորտեղից միշտ սուրը ձեռքին գալիս է և ուզում է իրեն սպանել: Իր այդ թշնամին, նրա կարծիքով, թափնված էր ցուցահանդեսում: Նա յեկել է այնտեղ պահվել, վորպեսզի իրեն սպանի. բայց այդ նրան չի աջողվի...

Յեվ Վահանը հաճույքով մտածում էր, թե քանի յերբորդ տնգամն է ահա իր թշնամին փորձում է ի-

րեն սպանել, բայց չի կարողանում. սկզբում միայն վիրավորեց, հետո յեկավ Մոսկվա, հիմա էլ յեկել է Թիֆլիզ՝ պատկերահանդեսում թագնվել... Ու թվում է Վահանին, վոր իր թշնամին դիտմամբ թափնվել է ցուցահանդեսում, վոր ավելի շատ մարդ սպանի, ինչպես անցած որն ուզում էր սպանել մորն ու քույրերին, բայց չկարողացավ, վորովհետև ինքը չթողեց: Յեկել է նա ամենից առաջ, իհարկե, իրեն սպանելու, իսկ իրենից հետո՝ արդեն բոլորին... Յեվ Վահանն ուրախությամբ մտածում էր, թե վորքան լավ է, վոր ժամանակին գտավ նրա տեղը: Պետք է ուրեմն շուտով, շուտով վոչնչացնել նրան, վորովհետև յեթե նա կենդանի մնա — կսպանի բոլորին, բոլորին... Ում վոր պատահի, ում տեսնի... Յե զուր տեղը անցած որը չըթողին, վոր ինքը խեղդեր նրան... Նա կարծում էր, վոր առհասարակ իրեն միշտ խանգարում են այդ բանն անելու: Խանգարում են ամենքը և, գլխավորապես, մայրը... Յեվ Վահանն այժմ էր մեջ այնքան ուժ էր զգում, վոր հաճույքով մտածում էր, յեթե թշնամին դա հիմա, ինքը հեշտությամբ կխեղդի նրան, շատ հեշտությամբ... Թող մի գա...

Մեկ էլ հանկարծ Վահանին թվաց, թե վոտի ձայն լսվեց, ու նայեց դեպի դուռը. նրա գունատ դեմքը ցնցվեց և յերկարեց հանկարծ...

«Թշնամին», պատկերահանդեսի ինքնագույն յերիտասարդը, սուրը կողքից կախ, կանգնել էր դրան մոտ և քմիծաղով նայում էր իրեն, ինչպես յերեխայի: Կուրծքը հպարտորեն դուրս ձգած՝ նա աչքերը փայլեցնում էր ուրախությունից և ժպտում մի քիսախնդիր ու չար ժպիտով: Վահանն զգույշ նստեց անկողնում,



հարձակվելու հարմար ղերք բռնեց և արհամարհանքով ու ատելությամբ նայեց նրան: Բայց **ԲԵՆԱՄԻՆ** իր դիրքը բոլորովին չփոխեց. նա շարունակում էր հեգնորեն ժպտալ:

— Ի՞նչու ես յեկել, — հարցրեց Վահանը, յերկար լը-  
ռությունից հետո, ուշադիր նայելով:

Քմծիծաղից թշնամու շութերն ավելի յետ գնացին,  
բացելով նրա սպիտակ ատամների շարքերը:

— Ի՞նչու ես ծիծաղում, — հարցրեց Վահանը  
բարկացած:

**ԹԵՆԱՄԻՆ** չպատասխանեց:

— Յեկել ես ինձ սպանելո՞ւ... Այո՞...

Այս անգամ թշնամին գլուխը շարժեց.

— Այո:

— Դու, յերեկ, ուզում ես սպանել և ծնողներիս:

**ԹԵՆԱՄԻՆ** նորից գլուխը շարժեց:

— Յե՛վ քույրերիս:

— Այո՞...

— Բոլորի՞ն:

— Այո՞...

Վահանը մերկ վոտները կախեց մահճակալից:

— Բայց յես չեմ թողնի, — ասավ Վահանը հը-  
պարտ. — ես քեզ ավելի շուտ կսպանեմ, քան դու բո-  
լորին:

— Լուռ քմծիծաղեց թշնամին և ձեռը տարավ  
դեպի սուրը, բայց Վահանը ցատկեց տեղից և աղա-  
ղակեց.

— Не сме́й!

Այդ բոպեյին սենյակի դուռը շրխոցով բացվեց  
և ներս մտավ տիկին Քանանյանը՝ սարսափահար դեմ-

քով: Ամուսնու մոտից գալու միջոցին նա լսել էր  
վորդու աղաղակը և կռահել, վոր ցավը կրկնվել է:

Մորը տեսնելով՝ Վահանն աչքերը թարթեց և  
շուրջը նայեց. **ԲԵՆԱՄԻՆ** չկար. չքայել էր: Այդ ժա-  
մանակ Վահանի կրծքից լսվեց մի լացախառն հառա-  
չանք:

— Ա՛խ, մամա, դու դարձյալ խանգարեցիր ինձ,  
դարձյալ... Դու միշտ խանգարում ես ինձ...

Ու սկսեց լաց լինել, ձեռքն աչքերին դնելով:  
Այլևս չհարցնելով թե — ինքն ինչով է խանգա-  
րում Վահանին, տիկին Քանանյանն աշխատեց հան-  
զըստացուցիչ խոսքերով պառկեցնել վորդուն:

Վահանը պառկեց, բայց չքնեց. նա շարունակ  
մտածում էր թշնամու մասին. ինչպես վոչնչացնել նրան,  
ինչպես իրագործել իր ծրագիրը, վոր վոչ վոք չխան-  
գարի իրեն, վոչ վոք...

\*  
\*\*

Առավոտյան ձյուն էր գալիս խոշոր-խոշոր փա-  
թիլներով:

Վահանը յեկավ մտազբաղ դեմքով. թեյի ժամա-  
նամ վոչինչ չխմեց. նախաճաշին նույնպես բան չկերավ:  
Մայրը, արցունքներն ու հառաչանքները հազիվ զըս-  
պելով՝ խնդրեց վորևէ բան ուտել. Վահանը մերժեց.

— Ինձ մի խանգարեք, մի խանգարեք, — կրկնում  
էր նա առանց գլուխը բարձրացնելու, ձեռները վար-  
տիկի գրպանները դրած, սեղանատանն անց ու դարձ ա-  
նելով. — Մի խանգարեք...

Ճաշին նմանապես՝ վոչինչ չկերավ: Տնեցիներին  
թվում էր, թե նա նիհարում է և ավելի է տխրել, քան



յերբեք: Յեւ կարծում էին, թե Վահանը տխուր է, գուցե, նրա համար, վոր ձյուն է գալիս: Իսկապես, Վահանին հետեողը պիտի նկատեր, վոր նրա տխրության պատճառը թերեւ ձյունն է, վորովհետեւ սեղանատնից իր սենյակը և այնտեղից սեղանատուն անցնելով, նա հայտնում էր շարունակ թափվող ձյունին և գլուխը շարժում հուսահատ. թվում էր՝ ցանկություն ունի դուրս գալու, բայց ձյունը խանգարում է: Իսկ ձյունը գալիս էր այնպես հանդարտ ու հանդիսավոր, վոր կարծես մի սրբազան արարողություն էր կատարվում ողում, և այնպես վարար, վոր ասես կտրվելու միտք չուներ բնավ. բակի ծառերը, ցանկորմերը, պատըշգամի ճաղերը և տանիքները վաղուց ծածկվել էին գգած քողբի պես փափրիկ ձյունով, վորը դեռ շարունակում էր իջնել խոշոր-խոշոր փաթիլներով:

— Գնանք, Վահան, ձնագնդի խաղանք, — դիմեցին քույրերը ճաշից հետո, յեղբոր տխրությունը ցրելու նպատակով:

Վահանը ձեռքը թափ տվեց միայն: — Չեմ ուզում:

— Ինչո՞ւ, Վահան... Գնանք...

— Մի խանգարեք, մի խանգարեք, — կրկնեց նա բարկացած և շարունակեց անց ու դարձելու, մտամոլոր ու համաչափ քայլերով:

Յերեկոյան դեռ ձյունը դադարեց, բայց Վահանի գունատ դեմքն ավելի լարված ու մտածկոտ տեսք ստացավ:

Գիշերը նա դարձյալ չքնեց: Իսկ հետևյալ առավոտ, թեյից հետո, նա, տնեցիների համար միանգամայն անսպասելի, վերարկուն հագնելով՝ ուղեց տնից դուրս գալ:

— Ո՞ւր, Վահան ջան, ո՞ւր, — կտրեց նրա առաջը մայրը միջանցքում. — ո՞ւր ես գնում ես ցրտին:

— Թո՛ղ, մամա, թո՛ղ, — նեղացավ Վահանը, դեմքը կնճռելով. — ուզում ես վոր ես մեռնեմ...

Այդ խոսքերն ասվեցին այնպիսի խղճալի ձայնով, վոր մայրը չիմացավ ինչ անել:

— Ինչե՛ր ես ասում, Վահան, ի՛նչեր ես ասում. ասոված վնչ անի, — ասավ նա, ասես մի անպատելի մեղադրանքից արդարանալով:

— Դե, թող ուրեմն...

— Ո՞ւր:

— Ցուցահանդես:

— Չե, Վահան ջան. չե-չե-չե... ցուրտ է կմրսես. մի գնա. չեմ թողնի. միասին կերթանք...

Յեվ տիկին Քանանյանը վորդու ձեռներից բռնած, կրճից հրելով, սեղանատան բաց դռնից բոթեց նրան ներս՝ թիկունքը դռներին դիպցնելով:

Վահանը, վոր մորը հակառակելու սովորություն չուներ առհասարակ, այս անգամ եւ համակերպեց նրա կամքին և, անխոս, վերարկուն հանեց նորից. և այն ժամանակ, յերբ մայրն ուզում էր կախել այն, հանկարծ նրա ծոցագրպանից զնգոցով ցած ընկավ մի շողողուն իր... Դանակ էր:

Ջարմանքից տիկ. Քանանյանի շուրթերը սեղմվեցին:

— Ես հացի դանակը քեզ մոտ ի՛նչ գործ ուներ, Վահան ջան, — հարցրեց նա, դանակը յերկու ձեռքով բռնած, միջանցքից սեղանատուն մտնելով:

Վահանն իսկույն չպատասխանեց:

— Ինձ մոտ... դանդաղեց նա և... դռնատվեց:



Պարոն Քանանյանը, վոր այդ րոպեյին, պենսնեն քթի կեսին դրած, լրագիր եր կարդում, հանկարծ ահագին շարժումով, ձեռը ծնկանը խփեց հուզված և ակնոցը վերցրեց:

— Տեսնեմ, տեսնեմ,—ասավ նա շտապ-շտապ, կարծես մի բան իմանալով:

Կինը դանակը մոտեցրեց մարդուն:

— Ա՛հ, դա երեկվա սրիկայի գործն է անպատճառ,— գլուխը շարժեց պ. Քանանյանը բարկացած. —վերցրել է և, փոխանակ իր ջերը դնելու, կոխել է Վահանի գրպանը: Черт беру: Յես այդպես ել կարծում եյի, վոր նա գող պետք է լինի...

Պարոն Քանանյանը ակնարկում եր իր մի տարորինակ այցելուին, վոր ահա յերեք շաբաթ եր ինչ, իրար վրա՝ ամեն հինգշաբթի՝ գալիս եր խորհուրդ հարցնելու իր ստանալիք ինչ-վոր մի խոշոր ժառանգության մասին և, վերջը, «փոխարինաբար» հինգ ուսուրի խնդրելով՝ հեռանում:

— Բայց միթե նա սեղանատնից անցավ,— հարցրեց տիկ. Քանանյանը յերկբայության մեջ:

— Կարծեմ,—ասավ պ. Քանանյանը և փոքր ինչ զայրացած ավելացրեց. —Խնդրում եմ—աղախնին ասեմ, վոր այլևիս ներս չթողնի այդ սև ակնոցով պարոնին:

Տիկին Քանանյանը կանգնած մտածումունքի մեջ ընկավ:

— Ուրեմն քո կալոշներն ել նա տարած կը լինի ելի,—ասավ կատակածանքով:

— Շատ կարելի չի...

Փաստորանն իր խոսքն սկսեց այնպիսի պոռթկումով, վոր տիկ. Քանանյանը հնարավորություն

չունեցավ վորդու պատասխանն իմանալու (մանավանդ վոր նա, սովորկանի պես, հորից քաշվելով՝ անցավ իր սենյակը), բայց հետո, այնու ամենայնիվ, նրա սրտում մնաց մի ծանր տարակուսանք, թե ինչպես կարող եր դանակն, իսկապես, ընկնել Վահանի վերարկուի գրպանը. յեթե գողն եր դրել, այդ դեպքում նա պիտի հագներ և Վահանի վերարկուն. թե՞ Վահանն եր իր գրպանը դրել. բայց ի՞նչու համար. դանակը Վահանի ինչի՞ն է պետք... Յեվ խեղճ կինը վոչինչ չեր կարողանում հասկանալ: Այդ ուրը, սակայն, մի բան պարզվեց նրա համար, վոր Վահանին չպետք է թողնել տնից մենակ յեկնելու: Ուստի և սկսեց հետեւել վորդուն. ո՞վ է իմանում, կարող է հանկարծ Վահանն իրեն դուրս գցել, և փողոցում ինչ ասես չի կարող պատահել: Տիկ. Քանանյանն առանձնապես վախենում եր «կրկնվելուց»: Խայտառակություն կը լինի, յեթե փողոցում ոտարները տեսնեն իրենց վորդու ցավազարությունը: Հիմա, յեթե տասը գիտի, այն ժամանակ արդեն բոլորը կիմանան... Ու նա աղջկերանց ևս պատվիրեց՝ յերեք Վահանին մենակ դուրս չթողնել տնից՝ յեթե պատահի վոր ինքը գործով ուրիշ տեղ լինի: Նույնը պատվիրեց նաև աղախնին: Պառավը, տիրուհուն խելով հառաչեց.

— Քոռանամ ես, քոռանամ,—և գոգնոցով սրբեց աչքերը.—Մի բան ասեմ տիկին, չնեղանաս... Լեզուս չորանա, քար դառնամ ես... Ձի՞ Վահանի ցավը խաչից է, տիկին... Յեվ նա ուղեց պատմել գիշերը տեսած յերազը, բայց մինչև կը պատրաստվեր այդ անելու, տիկին Քանանյանը, ուսերը տարակուսանքով վեր քաշելով, դուրս յեկավ խոհանոցից:



Իսկ Վահանը դարձյալ վոչինչ չէր ուտում, չէր քնում և քանի գնում նիհարում էր ու դառնում լուակ-  
յաց, ինքնամիտի: Զուր էլին անցնում տնեցիների  
ջանքերը, ու Քանանյանի համալսարանական ընկեր-  
բժշկի (վոր այժմ ամեն որ գալիս եր՝ իբրև թե տան  
բարեկամ) մտերմական խորհուրդները, — Վահանը վո-  
չինչ չէր ուզում լսել: Տեսնելով՝ չեն թողնում տնից  
յեկնելու, նա հուսահատ մտածում էր, վոր յեթե ինքը  
չչտապի — չէ՞ վոր նա՝ ԲԵՆԱՍԻՆ՝ կը գա և այսոր կամ  
վաղը, քնած տեղը կապանի իրեն, հետո կապանի  
մյուսներին, բոլորին և վերջը — քաղաքում վոչ մի մարդ  
չի թողնի: Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ չեն հասկանում այս բա-  
նը... Ու յերկար, անխոս կամ, շրթունքները կրծելով՝  
անցնում էր սենյակից-սենյակ:

Այսպես տեեց յերկու յերեք ուր, իսկ չորրորդ  
որը կատարվեց այն, ինչից տիկին Քանանյանը  
վախենում էր այնպես:

\* \*

Վահանն այդ որը տնից դուրս եկավ այնքան  
անսպասելի և այնպես ծածուկ, վոր վոչ-վոք, վոչ-վոք  
չնկատեց:

Առավոտյան թեյից հետո, յերբ հայրը գնաց դա-  
տարան, քույրերը հոր առանձնատանյակը՝ շուռ յեկած  
գրքերը կարգի բերելու, իսկ մայրը խոհանոց՝ աղախ-  
նին ճաշի համար խորհուրդներ տալու, — Վահանն,  
ինչպես փախչող մի կալանավոր, արագ-արագ հագավ  
վերարկուն և, գողի նման՝ թեթև քայլերով, մի շնչում,  
բակի մուտքով, իրեն պեց փողոց:

Յուրա եր. չորս ուր առաջ յեկած ձյունի մի մա-  
սը տակավին մնացել էր անհալ. սառած գետինը թըն-

դում էր կառքերի անց ու դարձից. սառինքը ձիերի  
մոռթից կախել էր բրդե թելեր. կառապաններն հա-  
գել էլին վոչխարի մորթուց խոր ձեռնոցներ: Չնայած  
ցրտին, փողոցներում, այնուամենայնիվ, շատ մարդ  
կար. բոլորն անցնում էլին վերարկունների ոճիքն ա-  
կանջներին քաշած կամ շարճերով փաթաթված, իսկ  
քաղաքային այգում, ուր չոր ծառերն ասես կուչ էլին  
յեկել ցրտահար, մի խումբ յերեսաներ՝ կապտած քը-  
թով ու ձեռներով, ձյունագնդի էլին խաղում՝ սառած  
որն իրենց ծիծաղով լցնելով:

Վահանն այս բոլորին անուշադիր, ցրտին ան-  
ըզգա, առաջ էր գնում շտապ-շտապ՝ շուտ-շուտ յետ  
նայելով, ինչպես հետապնդվող փախստական: Նրա  
խոշոր աչքերի թախծալից հայացքում դարձյալ հուր-  
հրատում էր այն հիվանդագին բոցը, վոր միշտ նի-  
շում էր նրա ցավի «կրկնությունը»:

Ո՞ւր էր գնում և ինչի՞ — դա նրա գաղտնիքն էր,  
վոր չէր ուզում հայտնել վոչ-վոքի: Կարծես մի ան-  
հայտ զսպանակից մղված՝ սլանում էր նա փողոցով և,  
ժամանակ առ ժամանակ, աջ ձեռքով շոշափում վե-  
րարկուի ձախ ծոցադրպանը, կարծես մի բան ստու-  
գելու համար:

Անցնելով մի քանի անշան փողոց ու փողոցակ՝  
նա դուրս յեկավ վերջապես գլխավոր փողոցը և քայ-  
լերն ափելի արագացրեց: Այժմ նա գնում էր գրեթե  
վազելով, ամբողջ իրանով առաջ թեքված, հրելով  
մարդկանց և հրվելով նրանցից, և մոլորուն, ասես մի  
բան փնտրող հայացքը միշտ հեռուն՝ դեպի առաջ՝ սե-  
վեռած: Անցորդները՝ նրա փուլկոտ շարժումներից հըր-  
ված, կանգ էլին առնում մի վայրկյան և զարմանքով



նայում նրա՝ այդ տարրերինակ յերիտասարդի յետևից, վոր «նեղողություն» անգամ չեր խնդրում: Յերբեմն ել նա խուսափում եր մարդկանցից, վոր չլինի, թե խանգարեն իրեն:

Ճանապարհի կիսին նկատելով ծանոթ մի դեմք՝ նա, կարծես վախեցած, շեղեց ճամբան, անցավ փողոցի մյուս ափը և շարունակեց նույն հապճեպ ընթացքը, մերթ ընդ մերթ ձեռն ելի դեպի ծոցը տանելով:

Փոքր ինչ ել գնալով՝ կանգ առավ պատկերահանդեսի շենքի առաջ և վերջին մի հայացք նետելով իր շուրջը, հափշտապ, ինչպես հարմար թագստոց գտած հալածական, ընկավ ներս:

Մարմարե աստիճանների վրա նա նորից ձեռքը տարավ դեպի ծոցը, նրա վոտքերը դողդողում ելին: Բայց և այնպես նա սաղնուխքները բարձրացավ ու դեպի սրահը նետվեց այնպիսի արագությամբ, վոր տոմսավաճառ կինն ստիպված եր ձայնել նրա յետևից.

— Տոմսակ, պարոն, տոմսակ...

Ինչպես գործով շտապող մեկը—Վահանը յետ անգամ չնայեց և, դուռն աղմուկով բանալով՝ մտավ ներս:

Յրտի, թե վաղ լինելու պատճառով, սրահում այդ որը այցելուներ քիչ կային. մի քանի որիորդներ՝ աղվեսի մորթիներով, յերկու ջահել տիկին և յերեք պարոն, վոր տիկիներին ծառայելու պատրաստակամության ժպտը յերեսներին, կանանց բացատրում ելին նկարների նրբությունը: Այդտեղ եր և հերթապահ նկարիչներից մեկը, այս անգամ հասուն հասակով մի մարդ, վորի գլխի մազերի կեսը արծաթագոծ ելին արդեն: Վորովհետև Վահանը ներս մտավ դռների աղմուկով ու արտակարգ շփերթ ձեռով—բոլորն ահամա

շրջեցին նրա կողմը և զարմացած իրար նայեցին, կարծես միմյանց հարցնելով թե՝ «Ո՞վ ե այս գիվահարը», — այնպես այլալված եր Վահանի դեմքն այդ րոպեին: Իսկ նա՝ Վահանը, մտնելով ներս, իր հրաբորբոք հայացքը պահ մի պտտեց սրահում, ապա, կարծես վորոշածը գտնելով՝ նետվեց դեպի դիմացի պատը, ուր շողշողում եր մի մեծ վոսկեգույն շրջանակ, իսկ նրա մեջ յերևում եր մի յերիտասարդ՝ մերկ սուրը ձեռին: Դա հենց նա եր, ինքը՝ Վահանի թշնամին:

Մի րոպե ևս — և սրահում յեղածները նկատեցին, թե ինչպես Վահանը ծոցից հացի մի դանակ հանելով՝ հարձակվեց նրա վրա.

— Ահա. այ քեզ, այ քեզ, — կրկնում եր նա ատամները սեղմած:

Որիորդներն ու տիկիները վախից ձչացին և նետվեցին դեպի դուռը. տղամարդիկ ապշոծ կանգ առան, իսկ հերթապահ նկարիչը վախվորած յեղավ տեղից և, չիմանալով ինչ անել, յերկու քայլի վրա յերեք անգամ յետ ու առաջ գնաց:

Այս ամենը կատարվեց մի քանի ակնթարթում:

Յերեք-չորս անգամ դանակը խրելով «Վրեժ» կտավի մեջ, Վահանը պատուտեց այն և մոնչաց մի խուլ, ոտարոտի ձայնով, վոր ասես դուրս յեկավ նրա սրտի խորքերից, սիրտը պատուտելով:

— Ահ, վերջապես...

Ու այս խոսքերի հետ, ամբողջ հասակով փռվեց հատակին:

Կանայք սարսափահար դուրս թռան սրահից, իսկ — հերթապահ նկարիչը վազեց սպասավոր կանչելու...

... Յերկու ժամ վորոշելուց հետո, տիկ. Քանանյանն ու մեծ աղջիկը Վահանին գտան պատկերահանդեսում:



Յենթադրու՞թյամբ—հարց ու փորձից նաև պարզվել  
 էր—վոր Վահանն յեկել է ցուցահանդեսի կողմը՝ մը-  
 տել եյին իմանալու:

Յե՛վ Վահանին գտան մեռած...

Նրա գունատ, անարյուն դեմքը զարմանալի  
 հանդիստ, պայծառ և միտամանակ հպարտ տեսք  
 ուներ:

Յերբ Վահանին փոխադրեցին տուն, վշտահար  
 հայրը չգիտեր ի՞նչ անել: Դիմելով բժշկին, վոր յեկել էր  
 մեռածին քննելու, նա կրկնում էր միայլար.

— Ա՛խ, բժիշկ, քաղաքը, քաղաքը սպանեց իմ վոր-  
 դուն... Նա չէր մեռնի, նա կփրկվեր, յեթե մայիսը շու-  
 տով գար...

1916.

ԺՈՒԿԱՅՈՒՄ



Յեթե անձրե չի լինում Յերեանի շուկան յեռում  
ե. իրար են խառնվում հարյուրավոր շլապա, ֆուրա-  
կա, ծլավոր փափախ, կեպի, փեղուցրով գլխարկ,  
պարսկական արախչի, ու հարյուրավոր շինեղ, կիսամուշ-  
տակ մորթուց, կիսամուշտակ թաղիքից, վերարկու՝ դա-  
ռան մորթու ոձիքով, ու ելի շինեղ, շինեղ... Գորշ, բազմա-  
տարազ, բազմաբարբառ բազմություն, վոր շարժվում,  
կանչում և աղմկում են անդադար: Ողի մեջ կանգնում եմի  
խուլ, անլուելի մամուռ, վոր ասես տարածվում, ծա-  
վավում ե հետզհետե, ինչպես այդ լինում ե ամառը  
մեծ մեղվանոցում՝ բոռախաղի ժամանակ:

Յեվ տնքում, նվում ու տրտնջում ե շուկան:  
Այստեղ ծախում են կարկանդակ, թթու կաղամբ, հին  
վոտնաման, այնտեղ՝ միրգ, բրինձ, փայտ... Ահա, ա-  
րևի տակ նախշուն, թաշկինակի վրա իր գարգերն ե  
փռել միրուքավոր հրեան — «հուլունք, գուլն-գուլն հու-  
լունք»... Նրա կողքին նիհար ու խանդոտ լվանեցին  
իր չիթն ե չափում, մյուսը թեյ ե առաջարկում շա-  
քարով և առանց շաքարի, մի ուրիշը, հենց այդտեղ՝  
յերկու քարի վրա յեփած, տաք կերակուրն ե գոլում,  
յերբորդը՝ հին շորերը...

Ու յեռում, զեռում ե շուկան... Բայց այժմ ամե-  
նից շատ ծախում են տնային իրեր. ծախում են ա-  
մենքը՝ քաղաքացի, զինվոր, արհեստավոր, դպրոցա-  
կան, տանտիկին ու աղախին, — բոլորը. իրար խառ-



նըված, միմյանց առաջելով՝ յուրաքանչյուրն աշխատում է վաճառել իր ապրանքը, և շուտով, շուտով հեռանալ... Պաշտոնական վաճառողները կանչում են, առաջարկում, սակարկում, բարկանում ու մեղմանում, իսկ անպաշտոն առևտրականները անթիվ են լուրջ են, մոտախոհ։ Սրանք վաճառքի են հանել ամեն տեսակ իր, վորոնք մի ժամանակ—գուցե հենց երեկ—նվիրական սրբություններ են յեղած ընտանիքի համար կամ հնոց ավանդներ՝ անձեռնմխելի... Բայց կարելիք զրանց բոլորին՝ այդ հին բազմոցներին, այդ նրբանկար գորգերին, հախճապակյա, նկարազարդ վազերին, այդ փառակազմ գրքերին, սամալսրներին—բոլորին, բոլորին տեղահան և արել ու բերել շուկա, իբրև մեծ ավերի ավար։ Յեվ զրանք բոլորը նայում են ձեզ իրենց տերերի պես տխուր, տերերի պես նըրանք ել իրենց անհարմար են զգում շուկայում, դժգոհ են և, կարծես, տրտնջում են. «Այսքան տարի ծառայել ենք և ահա»... Ու այդ ճաղավոր, վանդակավոր մահճակալները, այդ դեղին ու սպիտակ սամավարները, փայլուն հայելիները, թվում է, խուսափում են մարդու հայացքից կամ խնդրում մի հարմարենջարան, սեղանատուն, դահլիճ—հեռանալու այս փոշոտ, մարդաշատ, աղմկոտ շուկայից։

Մոտ յերեսուն տարեկան մի կին, գուցե և յերեսուն հինգ (կնոջ տարիքն իմանալը դժվար է), համենայն դեպս մոտ յերեսուն տարեկան մի կին՝ կարճ վերարկու հագած, գլխին սև թավիշե գլխարկ՝ յերկու մութ-մանիշակագույն վարդով, շուկայում կանգնած նայում է անցորդներին, նայում է վաճառողներին և կարմրում շուտ-շուտ։ Նրա թևին կա վոսկեթել ծոպե-

րով ու յեղրանախշերով թավիշե սփռոց, վոր թևին փռել է այնպես, վորպեսզի բոլորը տեսնեն։ Պարզ ե՛ ուղում է ծախել. բայց զարմանալի բան—չի կանչում, չի առաջարկում և մարդկանց նայում է այնպես, կարծես վախենում է կամ ամաչում է, վոր խանդարում է նրանց։ Նրա ձվաձեվ դեմքը հաճախ մթագնում է, խոշոր թուխ աչքերը տխրունակ փայլ են ստանում և ծածկվում յերկար թերթերունքներով։ Սակայն դա յերկար չի տևում։ Ընդամենը մի յերկու րոպե, և նորից աչքերը բանալով՝ նայում է անցորդներին սպասողական, ակնկալու նայվածքով։ Յերկրորդ ուրն է ահա, այդ տիկինը, նույն սփռոցը ձեռին, գալիս կանգնում է շուկայում. կանգնում է առավոտից մինչև կեսոտը, բայց վաճառել չի կարողանում։ Այսօր ել ահա, որը ճաշ է դառել և վոչ-վոք չի մոտենում նրան։ Շուրջը տղամարդիկ, կանայք, անգամ յերեխաները, շարունակ խոսում են, սակարկում, վաճառում են, դրամ են ստանում, դրամ են տալիս, և այդ ամենն անում են այնքան պարզ, հասարակ ու արագ ձևով, վոր զարմանում ու նախանձ է շարժում նրա մեջ, և իսկ շտանում է իր ամաչկոտության և անգործնականության համար. ինչո՞ւ ինքն ել չի կարող անել այդ բոլորը... Յեվ ավստում է, վոր չի կարող։

Ա՛խ, յեթե մարդը կենդանի լիներ—ինքն այստեղ լին՛ ուներ... Բայց յերեխաները... Հո՛ չի կարող նրանց քաղցած թողնել... Սկզբում՝ մի քանի ժամանակ ապրեց ամուսնուց մնացած դրամով, հետո ձեռնափոխ վերցրեց ծանոթներից, վորոնք այլևս չեյին տալիս (ասենք, իրենք ել չունեյին), ապա սկսեց տան իրերից ծախել հնավաճառներին այնքան չնչին



գնեցրով, վոր տանտիրոջ ամուսնացած աղջիկը զարմացավ.

— Ի՞նչ եք անում, տիկին Մարի, — ասավ, — վայ,

վայ, վայ... Ափսոս չեն ձեր իրերը...

Յեվ խորհուրդ տվեց ծախու իրերն անձամբ տանել շուկա, ուր կարող ե ավելի լավ, շատ լավ գնեցրով ծախել, ինչպես անում են շատ-շատերը: Յեվ ահա տիկին Մարին յերկրորդ որն ե շուկայումն ե: Առաջին որը նա նույնիսկ չեր վստահանում շուկա մտնել. բայց յերբ նկատեց իրեն հետ այրիացած մի ծանոթ կնոջ, վոր իր վերարկուն եր սակարկում ծախելու և մի քանի ճանաչ տիկիներին, վոր նույնպես շորեր եյին բերել ծախ, — նա փոքր ինչ վողի առավ:

Սակայն յերկու որ ե ահա, վոչ-վոք չի մոտենում իրեն: Ի՞նչ ե պատճառը: Գուցե այն, վոր լավ ե հագնված և մարդիկ չեն համարձակվում դիմել իրեն, մտածում եր նա. արժե՞ր միթե շուկա գալ վարդերով զարդարուն գլխարկով՝ կամ գուցե սեղանի յերեսն ավելորդ ե շատերի համար: Յեվ իսկապես՝ ինչի՞ յե պետք թավիշն սփռոցը, յերբ մարդիկ կարիք են զգում հացի... Բայց, այնուամենայնիվ, յեթե շնորհք ունենար՝ վարուց կը ծախեր. մեղավորն ինքն ե, միթե՞ չի կարող առաջարկել — «այ լավ սփռոց»... Յեվ տիկին Մարին մտովին հանդիմանում եր ինքն իրեն իր ամաչկոտության, թուլության համար, բայց քիչ հետո, ինչպես անում են այդ թույլ մարդիկ, զբաղվում եր ինքնարդարացումով: Ի՞նչ կարիք կա առաջարկելու. կույրեր չեն, չեն տեսնում թեին փռել ե ծախելու համար... Մի քանի անգամ փորձեց անցնել շուկայի միջով — սփռոցը ցույց տալու, սակայն ամոթի

պես մի բան նրան պահում եր նույն տեղում: Միև-նույն ե, մտածում եր նա, մարդիկ, այստեղից ել են անցնում. հետաքրքրվողը կնայի...

Բայց մինչև կես որ, վոչվոք չնայեց նրա սրփռոցին, իսկ կեսորին մոտ, յերբ արդեն անհամբեր եր դարձել և պատրաստվում եր հեռանալու, մոտեցավ մի պառավ և, չորացած տերևի նման ձեռներով, շոշափեց սփռոցը, շոյեց. «Ի՞նչ լաֆն ե», — ասավ ջրակալած աչքերով, ու լռելայն հեռացավ: Հետո յեկավ սուր-սուր բեխերով մի պարոն և յերկու քայլից աչքը քցեց սրփռոցին և նայեց տիկին Մարիին: Այդ մարդն ըստ յերևույթին, շոր գնող եր. թեին կային մի քանի հագուստներ, ձեռին մի կակուղ ձողիկ, վորով շուտ-շուտ խփում եր պատիշապատ սրունքներին: Աջ քունքին ունեւ կոպեկանոցի չափ և կոպեկանոցի պես կլոր կուչ յեկած սպի, վոր կարծես հենց կոպեկանոցով խաւանած լինեյին: Թե այդ սպին, թե սուր-սուր բեխերը, թե ձեռի ձողիկը և թե պատիշապատ սրունքները նըրան տալիս եյին հեծելագնդի պաշտոնաթող սպայի կերպարանք: Գուցե և սպա յեր, տիկին Մարին չեր կարող իմանալ: Ինչև ե, հեռվից նայելով՝ մի քայլ առաջացավ նա և նորից խորագնդին նայվածք ձգեց սրփռոցի ու տիկնոջ վրա: Տիկին Մարին թեթևակի շիկնեց: «Ուզում ե գնել յերևի», մտածեց և սփռոցը բռնեց ավելի ցուցադիր: Այս անգամ հնավաճառը մոտեցավ բոլորովին և տարորինակ ժպտով (այդպես թըվաց տիկին Մարին) հարցրեց.

— Ծախում եք:

— Այո:

Մարդը ուշադիր շոշափեց սփռոցը և կրկին ժըպտաց:



— Ինչպես յերևում ե՛ անող չկա, հա՛:

Տիկին Մարին կարմրեց.

— Վո՛չ, ինչո՛ւ չե՛...

— Յերկու որ ե ձեզ տեսնում եմ այստեղ, շա՜րունակեց մարդը ելի ժպտալով:

Տիկին Մարին չպատասխանեց, ավելի շուտ խոսք չգտավ ասելու:

— Տեսնում եմ առևտրի սովոր չեք, ավելացրեց հնավաճառը: Այնպես չե՛...

Տիկինը թույլ ժպտաց. իհարկե, առևտրական չե:

Հնավաճառը կրկին շոշափեց սփռոցը և գիպավ տիկնոջ ձեռին այնպես, պատահամբ, կարծես շոշափում եր սփռոցի շարունակութունը, ապա՝

— Քանի՞ յեք ասում, հարցրեց, ուղիղ տիկնոջ աչքերին նայելով և դարձյալ ժպտալով, վորի ժամանակ բացվում եյին նրա սպիտակ, գառան ատամները պես մանր ակռաները:

Տիկին Մարին համեստ գին ասավ, և սպիով մարդն, առանց առարկելու, համաձայնեց:

— Ենքան ել լավ տեսակի չի, ասավ, բայց առնում եմ, վորովհետև տեսնում եմ, վոր կարիք ունիք. այնպես չե՛:

Տիկինն ելի կարմրեց:

— Այո, իհարկե. կարիքը չլինի—չեյի ծախի...

Մարդը նորից ժպտաց ու վճարը տալու ժամանակ իր ամուր, կոշտ ձեռքերով բռնեց տիկնոջ ձեռը և սկսեց թղթադրամները մեկ-մեկ դնել նրա աջը: Տիկին Մարին ոտաբոտի եյին այդ հպումները, բայց նրան թվում եր, վոր այդպես ել պիտի լինի, առևտրի մեջ ձեռքի շփումն որենք ե, ինչպես սակարկութունը.

սակայն նրան զարմացնում եր այն, վոր հնավաճառը սփռոցը գնեց առանց սակարկելու. «Յերևի ցած գին տալի» մտածում եր. բայց ինչ ել ուզում ե լինի, սա ավելի լավ գին եր, քանի տալիս եյին շրջիկ հնավաճառները, վորոնց, իզուր, այնքան ապրանք տվեց չնչին գներով:

Սփռոցի գինը ստանալով՝ տիկին Մարին ել չը համբերեց. ճեղքեց շուկայի ամբոխը և յերեխաների համար հաց ու պանիր գնելով՝ շտապեց տուն: Նա գնում եր արագ և ուրախ քայլերով: Ուրախ եր նրա համար, վոր կարողացավ վերջապես սփռոցը ծախել, և նրա համար, վոր պանիր եր տանում յերեխաներին և նրա համար եր ուրախ, վոր հանդիպեց բարի մարդու, վորը մտավ իր դրության մեջ և չստիպեց ալիւրդ, ձանձրալի սակարկութուն անել:

\* \*

Տանը տիկին Մարին սպասում եյին յերկու փոքրիկ աղջիկ: Դրանք յոթ և հինգ տարեկան, շիկամազ և նապաստակի նման սրադունչ ու շեղաչք յերեխաներ եյին: Մեծը փոքրին դրել եր ուռազործ քառանիվ ձեռնակառքի մեջ և պտտում եր սենյակներում, կրկնելով «Նանա, բալիկ ջան, նանա»... Մորը տեսնելով՝ նրանք ցնծալից ճիչ արձակեցին և վազեցին ընդառաջ:

— Մամա, կատուշանց կատուն ձագեր ե բերել, ասին միաժամանակ խնդուն ձայներով: Ու ժպտալով, միմյանց ընդհատելով՝ սկսեցին պատմել, թե քանի հատ են այդ ձագերը և թե ինչպես են կույր-կույր ման գալիս:



Ու պատմելով՝ բոլոր ժամանակ ցնծում էին: Յեւ յերբ մայրն ուտելիքը դրեց սեղանի վրա, նրանք ավելի ուրախացան. «պանիր» բացականչեցին և սեղանի շուրջը նստելով նապաստակների նման, դունչերն իրար մոտեցրած, սկսեցին ուտել, ականջներն ու ծնոտներն անընդհատ շարժելով:

Մինչ յերեխաներն ուտում էին, տիկին Մարին վոգելորձած աջողակ առևտրից, նայում էր տան իրերը, տեսնելու, թե ել ինչ կարելի չե ծախել: Մանր բաներն արդեն ծախված էին: Աթոռներ, ափսեներ, բաժակներ և հին շորեր տվել էր շրջիկ հնավաճառներին. սփռոցը ծախեց այսօր: Ուրեմն ի՞նչ կարելի չե ծախել հիմա. հայելի՞ն—յերեխաները նայում են. ամուսնու մահճակալը—հիշատակ է. գրքերը և ճարտարապետական կառուցումների ալ՝ լոմը—նուշնպես: Յեւ, վերջապես, ո՞վ կգնի. ո՞ւմ է պետք... Նրա հայացքն ընկավ շորկախին: Չծախի՞ արդյոք ձմեռային վերարկուն... Ի՞նչ կա վոր, կարելի չի. մի ձմեռ ել ամառային վերարկու կհագնի: Այո, պիտի ծախել, վճռեց նա և մտածեց, ի՞նչ լավ կը լինի, յեթե նուշն մարդը հանդիպի...

Ուրեմն, վճռված է. ձմեռային վերարկուն վաղը ծախում է:

Գիշերը, ինչպես և ամեն գիշեր, տիկին Մարին հիշեց ամուսնուն իր կյանքի բոլոր շրջաններում. ուսանող էր թուխ բեղերով, յերբ հանգիպեցին այգում. սպիտակ քաթանե վերնաշապիկ ունեւ և կապույտ ծոպավոր գոտի. ժպտում էր շարունակ և հանաքներ անում... Ի՞նչ լավ էր: Յեւ տիկին Մարին հիշում էր ուշ յերեկոյան իրենց զրույցներն ամայի ծառուղիներ-

րում, մենավոր զրոսանքը գետի ափով, յերբ ունկընդրում էին ջրի խշշոցին... Հիշում էր նա միաժամանակ ծնողներին, վոր աշխատում էին, աշխատում և չէին կարողանում ծայրը-ծայրին հասցնել, հայրը պոստատար էր, մայրը կարանող... Այնպես վոր, յերբ ամուսնացավ ուսանողի հետ—յերջանիկ էր պզում իրեն: Հետո նա ավարտեց—դարձավ **սեխնիկ** և մտավ քաղաքային ծառայության... Այդ որվանից նրանց կյանքն անցնում էր հանգիստ, խաղաղ... և տիկին Մարին թվում էր, վոր իրենք մոտ են յերջանկության...

Բայց պատերազմի յերկրորդ տարին մարդն ըսպանվեց ճակատում, ուր գտնվում էր պաշտոնով, վորպես զորակոչի յենթարկված **սեխնիկ**... յեւ հինգ ամիս է անա, նա ապրում է մի որ ձեռնափոխ ուզելով, շատ որ տնային իրեր ծախելով: Վաղն ել կծխի ձմեռային վերարկուն... Յեւ տիկին Մարին կրկին հիշեց սպիտակ հնավաճառին. «նա յերեկ կառնի» մտածեց. այո, յեթե ուրիշ առնող չլինի, նա յերեկ կառնի...

Յեւ նախազգացումը տիկին Մարին չէր խաբում: Առավոտյան գնաց շուկա և վերարկուն ծախեց, ավելի շուտ՝ գնեց սպիտակ հնավաճառը: Հարցրեց գինը և տվեց այնքան, վորքան տիկինն էր ուզում: Բայց նախքան այդ, նրանք հետաքրքրական խոսակցություն ունեցան, վոր տիկինը չէր մոռանում մի քանի որ.

— Սա ձերն է, հարցրեց հնավաճառը վերարկուն դիտելով:

Տիկին Մարին նրան չհասկացավ. այո, իհարկե, ուրիշի ապրանքն ինքը չի ծախի:



— Յես այդ չեմ ուզում տեսլ, ժպտաց հնավաճառը.— յես ուզում եյի տեսլ միթե ձեզ հարկավոր չե... ինձ թվում ե, վոր սա ձեզ լավ պիտի սաղի:

Տիկինը շիկնեց:

— Յես ուրիշն ունեմ, ասավ:

Հեգնանք եր դա, թե սիրալիրություն—տիկին Մարին բան չհասկացավ: Յեվ լռեցին:

— Դուք այրի՞ յեք, տիկին, հարցրեց սպիտակ մարդը հանկարծ:

«Սա ինչի՞ համար ե», մտածեց տիկինը և գլխով արավ: Այո:

Հնավաճառը փորձ հայացքով նայեց տիկնոջը: Յեվ յերբ վերարկուն գնել եր, հարցրեց.

— Ել բան չունի՞ք ծախու:

— Ունիմ. բավականին ունիմ, ասավ տիկին Մարին շտապ, ուրախացած անակնկալ հնարավորությունից:

— Կարելի՞ յե իմանալ—ի՞նչ բաներ են:

— Ամեն տեսակ բան, ասավ տիկինը և թվեց իրերի մի շարք՝ սեղաններ, կաթսա, պահարան.— դուք կարճեք գնել:

— Յեթե տեսնեմ—գուցե:

Տեսնել՝ ինչու չե. տեսնել միշտ կարելի յե: Յեվ տիկինը տվեց իր հասցեն:

— Յեթե կուզեք, հենց հիմա գնանք, ասավ արագ, մտածելով, վոր հնավաճառը հետո կարող ե փոշմանել:

Բայց սպիտակ մարդը ժամանակ չունեւր. նա խոտացավ գալ յերեկոյան: Յեվ ժպտալով հավաստեացավ. հասցեն հո ճիշտ ե:

Տիկինը արգելք չունի. թող լինի յերեկոյան: Իսկ ի՞նչ վերաբերում ե հասցեյին— ճիշտ ե: Ուրեմն յերեկոյան... Յեվ տիկին Մարին, կասկածելով, դարձավ տուն: Ամբողջ ճանապարհին և տանը, բոլոր ժամանակ մտածում եր, թե հնավաճառը գուցե չգա, գուցե դա միայն խոսք եր, վոր ասավ: Բայց ի՞նչ լավ կլիներ, յեթե գար. կծախեր ավելորդ իրերը.— «ավելորդ»... (նա դառնությամբ խնդաց այս մտքի վրա) և մի առ ժամանակ կապահովեր յերեսանց հացը. թե չե սփռուցի գինը և այսորվա ստացածը հազիվ փոխերին բավականացնի. տանտիրուհուց, նրա աղջկանից, դերձակի կնոջից փոխ ե վերցրել մի քանի որով, բայց ահա մի շաբաթ ե չի տվել: Պիտի տալ: Փոխ ե առել ամուսնու ընկերոջից՝ պ. Դավթյանից. և ամսից ավելի յե չի վերադարձրել... Ախ, ինչ լավ կլիներ, յեթե հնավաճառը գար. ուրիշը չե, բայց դա՛ այդ սուր սուր բեղերով, սպայի նմանող պարոնը լավ մարդ ե յերևում: Գնում ե առանց սակարկելու, մարդու գրության մեջ ե մտնում... Մտածելով տիկին Մարին յերեսաներին հայտնեց, վոր հիմա մարդ ե գալու իրենց իրերն առնելու: Յեվ ծախու իրերը մտքում թվելով հայտնեց նորից, վոր մտադիր ե ծախել և ուռազործ ձեռնակառքը:

— Հա, չե. իմ կալասկեն մի ծախի, լացակմեց փոքրիկ աղջիկը խմորի պես փափրիկ թաթը աչքին դնելով.— Յեմ ուզում...

Մեծը նույնպես դժգոհ եր. նա վարի շուրթը կտրած՝ լռեց միայն: Տանը ամեն բանից ավելի նրանք սիրում եյին ձեռնակառքը: Մոր բացակայության ժամանակ, թե տանը յեղած միջոցին, մեծը միշտ փոքրին



դնում եր նրա մեջ և պատում սենյակներում: Յեւ  
ուրախանում էին յերկուսն եւ: Դա սովորել էին  
հորից: Նա եւ աղջիկներին փոխեփոխ նստեցնում եր  
կառք և զրոսեցնում սենյակներում, պատշգամբում,  
բակում:

— Յե, իմ կալասկեն, ցեմ, կրկնեց փոքրիկը մի  
քանի անգամ և հանկարծ, բազի պես որորվելով՝ գը-  
նաց բռնեց ձեռնակառքը, վոր զըված եր ննջարանում:  
Մեծը լռելյայն համաձայն եր փոքրիկին:

Մայրը ծիծաղեց. — Չեմ ծախում, չե. հանաք եմ  
անում...

Երեխաները հանգստացան. և մեծը, անմիջապես,  
փոքրին կառք նստեցնելով՝ սկսեց պտտել սենյակնե-  
րում: Տիկին Մարին զղջաց յերեխաներին՝ վշտացնե-  
լուն համար և նորից նոր սկսեց աչք ածել սենյակ-  
ները, տեսնելու, թե բացի սեղանները, ամանեղենը և  
պահարանը եւ ինչ կարելի չե ծախել: Չե, հայելին  
չե—յերեխաները նորից լաց կլինեն: Ծաղկամանները,  
ինչո՞ւ չե: Բայց կառնի՞... Նո՛ւ, ինքը կառաջարկի.  
գուցե առնում ե... Մի քանի բոլորի մեջ նա հաշվեց  
վոր հիշված իրերի հետ նա կարող ե ծախել և ուրիշ  
մանր բաներ, և այդ բոլորից կստացվի յերկու ամ-  
սըվա, գուցե ավելի, տպրուստ...

Մինչև յերեկոն կիջներ—նա գնաց հայաթավոր-  
ների՝ փոխերը վերադարձնելու, և տուն յեկավ մի  
չնչին գումար ձեռին, նորից կասկածների մեջ. կըզմ  
հնավաճառն արդյոք, թե՞ չի գա: Ու քանի որը յերե-  
կոյանում եր—Մարին ավելի անհանգիստ եր դառ-  
նում. կզմ թե վոչ. գուցե ուրիշ տեղ գնա կամ մի  
բան պատահի...

Բայց հնավաճառն ըստ յերեւոյթին իր խոսքի  
տերն եր: Որը նոր սկսել եր մթնել—յեկավ: Այժմ  
նա ավելի գեղեցիկ եր յերևում. գլուխն ու յերեսը  
նոր եր փաքել հավանորեն, վորովհետեւ դեմքին փո-  
շի կար, իսկ այտերին և քթի վրա մազի կտորներ:  
Ներս մտավ կակուղ ձողիկը ձեռին, հարգանքով բա-  
րեց տիկնոջը և ձողիկով խփեց վտանքին՝ ծընկ-  
ներից ցած, ինչպես անում են ձիավորները: Յերե-  
խաներ հետաքրքիր նայեցին նորեկին. սպին իսկույն  
գրավեց նրանց ուշադրութունը և մի առ ժամանակ,  
յերը նա խոսում եր մոր հետ, նայում էին նրան և  
մորը, կարծես հարցնելով թե ինչու ե յեկել այս մար-  
դը: Մայրը նկատեց յերեխաների տարակուսանքը:

— Քեռին յեկել ե, Մանիկ, քո կալասկեն տա-  
նելու, ասավ, զիմելով փոքր աղջկան:

Երեխան կրկին լացակումեց, նորից վազեց դե-  
պի կառքը և քաշ տվեց այն դեպի պատշգամ: Մեծը  
հետեց նրան:

Հնավաճառը ժպտաց մանր ատամները բանալով:

— Չե, չե, հանաք եմ անում, հանգստացրեց տի-  
կինը յերեխային և սկսեց մի առ մի ցույց տալ ծա-  
խու իրերը: Ծաղկամանները ծաղիկներով դուր յեկան  
սպիտակ մարդուն. նա մինչև իսկ հոտոտեց սպիտակ  
մեխակը: Սեղանները—կարող ե գնել, ավաններին—  
մուշտարի կգանի:

— Ընտիր բաներ են, գիտե՞ք,—գովում եր տիկինը  
աճապարանքով. — Շատ լավն են...

— Տեսնում եմ, ժպտում եր հնավաճառը ատամ-  
ները բանալով, և կոպեկանոցի նման սպին լայնանում  
եր քունքի վրա:



— Իսկ այստեղ պահարանն է, շարունակեց տիկին Մարին կից սենյակը մտնելով և բանալիի համար գրպանը խառնելով:

Հնավաճառը աչքերը այս ու այն կողմը հառելով հետևեց նրան:

— Ընտիր պահարան է, ասում եր տիկինը և փորձում եր դռները բանալ. — Ընկույզի փայտից է և լավը: Նայեցեք, ասավ, դռները բանալով: Ու դռն մեկը բռնած՝ ցույց տվեց ներսը, գլուխը գրեթե պահարանի մեջ կոխած:

Հնավաճառը մոտեցավ բռնեց պահարանի մյուս դռնից և նույնպես նայեց ներս, ուր կային մի քանի ափսոսներ, մուրաբի վազեր, աղամաններ, գդալներ:

— Միթե ընկույզ է, գարմացավ, և դուռը վրա բերելով՝ գլուխը համարյա մոտեցրեց տիկնոջ գլխին. — Ընկույզ է, ասում եք...

— Այո, ընկույզ, ասավ տիկինը արագ, աջ այտի կողմը զգալով տաք շնչառություն:

Ու հանկարծ — անսպասելի բան, պահարանի դուռը ավելի վրա յեկավ և տիկինն այս անգամ, տաք շնչառության փոխարեն, տջ այտի վրա զգաց տաք համբույր, ու սուր բեղերը քսվեցին նրա յերեսին:

Տիկին Մարին, ոձի կծածի պես, յետ ցատկեց պահարանից:

— Անամթ, ասավ հուզված և հուզմունքից խուլ, խեղդվող ձայնով, այնպես, վոր յերեսաները չլսեն, և ավելի յիտ-յետ գնալով՝ շարունակեց բարձր. — Վոչ, վոչ. վոչինչ չեմ ծախում. վոչինչ չեմ ծախում, կարող եք գնալ... Ու ավելացրեց ձայնի իջեցնելով. — Ամթ, ամթ ձեզ...

Հնավաճառը խնդուն, ներողամտությամբ նայում եր տիկնոջ:

— Ինչո՞ւ, տիկին, դուք այնքան ջանել եք, — խոսեց ժպտալով, կամաց և ապա շարունակեց բարձր. — Ձեք ծախում. ձեր բանն է — և ժպտալով՝ գնաց դեպի տիկինը, — դուք այնքան ջանել եք, տիկին, — ասավ ցածր և ձայնն ելի բարձրացնելով՝ ավելացրեց. — Ես բոլորը կառնեմ, տիկին, բոլորը... Մի բարկանաք խնդրեմ, միայն գինն ասեք...

— Վոչ-վոչ. վոչինչ չեմ ծախում... Դուք անամթ եք...

Հնավաճառը ժպտում եր, և նրա աչքերը փայլում էին:

— Ուրեմն չեք ծախում: Վոչ:

— Վոչ, պատասխանեց տիկին Մարին կտրուկ. — Հեռացեք...

Մարդը ձողիկը վտաններին խփելով՝ դուրս յեկավ ժպիտը դեմքին: Պատշգամում ժպտաց յերեսաներին, վոր խաղում էին կռքով, և անհայտացավ: Իսկ տիկին Մարին միայն տեղում կանգնած՝ նայեց հեռացող հնավաճառին, նայեց ամուսնու պատկերին, վոր կախված եր պատից, և նստեց բազմոցին:

Յերը քիչ հետո յերեսաները ներս մտան — մայրիկը լալիս եր: Սրանց տեսնելուն պես, տիկին Մարին բռնեց յերկսին ել, համբուրեց և շարունակեց լալ:

Վորքան ել աշխատում եր զսպել իրեն յերեսաների մոտ, չեր լինում, ու լացի հետ միաժամանակ կըրկնում եր արցունքների միջից, «Ձե, վոչինչ չեմ ծախս նրան, վոչինչ»:

— Իմ կալասկին ել, մամա, մի ծախի, ասավ փոքրիկն աղերսաձայն, մորը փարվելով:



— Ձե, Մանիկս, չե, պատասխանեց մայրը և ըսկսեց արագ համբուրել աղջկա գլուխը, այտերը, ճակատը.— Ձեմ ծախի...

Յերեխաները տարակուսած էյին. ինչո՞ւ եր լալիս մայրիկը:

\*  
\*  
\*

Հետևյալ որը տիկին Մարին իրեն այնքան վատ եր դգում կատարված դեպքից, վոր շուկա չգնաց, բայց հաջորդ որը ստիպված եր գնալ, և հենց շուկայի յեզրին հանդիպեց սպիով հնավաճառին. սա խոր գլուխ տվեց, ելի ժպտաց սիրալիք, սակայն տիկին Մարին յերեսը թեքելով՝ ցույց տվեց, թե իբր չի նկատում: Թե այդ և թե հետագա յերկու-յերեք որը համարյա նման էյին իրար. ինչ ել տանում եր շուկա—չեր ծախվում: Մուրաբի վազերը ծիծաղ հարուցին: «Հացը ճարել ենք—մուրաբան ե մնացել» ասով մեկը. իսկ նկարներին վոչվոք չնայեց: Նույնպես վարվեցին և գինու բաժակների հետ: Տիկինը հուսահատ՝ չգիտեր ինչ անել: Ձեռի փողը հատնում եր: Յերեք Փուշտ հացը իջեցրեց յերկուսի. ինքը վոչինչ չեր ուտում, և յերեխաների հրավերին միշտ պատասխանում եր. «Դուք կերեք, ես կերել եմ, կուշտ եմ»... Այսպես անցավ շաբաթից ավելի, վոչինչ չկարողացավ ծախել. և յերեմն, մանավանդ գեղերները, յերբ քուն չեր գալիս աչքերին, նա հանդիմանում եր իրեն անխոհեմություն համար, վոր իրերն իդուր չավեց սպիով հնավաճառին, յերբ նա այնպես տրամադիր եր բոլորն առնելու: Ու ափսոսում եր, վոր կորցրեց այդ հնարավորությունը, վոր դուրս աբավ նրան: Իդուր, բոլորովին իզուր... Բայց ինչպես, ինչպես դուրս չաներ այն լրբին, յերբ համարձակվում եր տան մեջ... վոչ, այդպես ել հարկավոր եր... Ո՛հ, նա

այնքան անամթն ե, վոր դեռ յերկրորդ որն ել բարևում ե... Յեվ ամեն անգամ տիկին Մարին ինքնահանդիմանություններն ու ինքնարգարացումները վերջացնում եր վաղվա մասին մտածելով, ինչ կարելի չե վաղը շուկա հանել: Բացի խոշոր իրերից՝ սեղաններից, պահարանից, ամեն ինչ տարել ե—չեն գնում. այնքան այդպիսի մանր բաներ կան ծախու. վոչինչ գնեն: Յերկու որ առաջ նա տարավ նույնիսկ ամուսնու ալբոմը՝ ճարտարապետական շենքերի—վոչվոք չմոտեցավ:

«Իսկ վաղը, վաղն ինչ կարելի չե տանել» մտածում եր տիկին Մարին և չգիտեր ինչ անել: Նորից հիշեց հնավաճառին, նորից ափսոսաց կորցրած հնարավորությունը. հազիվ աջողվել եր գտնել մի գնող, այն ել... Ու մտածեց. յեթե վաղը շուկայում հնավաճառը կրկին բարևի իրեն, առիթը չպիտի փախցնել: Պետք ե ուղղակի խոսք բանալ և ասել, վոր միտքը փոխել ե, այժմ իրերը ծախում ե. յեթե ցանկանում ե՝ թող գա: Բայց այս անգամ ինքն առաջվա պես անըզուշ չի լինի և գլուխը նրա հետ պահարան չի կոխի: Ինքը պետք ե իրերը ծախի մեկին—թեկուզ դա լինի սատանա: Բայց կըգնի՞ արդյոք. չի՞ փողմանել... այնու ամենայնիվ՝ ինքը կասի:

Յեվ հետևյալ որն առավոտյան, յերբ տիկին Մարին դարձյալ շուկա յեր դուրս յիկել, սպիով հրնավաճառն ելի միքանի հին շոր թևին քցած, ձողիկը ձեռին՝ յերևաց, հայտնի չե վոչտեղից, և առաջվա նման խոր գլուխ տվեց տիկնոջն այնքան մոտից, վոր տիկին Մարին չեր կարող այլևս անտես ձևանալ, մանավանդ, վոր ներկա էյին շատ մարդիկ:



— Ձեր իրերը ծախեցի՞ք, տիկին, հարցրից նա ձողիկով պատիճապատ սրունքներին խփելով:

— Վե՛հ, պատասխանեց տիկինն ատամների ա-  
րանքից և աշխատեց խոսակցին չնայել:

— Դուք գի՛նը չասի՞ք. մենք գուցե՞... գուցե հար-  
մարվեյինք...

Տիկինը չպատասխանեց. չարժե պատասխանել  
մի մարդու, վոր իրեն պահել չգիտե:

Հնավաճառը, ներքին շրթունքը ատամների տակ  
դրած, քիչ էլ կանգնեց պատասխանի համար և սպա  
հեռացավ, ձեռի ձողիկը շարունակ վտառնել խփելով:

Տիկին Մարին այս անգամ շուկա յեր բերել իր  
ամառային կտավերես կոշիկները: Յերկա՛ր մարդ չե-  
ր մոտենում, վերջապես յեկավ ատամները բաց մի տը-  
ղս. նայեց, տնտղեց և շուրթերը բաց ատամների վրա  
սեղմելով՝ մըթմըթաց հեգնանքով. «Ձեռը ամառային  
կոշիկներ»... Յեվ այնուհետև մինչև ճաշ՝ մեկը չնա-  
յեց կոշիկներին. մինչդեռ նա մեծ հույս ուներ դրան-  
ցով մի քանի որվա հաց, փայտ գնելու... «Իսկապես,  
փետրվարին ո՞վ կտոնի ամառային կոշիկներ» մտա-  
ծեց, լավ չե՛ր լինի՞ ուրիշ բան բերեր... Բայց ավելի  
լավ չե՛ր լինի սպիտակ մարդուն կարգին պա-  
տասխան տալ. գուցե ելի նա գներ: Յեվ առ-  
հասարակ յեթե խոսեր հետը՝ գուցե գներ և բոլոր ի-  
րերը, պահարանը, բանը... Ո՛հ, ինչ անքաղաքավարի  
յեղավ. չպատասխանեց հենց մարդկանց ներկայու-  
թյամբ... Լավ առիթ եր. նա ինքը խոսք արեց իրերի  
մասին, ուրեմն կարելի յեր հեշտությամբ տառապանք  
իսկ հիմա արդեն... Նա խռով կը լինի. դժվար է...  
Ախ, կուպիտ վարվեցի, մտածեց, շատ կուպիտ... Յեվ

հանկարծ կորած, մոռացված մի զրույց հիշեց, հիշեց ում  
վոր խոսքերը, վոր ասում եր թե՛ առանց ստի և կեղ-  
ծիքի առևտուր չի լինում: «Իսկապես, մտածեց, — ա-  
ռևտրական աշխարհում պիտի վարվել խմանալ»... Բայց  
ի՛նչպես հիմա խոսակցություն սկսել նրա հետ, կամ՝  
այժմ նա այստեղ շուկայում կլինե՞...

Յեվ մի քանի բոպե անց՝ տիկին Մարին արդեն  
վորոնում եր սպիտակ հնավաճառին: Սպիտակ կոշիկները  
բարձր բռնած՝ անցավ հին կոշիկ ծախողների մոտով,  
հետո հին զրքեր վաճառողների առջևից, շրջեց հագուստ-  
ների և տնային իրեր ծախողների շրջանը, ուր գա-  
նաղան ձայներ, զանազան ձևերով, իրար խլացնելու  
չափ բարձր, առաջարկներ ելին անում անցորդներին.  
Հնավաճառը չկար վոչ մի տեղ: Բայց այնքան մարդ  
կար, վոր նա ստիպված՝ ուշադիր նայում եր ամեն  
խմբի: Չկար: Չե՛ր յերևում: Նորից յետ դարձավ  
նույն ճանապարհով և, հազիվ հասել եր նախկին տե-  
ղը, նկատեց նրան: Տիկին Մարին սիրտը գործեց ա-  
րագացած ժամացույցի պես: Ի՛նչ խոսել. ի՛նչպես խո-  
սել. կսկի՞ արդյոք... Պիտի փորձել... Շուկա գալն էլ  
դժվար եր թվում, բայց յեկավ:

Յեվ նա անտարբեր մոտեցավ հնավաճառին,  
այնպես, իբր թե անցնում է:

— Դուք ուզո՞ւմ եք պահարանը, բանը, ասավ  
ելի անտարբեր, իբրե թե ի միջի այլոց:

— Այո՛:

— Ուրիշ ուզո՞ղ ել կա...

— Ուրեմն՝ ծախում եք:

Նա ստեց, հիշելով, վոր «առևտրական աշխար-  
հում» պիտի «ստի ու կեղծել»:



Հնավաճառը թեթե խնդաց և ձողիկով խփեց  
վռաներին:

- Իսկ յե՞րբ տանը կլինեք, վոր գամ: հարցրեց:
- Հենց հիմա գնում եմ, այս կոշիկները ծախեմ

ու...

- Ինձ չե՞ք տա դրանք:

- Խնդրեմ...

Հնավաճառը գնեց սպիտակ կտավերես կոշիկները,  
տվեց տիկին Մարիի մուգած գուճարը և յերկուսով մի-  
ասին գնացին տուն: Տանը գնեց նաև պահարանը,  
սեղանները և մյուս մանր իրերը այն գներով, ինչ  
նշանակեց ինքը՝ տիկին Մարին:

Իսկ այժմ, շաբաթը մի կամ յերկու անգամ, նա  
գալիս է տիկնոջից նորանոր իրեր գնելու: Տիկին Մա-  
րին ընդունում է նրան հաղաքավարությամբ, իսկ  
յերեխաները նրան «քեռի» յեն ասում: Բայց մի բան  
տարրերնակ է թվում նրանց՝ յերեխաներին, վոր քե-  
ռու գնալուց հետո, մայրիկը միշտ լաց է լինում...

1921. ✓

ԶՐՀՈՐԻ ՄՈՏ



...ես, ինչ վոր պատմում եմ—Ավստրու կողմն եր: Շարթից ավելի, առավոտ, իրիկու կովում եյինք: Ցերեկը հանգստանում եյինք շոգի պատճառով—առավոտ, իրիկուն կրակում... Մին ավստրացիք եյին առաջ գալի, մին մենք եյինք վրա տալի, բայց միշտ ենպես եր ըլում, վոր ֆնում եյինք ելի մեր տեղերում, մեր հին զիրքերում: Բաց, դուրսն տեղ եր. հերիք եր զուխներս բարձրացնեյինք—իրար տեսնում եյինք, իսկ գութինով հո—վոնց վոր առաջիդ: Մեր ու ավստրացոց արանքին մի տուն կար միայն, մի մեծ տուն, յերկու հարկանի, կտուրը յերկաթած: Կալվածատիրոջ տունն է, ասում եյին. նրա գաչան եր, ինչն եր... Առաջին ել պարտեղ կար, սիրուն ճաղավոր պարիսպով: Ենքան մոտիկ եր, վոր—բոլորը տեսնում եյինք: Դրա մոտ ել մի ջրհոր կար՝ յերկար փետով (են վոր ուսները ծուրավ են ասում): Ինչքան եյինք ծածաղում եղ փետի վրա... Եղտեղ՝ կովից ամեն բան՝ տունը, ծառերը, ախպեր, կուչ են յեկել կարծես, ուզում փախչել, թագնովել, բայց եղ փետը—եղ ծուրավը՝ մենմենակ տնկվել են՝ զաշտի մեջ ու զունչը մեկնել յերկրնքին: «Աղոթում ե»,—ասում եյին տղերքը: «Ձե, մեզանից խոսվել ա, պանգատ ա անում»: Մթամ Աստործուն: Մի քանիսն ել թե՛ «Մեզ բանի տեղ չի դրնում. ինչքան ուզում եք կրակեցեք, ինձ բան չեք անի, ասում ե»: Ու մենք կրակում ենք, մի-մին ել



հանաքով նշան եյինք բռնում դրան, բայց նրա համար՝ հեշ...

Ու եսպես շաբթից ավելի... Կրակում ենք, կրակում, բայց արեւը բարձրանում եր թե չե—կրակոցը յերկու կողմից ել դադարում եր:

Կռիվը՝ կռիվ, եղ արեն ել մի կողմից եր նեղում մեզ: Բաց դաշտ, ամառվա շոգ որ—Չուր ել չկա: Մի բռնկա Չուրը, խնայելով, խմում ենք յերկու որ. որակաւ մի բակլաւակա—վոնց վոր ուղտին գդալով ջրես...

Մի որ ել, ըհը, Չուր չկա... Բռնկեն ել ե հատել, բակլաւակեն ել... Ծարավից տղերանց բերանը բաց ա մնացել հավերի պես... Լեզուներս կպել, չորացել ե... Գիտեք ելի, յերբ մարդ ծարավ ե, վոնց ե ըլում. «Այ, մի քիչ ջուր հա» ասում ենք իրար: Բայց վո՞րտեղից... Բռնկեն գնացել եր ու մի որ եր չկար: Բըռնով եր, ձին եր ընկել, ինչ եր պատահել—չկար... Մեր բախտից ել ավստրացիք չեն շարժվում, թե չե մի հայ անեյին՝ իրենց գերին եյինք—ենպես եյինք թուլացել... Մենակ մենք չենք ենպես. մեր վաշտապետն ել պակաս չի մեզանից: Տեսնում ենք շուտ-շուտ ավստրացոց կողմն ե նայում, պոռչները չպպացնում ու «չորս վազմի», ասում ե, «յերբ պիտի Չուրը բերեն»:

Դա բեղերը նոր ծլած տղա եր, ուսուղենք, բերել եյին աճիցեր: Լավ, դարդիմանդ տղա եր, հասկացող, հանաքչի. բոլորիս հետ ել լավ եր: Իրան ել վասիլի վասիլի եյին ասում: Դա նայեց, նայեց ավրատրացոց կողմը, մին ել թե՛ «Չորս վազմի», գոնե ես ջրհորը մոտիկ ըլեր... Մենք ել նայում ենք ջրհորին ու գարմանում, վոր Չուրն եսքան մոտիկ ե ու տնկարելի, հեռու... Ծարավ մարդիկ ու ջրհոր... Նայում ենք, վոնց վոր սովածը հացին...

— Բա Չուրն եսքան մոտիկ ըլի ու մենք եսպես ծարավ, ասում ե տղերանցից մինը:

— Եղ ասի ե, խոսեցին տղերքը:

Սոսում ենք ու ջրհորին նայում, վոնց վոր սովածը հացին:

Իսկ մեր վաշտապետը պոռչները չպպացնում ե ու շարունակ: «Չորս վազմի, չորս վազմի»...

Տեսնում ենք—խեղճը ինքն ել ե տանջվում ծարավից:

Սոսում ենք, մին ել տղերանցից մինը թե՛

— Այ, մեկը ըլեր եղ ջրհորից Չուր բերեր հա...

Ու սկսվեց: Ամեն կողմից վրա տվին.

— Տղերք, ո՞վ կարա իսկապես...

Ասում են ու իրար նայում: Ասում են ու վաշտապետին նայում:

— Յեկեք մեզնից մինը թող գնա...

— Գժվել եք, ինչ ե, նրանք ենտեղ նստած (այսինքն ավստրացիք), ասում են, ճանճ ել ժած դա կտեսնեն...

Մինն ել թե՛—Յեկեք փորձենք:

— Այ տղա, ձեռ վեր կալեք, ասում են, շանսատակ կանեն: Մի քանիսը թե՛ փորձենք, մի քանիսը՝ թարկը տվեք: Վերջը թե՛ անպատճառ, ինչ ել ուզում ե ըլի—պետք ե գնանք: Բա ո՞վ գնա, ո՞վ չգնա... թե՛ յեկեք վիճակ քցենք: Յերսուն-քառսուն թուղթ փաթաթեցին ու լցրին մի փափախ: Դեն, հանեցեք... Հանեց սա, հանեց նա—մի ութ, իննը մարդ, վրա տասը, տերդ խնդա Բաղդասար, վիճակն ընկավ ինձ:

«Դե, գնա հիմի, ասում եմ ինքս ինձ, այ քեզ ոյին, յերկու տարի ազատվեցիր կրակից, հիմի արի ջրի ճամփին մեռի... Եսպես ել սարսաղութ լին»...



Բայց ընկերական բան ե, ի՞նչ պոփ անես. ընկել ե պոփ կատարես:

— Դե, արբի գնա, արբի գնա, ասում են:

Իսկ յես ժաժ չեմ գալի. դեռ կարծում եմ հանաք ե: Թուղթը ձեռիս շուռ եմ տալիս դեռ ու դեն: Տղեքն ել կարծում են — վախճում եմ: «Ձլի վախենում ես»... Նամուսս չվերցրեց:

— **Կասուլի**6 թեկ կապեցեք գնամ, ասում եմ:

Եստեղ թե՛ Վասիլ Վլասիչին ասենք — նոր: Այսինքն վաշտապետին: Վասիլ Վլասիչը ալկոպի մի ծերում նստած պապիրոս եր շինում: Յերկու տղա մոտեցան թե՛ «Թույլ տվեք, վաճե բլագարոգիե, գնանք ջրհորից ջուր բերենք»...

— Վժիր ջրհորից, ասում ե:

— Տղերքը ցույց տվին մեր առաջի ջրհորը:

Վաշտապետս բարկացավ:

— Գծվել եք, ի՞նչ ե, ասում ե. — ի՞նչպես կարելի յե: Ձե՛ վոր իսկույն կսպանեն: **Նիկակ Գեղգլա**...

Տղեքը թե՛

— **Վաճե բլագարոգիե**, դուք թողեք միայն, վոչինչ ել չի լինի: Ենպես կանենք վոր — չտեսնեն:

— Բայց ո՞վ ե գնում, ասում ե:

Թե՛ **Բաղդասարը**: Այսինքն — յես:

Վաշտապետը մի քիչ չեմ ու չում արավ: «Ափսոս ե տղեն» ասում ե: Բայց, վերջը, տեսավ շատ են խընդըրվում, ծարավից մեռնում են, ճար չկա, ինքն ել ե ծարավ թողեց: Կանչեց ինձ իրա մոտ ու խրատում ե:

— Բայց հնպես գնա, ասում ե, վոր չտեսնեն հա... Կարող ես...

— Կաշխատեմ, ասում եմ:

Տղերքը ուրախացան: **Կասուլը** բերին, կտոր-կտոր թելերը իրար արին, ունկը կապեցին ու տվին ինձ:

— Դե, քեզ տեսնենք,

— Բարե՛ ճանապարհ,

— Հաջողություն...

Թե՛լը դրի **Կասուլի** մեջ, **Կասուլը** ձեռս առա, սողալով անցա ալկոպի թումբը ու՛ չոքե-չոք, չոքե-չոք... Գնում եմ փորս գետնին քսելով, գնում եմ ծիտ տեսած կատվի պես, փորսոց եմ տալի խտտերի միջով, ու **Կասուլը** միշտ աջ ձեռիս, գլխիցս առաջ բռնած, վոր յեթե կրակեն ել՝ **Կասուլի**6 դիպչի... Միամիտ մարդ. կարծում եմ **Կասուլի**ց հետո ինձ չի դիպչի, կամ հենց յեկած գնդակը **Կասուլի** վրա յե գալու... Եղպես ե. վախից խտտի շվաքումն ել կպահպես... Գնում եմ — ու մի կողմից վախում եմ, մի կողմից ել — ուզում եմ անպատճառ գնալ, գնալ, ինչ ել լինի — գնալ... Անունի, պատվի խնդիր ե: «Յեթե ճակատիս գրած ե, վոր մեռնելու յեմ եսպես տեղ, եսպես բանի համար, թող մեռնեմ, ասում եմ, վոչինչ»... Մտածում եմ ու գնում. գնում եմ ու մտածում: Լավ ե՛ կանաչ ե, գնալու ժամանակ ենքան ել չեմ յերեում: Կանաչը եսպես մի թզից ավելի յե: Ես կանաչները տափակացնելով սողում եմ, սողում... Արեն ել վերևից հնպես ե վառում վոր, տերդ խնդա... Ենքան շոգից չեմ նեղվում, ինչքան քրտինքից... Քրտինքը ծլում ե յերեսիցս, թափել ե սկանչներիս յետև... Ուզում եմ սրբեմ — ձեռ կրարձրանա... Միբոս խնոցու պես քցում ե փորումս... Բայց գնում եմ ելի, գնում — ավստրացիք դեռ չեն տեսնում... Շուտով հոգնեցի, փովեցի կանաչների վրա... Հանգստացա ու նորից... Գնում եմ — ելի չեն տեսնում... Մի յերկու



անգամ նայեցի մերոնց կողմը. տեսնեմ՝ յետեիցս ծիկ-  
րակում են թաքուն, իսկ ավստրացիք—հեշ... Ժափ  
չեն գալի: Չեն տեսնում...

Եսպես, ախպերս վոր դուք եք, չոքե-չոք, սողա-  
լով հասա ջրհորին: Հասա ու մնացի քարի շվաքում:  
Բերանս ենպես ե չորացել, վոր թվում ե՝ լեզուս կապ  
ե ընկել... Առաջ հլա, ես քարի շվաքում, մի լավ շունչ  
քաշեցի, հանգստացա... Նայեցի—ավստրացիք ելի չեն  
տեսնում: Լավ: հիմի ի՞նչ անեմ... Տեսնում եմ, վոր  
դժարը գալը չեր, դժարն են ե, թե վոնց ջուր հա-  
նեմ... Ջրհորի բերանը բարձր ե: Մի առօրինի չափ:  
Բարձրանամ թե չե—տեսնելու յեն, ու տեսնեն թե  
չե—կրակելու յեն: Տերդ խնդա, Բաղդասար... Փորձե-  
ցի, պառկած, կասուլը կախել ջրհորը—չեղավ: Ճար չը-  
կար—պըտի բարձրանայի... Բայց վո՞նց բարձրանա-  
յի... Մտածում եմ, մտածում ու չեմ իմանում ի՞նչ ա-  
նեմ: Վերջը, կեցցեն Բաղդասար, մի բան միտս ըն-  
կավ—աղլուխս: Լավ եր՝ մոտս եր—հանեցի ու կանգ-  
նեցի: Կանգնեցի ու թափ տվի դեպի ավստրացիք:  
Ավստրացիքս իրարով անցան, գլուխները հանեցին ա-  
կուպից ու նայում են ինձ: Յես ել սիպտակ աղլուխս  
թափ եմ տալի, վոր չըկրակեն... Մի կողմից թափ եմ  
տալի, մի կողմից ել կասուլը կախում եմ հորը: Եզ  
վոր տեսան—ավստրացիքս հրացանները բռնեցին: Յես  
աղլուխս թափ տալով՝ ձեռս մի քանի անգամ բերանս  
տարա: Ուզում եմ հասկացնել, վոր ջուր եմ տանում,  
ծարավ եմ...

Հասկացան, ինչ եր ել չկրակեցին...

Աչքի ռս նրանց կողմը կասուլը կախ արի... Հի-  
մի ել, արի տես, թուկը կարճ ե, ջրին չե՝ հասնում...

Ի՞նչ անեմ... Վերցրի գոտիքս կապեցի թուկի ձեռը:  
Հասալ:

Ջուրը հանեցի. հանեցի ու նորից աղլուխս նը-  
րանց կողմը թափ տալով, կասուլն առած վազում եմ:  
Վո՞նց եմ վազում—ձի քցես չես հասնի... Յես վազում  
եմ, իսկ ավստրացիք յետեիցս ծիծաղում են: Եզ յես  
հետո իմացա—տղեքը գուլբինով նայել էլին—պատ-  
մեցին:

Դեռ կես ճամփին եմ—մերոնք «ոռան» կանչեցին:

— Մալադեց Բաղդասար, մալադեց Բաղդասար:

Ել Բաղդասարին հալ ե մնացել:

Հասա ու, տղերանց հետ, ինքս ել ծիծաղում եմ  
իմ արածի վրա...

Բայց եզ վոչինչ: Դու ես ասա, թե մի կասուլ  
ջուրը քանի մարդու ծարավ կըկուորի: Մի քանիսը  
խմեցին—հատավ: Մնացածներն ելի մնացին ծարավ:  
Դե, գիտեք, ծարավ մարդու մոտ վոր ջուր են խմում—  
ավելի յե ծարավում: Ջուրը ամենից առաջ, տվինք,  
իհարկե, մեր վաշտապետին, հետո—նվ ավելի ծարավ  
եր:

Մի հինգ-վեց հոգի խմեց—հատավ:

Տղերքը թե՛ արի, Բաղդասար, մեկ ել գնա...

Խնդրում են, աղաչում:

Մտածում եմ—գնամ, չգնամ: Ամեն տեղամ պա-  
պը գաթա չի ուտիլ: Ավստրացիք են, քեռոս տղեքը  
չեն. մի անգամ թողին—լավ, յերկրորդ անգամ... Մը-  
տածեցի, մտածեցի—ասի՝ մեկ ել գնամ, ինչ կըլի կը-  
լի... Եզպես ժամանակ մարդ հարբածի պես ե ըլում:  
Շաշի պես հավեսի հյի ընկել...

Ես անգամ վերցրի յերկու կասուլ: Ել վոչ թե սո-



դում եմ, առաջվա պես, կամ չորե-չոր եմ գնում: Կանգ-  
նած: Աղլուխս թափ եմ տալի ու առաջ գնում: Ավլը-  
տրացիքս ել նայում են: Կարծես սպասում են, թե մի  
բան պըտի ասեմ...

Հասնում եմ ջրհորին, նորից մի քանի անգամ  
ձեռք բերանիս եմ տանում, աղլուխս շարժում եմ ու  
կասուք կախում: Ավստրացիքս ելի նայում են: Առաջ-  
վա պես ելի— վոչինչ... Բան չեն ասում:

Կասուկները լցրի ու յետ: Աղլուխ թափ տալով  
բերի:

Նոր տեղ եյի հասել, մին ել տղերքը թե՛

— Հրե մի ավստրացի յե գալի:

Յետ դառնամ-տեսնեմ—գրոհատ: Մի սիպտակ շոր  
թափ տալով՝ գալիս ե: Յեկավ, յեկավ ու—ըհը—տես-  
նենք մի աման ել ձեռին:

Մերոնք թե՛

— Ջրի յե գալի...

Դրուստ վոր: Յեկավ ջրհորի մոտ կանգնեց ու  
ձեռի շորը թափ տվեց մեր կողմը:

Մերոնք թե՛

— Այ տղա, նրանք ել են ծարավ ելել...

Ու թե դուք ժաժ եք եկել ենտեղ, մերոնք ել են-  
պես: Բան չարին:

Ավստրացիս կռացավ, ջուր հանեց ու տարավ:

Եղ վոր մերոնք տեսան, սիրտ առան: Թե՛ տը-  
ղեք, յեկեք մեկ-մեկ գնանք ջուր բերենք: Բաղդա-  
սարը հո փողրաթ չի արել...

Ինչպես ասի—տղերանց մեծ մասը ծարավ եր  
դեռ: Եղ խոսքի վրա բոլորը թե՛

— Գնանք:

Վաշտապետին ասին: Ելի մի քիչ չեմ ու չում  
արավ, բայց թողեց:

Տղեքը գնացին:

Առաջ հլա մեկ-մեկ, հետո՝ յերկու-յերկու...

Եղ վոր ավստրիացիք տեսան—իրանք ել յեկան:

Մենք գնացինք, նրանք յեկան, մենք գնացինք,  
նրանք՝ յեկան, ու մին ել տեսանք մեր զինվորների  
կեսը հրես ջրհորի գլխին: Մենք ու ավստրացիք խառ-  
նըվել ենք իրար: Խոսում ենք, բայց իրար չենք հաս-  
կանում: Հասկացնում ենք նշաններով: Մենք ասում  
ենք՝ «Վաղա խարոշ», նրանք ել՝ «գոթ, գոթ»... Ես-  
պես խոսում ենք, ջուր ենք հանում, խմում, իրար զո-  
նաղ ենք անում ու ծիծաղում... Յես մինչև հիմի ել  
չեմ հասկանում, թե ինչի՞ եյինք ծիծաղում... Ենքա-  
նը գիտեմ, վոր ուրախ եյինք, շատ եյինք ուրախ...  
Մինչև անգամ, յերբ ջրից կշտացանք—սկսեցինք յե-  
րես, ձեռները վանալ: Հետո ջրհորի եղ ժուրավը կռա-  
ցրինք, բարձրացրինք, կռացրինք, բարձրացրինք...  
Ինչպես յերևում եր՝ յերկար ժամանակ չեր բանել—ճը-  
ռում եր, ճոճում ու ենպես ձեռներ եր հանում, վոնց  
վոր հարյուր տարվա հիվանդ: Դրա ճոճոցի վրա  
ծիծաղում ենք, հանաքներ անում... Ավստրացիք ելի  
ինչ-վոր բան են հարցնում—չենք հասկանում: Նրանք  
«գուք, գուք», մենք՝ «խարառո, խարառո»: Նրանք  
մեզ հացի կտորներ են տալի, մենք նրանց՝ պապիրոս:  
Ու ելի իրար ենք նայում ու ժպտում...

Չգիտեմ, ինչքան ժամանակ եր անցել—մի ըոպե  
թե մի սհաթ—մին ել տեսնենք մեր դիրքերից ձեն  
են տալի:

— Ուրբյատա!..



Վոնց ենք վաղում — ել դու պրծար:

Յետ յեկանք: Վաշտապետը ծիծաղում է:

— Հը՞, կշտացանք, ասում է:

Մենք գլխով ենք անում.

— Դա՛, վաճե բլագարողի:

— Իսկ ավստրացոց հետ ի՞նչ էյիք անում, հարցնում է:

— Վոչինչ, ասում ենք, նրանց լեզուն չենք հասկանում:

Նա գլուխը ժաժ տվեց ու բեղի տակ ծիծաղում է: Հետո թե՛

— Լավ չի՞, ասում է, յերբ մարդիկ հսպես մոտիկ, բարեկամ են իրար:

Նրա ես խոսքերի միտքը եղ ժամանակ լավ չը հասկացա, բայց տղերանց հետ ելի գլխով արի.

— Իհարկե, վաճե բլագարողի...

Ել չխոսեց: Մենք ել ծարավներս կոտրած՝ հանգըստացանք: Նստել ենք ու խոսում, թե՛ Վոնց՝ պատահեց ես բանը. Վոնց ելավ, վոր ավստրացիք մեզ մոտ թողին ջրհորին: Մի քանիսը թե՛ «Իրանք ել ծարավ էյին, դրա համար»... Ոոսում ենք մեզ համար, մին ել՝ իրիկնապահին մի հրաման, թե պետք է առաջ գնանք, պետք է կրակել... Կրակել... Արի տես, վոր տղերանցից վոչ մինը սիրտ չի անում կրակելու: Ձեռներս չի բռնում, հասկանում եք: Քիչ առաջ իրար հետ ասում, ծիծաղում էյինք—հիմի... չի ըլում... Վերջը, վերջը մեզ զոռ արինք. կրակում ենք, բայց վայ են կրակելուն... Մարդուն վոր չես տեսել՝ ուրիշ բան է. կը կրակես, կըքշես՝ գնա. բայց վոր տեսել ես, հետը խոսել, են ել մի յերկու սհաթ առաջ—ուրիշ է: Ձի ըլում...

Կրակում ենք, բայց ենպես: Քցում ենք ողի մեջ, գընում ե...

Կրակեցինք, կրակեցինք, բայց—ելի են, ելի են: Առավոտը մենք մեր դիրքերում էյինք, ավստրիացիք իրենց...

Բայց արի տես, թե բանից ի՞նչ դուրս յեկավ: Մի որ անց՝ մեր վաշտապետին կանչեցին—տարան: Նրանից յետը մեր կապիտանը, նրա հետ ել մի ուրիշ պարուհիկ յեկան մեզ մոտ—խոսեցին: Կապիտանը չոր, յերկար մարդ էր, սառթ բնավորության տեր: Ջինվոր տեսներ թե չե՛ նկատողություն. — «Ինչո՞ւ յե գլխարկդ ծուռը», «Ինչո՞ւ լավ չբարեցիր» «Ինչո՞ւ շորերդ, շինելդ լավ չես կոճկել», ու հսպես բաներ: Յեկավ սա ու սկսեց խոսել, թե՛ «Դուք, ասում է, յեկել եք թըշ ու սկսեց խոսել, թե՛ «Դուք, ասում է, յեկել եք թըշ—նամու դեմ կովելու, պետք է կովեք, ասում է, ինչպես կարգն է: Մի հավատաք, ասում է, են մարդկանց, վոր ձեզ կասեն թե՛ ավստրացիք մեր բարեկամն են: Սուտ է, ասում է, եզ բոլոր մարդիկ ստախոս են. դրանք հայրենիքի դավաճաններ են»... Ոոսեց, խոսեց ու, վերջն ել, թե՛ «ձեր վաշտապետը սրանից յեղը սա կըլինի»: Այսինքն հետը յեկած պարուհիկը: Ոոսեց ու գնաց:

Իսկ մեր վաշտապետը—Վասիլի Վլասիչը՝ Ո՞ւր տարան, ի՞նչ յեղավ... Հարց ու փորձ, հարց ու փորձ—վերջը իմանանք, վոր սպանել եմ... Մնացինք զարմացած, թե ի՞նչ: Նրանից ել լավ մարդ... Բոլորիս գրության մեջ մտնում էր, յերբ մի բան էյինք խընդրում—«չե» չկար: Հիվանդ ժամանակներս գալիս եր մեզ տես, վիրավորված գինվորին տանելու ժամանակ համբուրում էր, հետո նամակներ եր գրում, սիրտ տա-



լի. (եղպես մի նամակ ել յես համ ստացել): Իսկ ֆնացածի հետ—վոնց վոր ախպեր. կըզար ձեւը մեջքենբիս կըխփեր, կըհարցնէր՝ վոնց ենք, ի՞նչ ենք... Ու ես բաների համար սիրում եյինք նրան... Բայց, աւրի տես վոր, «վատ մարդ» ե յեղել, ասում ե: «Վատը» վոնք ե՝ ի՞նչ ե արել: Ելի հարց ու վորձ, հարց ու փորձ, վերջը, իմանանք՝ մեղքը են ե, վոր քուլ ե օվել, ասում ե, իրա զինվորներին, թշնամու զինվորներին հետ խոսեն ե չի թողել թշնամու վրա կրակեն... Եղ վոր իմացանք—կատաղեցինք: Եղքան ել սուտ... Չե վոր մարդը, ասում ենք, եղ բոլորն արավ, վոր ծարավ չմեռնենք: Ել ինչո՞ւ ե եղ սուտը...

Խոսում ենք, բայց ջիգարներս երվում ե: Մտածում ենք, վոր մարդը մեր պատճառով սպանվեց: Մտածում ենք, բայց ամեն մեկիս սրտին, կարծես, մի քար ե ընկել... Մի որ ել—հինգ-վեց հոգի խոսում ենք եսպես, զարմանում, զայրանում, թե եղպես ել բան... Տղաներից մինը վեր կալավ թե՝ «եղ բոլորը մեր կապիտանի գործն ե»: Մթամ սպանելու պատճառը նա ե յեղել: Մտածում ենք—զրուստ վոր—բոլորը նրա գործն ե: Կարող եր, չէ, ձեն չհանել. իմացածը ուրիշների—մեծերի—ախանջը չեցել. յեթե զրուստ ել ըլեր են, ինչ վոր ասում եյին: Ուր մընամ վոր—սո՛ւտ... Մեր մեջ կային ուս, խախուր, հայ, վրացի, լատիշ: Բոլորն ել հավասար ցավում են—«խեղճ մարդ»... «Խեղճ Վասիլի Վլասիչ»... Ցավում են, ախոսում, ու ամեն մեկի սրտին, կարծես, մի քար ե ընկած: Ցավում են ու չեն իմանում ինչ անեն... Մի որ ել եսպես հինգ-վեց հոգով խոսում ենք, մեր ուսը—Պավլուշա եյինք ասում—վեր կալավ թե՝ «Դրան

ել, ասում ե, նրա որը պըտի քցել»: Վրացի Դաթիկոն ել են կողմից. «Ուղիղ ե, ասում ե, պետք ե»...

Անցավ մի շաբաթ, ավստրիացիք առաջ յեկան, նորից յետ գնացին, ու ես անգամ, յերբ յետ գնացին մենք մեր դիրքերը հասցրինք ջրհորին: Ու հենց եղտեղ՝ մի գիշեր, յերբ կապիտանը, ամեն անգամվա պես, յեկել եր պրավեկի—մեր տղեքը, կրակոցի ժամանակ, յեվ յեվա արին դրան... Ու յերբ առավոտը դրա մարմինը գտան ջրհորի մոտ, բոլորն ել կարծեցին, վոր անցնելու ժամանակ ավստրացիք են խփել: Եղպես ել գրեցին կագերճեում...

1920.

*Կագերճեում  
պրավեկ.*



ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ



Յես չեմ տա այս մարդու վոչ անունը, վոչ ազգանունը, կասեմ միայն, վոր յես նրան հանդիպեցի յերկաթուղային վագոնում, նոյեմբերյան մի գիշեր:

Կրկին անա պատկերանում ե ինձ այդ գիշերը վագոնում:

Մեր գնացքը նոր ե դուրս յեկել Թիֆլիզից և, մոլոկանի ֆուրգոնի արագությամբ, շրխոցով շարժվում ե առաջ՝ դեպի Կարս: Կես գիշերից անց ե. դուրսը բուք ե ու խավար. նոյեմբերյան այն բուք ու խավարը, վոր միշտ սարսափ ե ազդում ուշացած ճամբորդներին և մենավոր տան բնակիչներին: Մեր շուրջը բուքն հեծեծում ե խավար դաշտում և, կարծես, մոլեգնած մի գազան՝ վայրագ մոնչոցով, վազում ե մեր կառախմբի յետևից: Վագոնի մեր մասում բոցկլտում ե կիսավառ մոմը և իր յերերուն լույսով ուրվագծում հարևաններին դիրքըն ու կերպարանքը: Ութ հոգի յեն, յոթը՝ հայ զինվորներ՝ շինհիներով ու մոխրագույն, գործովի՝ փափախներով, իսկ ութ յերորդը՝ քաղաքացի յե՝ հագեցրած վերարկուով և կաշվե դեղին գանկապաններով: Նրա լիքը, կլոր և ինքնագոհ դեմքը, փափրիկ սպիտակ ձեռները և մատների շողշողուն մատանիներն ինձ վրա այն տուպավորությունն են թողնում, վոր նա կամ նոր հարուտացած գավառացի յե կամ հարուստ ընտանիքի փեսա: Կարճ կտրած մազերը, խուզած բեխերը և հարաշարժ աչքերը վկայում են, վոր այդ յերիտասարդ քաղաքացին գործնական մարդ ե:



Թիֆլիզ կայարանից նոր հնք դուրս յեկել. բոլորն արթուն են. կատարվում է սովորական հարց ու փորձ, թե ով ձևը է գնում, վճարողից է դալիս: Պարզվում է, վոր զինվորները դալիս են ուսմիսական սահմանից (կովի դաշտից), իսկ զանկապաններով պարոն՝ Ռուսաստանից: Չորս տարվա պատերազմից հետո զինվորներն, առաջին անգամ, գնում են իրենց տները, քաղաքացի պարոնը նրզրում հայրենիքի պաշտպանութանը մասնակցելու, իսկ յես՝ կարս:

— Այդ լավ է. մենք ուղեկից ենք, — ասում է պարոնը ուրախ տենորով զիմելով ինձ. — միասին՝ ճանապարհը ձանձրալի չի լինի...

Իրար ծանոթանալուց հետո, յես բարձրանում եմ վագոնի վերին մասը՝ քնելու, թողնելով պարոնին և զինվորներին միասին: Կարճ միջոցում նրանց միջև սկսվում է մտերմական և հայրենասիրական զրույց: Սոսում են պատերազմի մասին, թե ինչ է սպասում Հայաստանին: Իսկ յես, լեզու չիմացող ոտարականի պես, լուռ լսում եմ նրանց:

— Շատ ուրախ եմ, վոր դուք, հայրենակիցներ, ոտար ֆրոնտներից վերադառնում եք ձեր հայրենի ֆրոնտը, — ասում է նորածանոթ ուղեկիցս զինվորներին: — Իս շատ ուրախալի յե: Ժամանակ է, վերջապես, վոր հայերս կատարենք մեր պարտքը մեր հայրենիքի հանդեպ, մանավանդ հիմա, յերբ այնքան մեծ կարիք կա կովով ու յոթերի... Դուք, ի հարկե, նրզրում եք գնում:

— Վոչ, — պատասխանեցին զինվորները. — մենք առայժմ գնում ենք մեր տները. չորս տարի յե՝ չենք տեսել:

Ուղեկիցս վարմացավ.

— Ինչ եք ասում. իսկ յես կարծում եյի, թե ուղղակի այնտեղ եք գնում... Այնքան կարիք կա կովովորների, գիտեք, այնքան կարիք կա...

Ձինվորները լուռ են:

Ուղեկիցս շարունակեց.

— Յես ել ահա գնում եմ այնտեղ իմ պարտքը կատարելու: Չնայած վոր հայրս չեմ թողնում, բայց այսպիսի մի ժամանակ հայ տղամարդը կարող է տանը նստել...

Այո, նա գնում է ուղղակի զորքի մեջ մտնելու և մտադիր է ծառայել իբրև հասարակ զինվոր, վորովհետև միմիայն այդ ձևով կարելի յե սպասավորել հայրենիքին: Հետ է, իհարկե, բարձր պաշտոններ վերցնել և հրամաններ տալ. սակայն հայրենասիրութունը դրա մեջ չե. հայրենասիրութունը այն է, վոր մարդ արհամարելով ամեն տեսակ վտանգ՝ գնա առաջին շարքերում կովելու, իբրև հասարակ զինվոր:

— Այնպես չե, հայրենակիցներ:

— Ի հարկե, ի հարկե, — ասացին զինվորները:

— Այդպես ել յես, վորոշել եմ արհամարել ամեն տեսակ վտանգ և գնալ կովել իբրև հասարակ զինվոր: Յեթե վիճակված ե մեռնել, կմեռնենք, միայն թե հայրենիքը...

Սոսելով, ուղեկիցս հետզհետե բարձրացրեց ձայնը, և նրա ձայնի վրա վագոնի հարևան մասերից կարճ միջոցում մի խումբ գյուղացիներ շրջապատեցին նրան՝ նոր բաներ լսելու: Դրանք բոլորն ել Լոռու գյուղացիներ էյին, այդ ծույլ մարդիկ, վորոնց հետքերը քիթի հարձրել միայն պատերազմը, լուռ լսում էյին:



զանկապաններով պարոնին և նրա ամեն մի խոսքին իրանց հավանությունն ու հառաչանքները տալիս:

— Այժմ, հայրենակիցներ, դրությունն այնպես է, — շարունակեց նա, — վոր բոլորս, բոլորս պիտի զենք վերցնենք. և՛ գյուղացի, և՛ քաղաքացի, և՛ զինվոր, և՛ բանվոր՝ բոլորը մեկ են այժմ. բոլորը մի պարտք ունեն — հայրենիքի՝ պաշտպանություն...

Նա խոսում էր լիքը կրծքով, ձեռքը թափ տալով, ինչպես անում են վճռական մարդիկ և արտահայտիչ աչքերով ունկնդիրներին նայելով: Իսկ ունկնդիրները նրա ամեն մի նախադասության վերջում շարունակ կրկնում էին. «Իհարկե, իհարկե»:

Խոսելով հայրենիքի որհասական վիճակի մասին, ուղեկիցս վոգեվորվեց ավելի և վոգեվորեց իր ունկնդիրներին:

— Հիմի, ասում եմ ձեզ, հայրենակիցներ, — շարունակեց նա ձեռքը կրծքին խփելով. — յեթե դուք յերկու որվա մեջ երգրում չգնաք և չուղարկեք ձեր վորդիներին ու յեղբայրներին — մենք՝ բոլորս՝ կորած ենք... Այո, յեթե այդ չանենք, թշնամին հեշտ ու հանգիստ կզառ յերեխան կմորթի ձեր շեմքի վրա, ձեր աչքերը կհանի, իսկ ձեր կնոջը կտանի իր վտոները լրվանալու... Հասկանում եք:

— Ի հարկե, ի հարկե, հառկանում ենք. հայքը՝ իստոյնյա յենք հո, — ասացին լուեցիները զգացված:

— Ուրեմն, — ձեռքը յերաժշտախումբը զեկավարողի նման շարժեց ուղեկիցս, — մեզ մնում է շտապել, որ համարելով ամեն անասկ վտանգ... թող սոցիալիստներն ասեն՝ «Հայրենիք չկա», մենք նրանց ցույց կը-

տանք, վոր կա. և այդ հայրենիքը կպաշտպանենք մեր արյունով... Ինչ էլ ուղում է լինի, հայը՝ հայ է...

Ի հարկե, ի հարկե, հայը՝ հայ է, բա հո... ասացին գյուղացիներն ու զինվորներն ավելի զգացված: Իսկ մյուսները խորը հառաչեցին և ապա բոլորը միանգամից լուեցին, ինչպես այդ լինում է թանգագին մարդու մահվան բոթը լսելիս:

Բայց լուեթյունը յերկաթուղու վագոններում յերկար չի տևում: Վորքան էլ խոսելու նյութն ըսպառվում է, այնուամենայնիվ, ուղեկիցներն էլի մի բան գտնում են խոսելու: Վոչինչ չեղած դեպքում, սակայն, նրանք զրույց են բանում կամ հաջորդ կայան բանների վրա, կամ նշանավոր կամուրջների մասին:

Այս անգամ էլ յեղավ նույնը:

Լուեցի գյուղացիներից մեկն ընդհատելով լուեթյունը, դրա հետ միասին և իմ նինջը, սկսեց խոսել ճանապարհի վրա յեղած վտանգի մասին:

— Ասում են, գիտեք, թուրքերն են ճանապարհի վրա իրանց հանգիստ չեն պահում, — ասաց նա այնպիսի յեղանակով, կարծես իր ասածն ուղում էր ըստուգել:

— Հա, ասում են՝ զինված են, — մեջ մտավ մի ուրիշ լուեցի:

— Այդ վթրտեղ, — հետաքրքրվեց ուղեկիցս քնննիչի պես հանգիստ, բայց և քննիչի պես ուշադիր:

— Ես մոտիկ ստանցեքում, — պատասխանեցին մի քանի լուեցի միասին:

Այո. Միթե: Հարեանս զարմացավ. նա այդ առաջին անգամն է լսում: Ուրեմն վտանգ կա:



Գյուղացիները ավին ալարկոտ, անտարբեր պատասխան.

— Առանց վտանգի չի...

Նորից լուռթյուն: Լուռ են գյուղացիները, լուռ են զինվորները, լուռ ե և հարևանս:

Փոքր անց, սակայն, յերբ գյուղացիները, քաշվեցին իրանց մասը, զինվորները նիրհեցին, ուղեկիցըս յեղավ տեղից, թեվքով սրբեց լուսամուտի քրտնած ապակին, մի քանի րոպե լուռ նայեց դուրս, ապա դարձավ ինձ.

— Պարոն... Արթուրն եք:

Այո: Յես արթուն եմ:

— Լսեցի՞ք, ինչ են տուում:

Յես ձեվացա անտարբեր:

— Ի՞նչ:

Նա կրկնեց գյուղացիների խոսքերը վտանգի մասին:

— Ասում են սաստիկ վտանգավոր ե ճանապարհը, — ավելացրեց նա և, չգիտեմ. ի՞նչու, առանձնապես շեշտեց «սաստիկ» բառը:

Յես ասացի, հավաստիացրի նրան, վոր առանձին վտանգ չկա, իսկ յեթե լինի, յերկաթուղու վարչությունը, կոնդուկտորները, մեքենավարը կը հայտնեն:

— Դե, — արտասանեց ուղեկիցս և շարունակեց շվշվոցով նայել դուրս:

Ապա հանեց մի պապիրոս և սկսեց ծխել:

Յես պատրաստվեցի քնելու: Յեվ, չգիտեմ, վոր քան եյի ննջել, մեկ ել՝ հանկարծ, տկտնջիս գիպան հետևյալ խոսքերը.

— Բարեկամ, մարդատար գնացքները վճիր կայարանում են հանդիպում իրար:

Հարցնողը ուղեկիցս եր:

Վագոնի հարևան մասից նրան պատասխանեցին, թե գնացքների հանդիպումը տեղի կունենա հենց առաջիկա կայարանում, ուր հասնելու ենք շուտով:

— Իսկ այնտեղ հո վտանգ չկա, — լսվեց նորից ուղեկցիս ձայնը:

— Չե, — պատասխանեցին գյուղացիները քնաթաթախ ձայներով, — դենն ա, պարոն. յերկու ստանցի դենն ա... Սադախլո...

Ուղեկիցս նորից յեկավ լուսամուտի առաջ և նուրից սկսեց շվշվացնելով նայել դուրս: Այս անգամ, կարծես, վորոնում եր մեկին, վոր հետը խոսակցի: Այդ յերևում եր նրա անհանգիստ հայացքից, վոր շուտշուտ նետում եր շուրջը: Յեվ, իրավ, մի քանի րոպեյից նա նորից դարձավ ինձ.

— Պարոն... արթուն եք:

— Այո:

— Գիտե՞ք, ի՞նչ դժբախտություն ե պատահել ինձ: Յես հետաքրքրվեցի.

— Ի՞նչ:

Նա ձեռը տարավ դեպի ծոցազրպանները:

— Յերեկայեցեք... Մի շատ, շատ կարևոր թուղթ եմ մոռացել Թիֆլիսում:

— Վոչինչ, յերբ հասնեք երզրում, կգրեք՝ կուղարկեն, — հանգստացրի յես:

— Ո՛ր, ինչ եք ասում. անհրաժեշտ թուղթ ե, կարող ե կորչել:

— Ապահոված կուղարկեն:



Ուղեկիցս մտածմունքի մեջ ընկավ:

— Վոչ, դժբախտաբար, ձեզ պիտի թողնեմ մենակ: Ստիպված եմ վերադառնալ,—ասաց նա և, փոքրը ընդմիջումից հետո, ավելացրեց.— Կարսում, յերևի, կհանդիպենք:

Ուրախ կլինեմ: Յես տվի իմ հասցեն:

Այդ միջոցին շոգեկառքը սուլեց և, քիչ հետո, կայարանի լույսերը մեկը մյուսի յետևից մեզ աչքով անելով՝ նահանջեցին կառավարի կողքով:

Ուղեկիցս պայուսակը վերցրեց:

— Դեհ, մնաք բարով, — ձեռք մեկնեց նա: — Ցավում եմ, վոր ստիպված եմ վերադառնալ. գիտե՞ք, այնքան կարեոր թուղթ ե...

Ու գնաց:

Տասը րոպե անց, յերբ յես մեր վագոնի լուսամուտից գլուխս դուրս հանեցի՝ ողջնչելու, տեսա ներքան պայուսակը ձեռին թիֆլիս մեկնող՝ կանդ առած կառավարի յերկարությամբ վազելիս:

Նա տեղ եր վորոնում:

\*  
\* \*

Անցավ ամսից ավելի այս ճամբորդությունից, յերբ յես կրկին վերադարձա թիֆլիս, և մի յերեկո, արդեն բոլորովին մոռացած իմ ուղեկիցին, հանկարծ հանդիպեցի նրան կաֆե «Union»-ում: Նա՛ յերկու որիորդի հետ միասին նստած՝ թեյ եր խմում:

Ա, բարև ձեզ — բացականչեց նա ինձ տեսնելով և, տեղից յիջնելով, սպիտակ փափլիկ ձեռքը մեկնեց ինձ.— Արդեն վերադարձե՞լ եք. իսկ յես, յերեվակայեցեք, կորցրած թուղթս դեռ չեմ գտել,— հառաչեց նա: — Իսկ այնտեղ այնքան կարիք կա կովող ու ժերի, այնքան կարիք կա... Չը գիտեմ ինչպես անել... Առանց այդ թղթի ել՝ չեմ կարող գնալ...

Յեմ չգիտեյի ինչ խորհուրդ առաջարկեմ և շուտով բաժանվեցինք: Սակայն՝ ավագս, մոռացահարցնել թե ինչ թուղթ եր դա: Բայց մինչեւ այսօր ել, յես յենթադրում եմ, վոր այդ թուղթը մեր հայրենիքի պաշտպանության համար մեծ նշանակություն պիտի ունենար...

1918.



ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ



Մինասը ազնոցն աչքերին, իր խանութի առջև  
նստած, լրագիր և կարդում: Նրան լսում են պայտար  
Պողոսը, ժամկոչ Անտոնը, անտառապահ Վանոն, դար-  
բին Թորոսը և մի քանի գյուղացի՝ մարդիկ, կանայք և  
յերիտասարդներ: Մինասի աջ կողմը, խանութի շեմ-  
քում, կավե ամանների մոտ, նստած և Տոլստոյի հման  
մի ծերունի, ձախ կողմը կանգնած և չոր-չոր դեմքով,  
ձեռքերը կրծքին խաչած, մի պառավ կին և միամիտ  
աչքերով սրան-նրան և նայում շարունակ: Մյուս գյու-  
ղացիներն ել իրար սեղմված, վտռի վրա, շրջապատել  
են Մինասին:

Ամեն ուր այսպես գյուղացիները շրջապատում են  
Մինասին, և նա նրանց կարդում և պատերազմի մա-  
սին:

Այսօր ել նա կարդում և նույն նյութի մասին, և  
ամենքը լուռ ու մունջ դեմք ընդունած, ինչպես այդ  
անում են յեկեղեցում Ավետարանի ընթերցմանը ուն-  
կընդրելիս, լսում են նրան:

— «Գեր...մանա... կան միլի... տարիվմը,—կար-  
դում և Մինասը աջ ցուցամատը շարժելով,—արդյունք  
և Վիլ...հելմ Հոհեն...ցոլլ...երնի Յեվրոպայում իր հե-  
զե...մոնիան...»:

— Սպասիր, Մինաս,—ընդմիջում և նրան Տոլս-  
տոյի դեմքով ծերունին,—եղ հայերեն ես կարդում:

— Իհարկե, հայերեն եմ կարդում,—պատասխա-  
նում և Մինասը.—չես տեսնո՞ւմ՝ հայերեն գազելի ե:



— Վոնց վոր ուսերեն ըլեր,—ասում ե ծերունին:

— Իսկի ել չե. վժրտեղի ուսերենն ե, յերբ հայերեն եմ կարդում,—ասում ե Մինասը և շարունակում. —Լսեցեք. «Յեվ...րոպայում իր հեգե...մոնիան ստեղծելու»...

— Ինչը ստեղծելու,—ընդմիջում ե նորից Տոլստոյի դեմքով ծերունին:

— Մինաս, Մինաս, քե մատաղ,—վիզը ծռելով ասում ե չոր-չոր դեմքով պառավը խանութպանին. —մի տես՝ Ներսեսիս մասին բան կա գրած...

— Սպասիր,—ասում ե Մինասը և դառնում ծերունուն. —ուրեմն չիմացար ինչը... Վոր եղպես ե՝ կաց նորից կարդամ:

Նույն բանը Մինասը կարդում ե նորից:

Ծերունին, և մի քանի հասակավոր գյուղացի տարակուսանքով նայում են իրար.

— Բան չհասկացա,—ասում ե ծերունին,—ո՞վ գիտի՞ վատ ես կարդում:

— Վատ,—խնդում ե Մինասը,—կարդում եմ են, ինչ վոր գրած ե, իսկ դուք, վոր չեք հասկանում, ես մեղավոր չեմ... «վատ ես կարդում»... Վեց տարի յե դադեթ եմ ստանում, հիմի վատ եմ կարդում...

— Լավ, լավ,—ասում ե ծերունին ներողություն խնդրելու յեղանակով,—կարդա, տեսնենք, ել ինչ կա:

Մինասը շարունակում ե լրագրի ընթերցումը առաջվա յեղանակով:

— «Գերմանական զորքը տեղափոխվեց Արևելյան Պրուսիա»... Դե թող գնան. դրանց հերն անիծած... Գիտեք, ի՞նչ ե ասում. ասում ե՝ նեմեցների զորքը

փախչում և պրուսացիների յերկիրը: Վոնց վոր երեվում ե, ուսներից շատ են վախենում:

— Լավ, Մինաս,—ասում ե պայտար Պողոսը, կողքը քորելով,—եդ նեմեցները նեմեցնիր են, բա եդ պրուսացիները ովքեր են:

— Պրուսացիները, յերկարացնում ե Մինասը,—դրանք ել ուրիշ ազգ են:

— Հա՛ն,—բացականչում ե տնտառապահ Վանոն:

— Ի հարկե: Դե լավ, լսեցեք, կարդում եմ:

Բոլորը լուռ եմ:

Մինասը շարունակում ե.

— «Պետրո...գրագ: Գերմանացիները հեռացան Լոձից»... Տեսնում եք. գերմանացիներն իրենց քաղաքները թողած՝ փախչում են:

— Կարծեմ՝ եդ քաղաքը ուսներինը պետք ա լինի,—նկատում ե դարբին Թորոսն անվստահ. —Վոսկանի սալդաթ տղեն եդ քաղաքումն ե ծառայում:

Մինասը խեթ-խեթ նայում ե դարբնի դեմքին:

— Ո՞վ ե ասում,—առարկում ե նա,—ժամիցը յես եմ գալի, «ոգորմի աստվածը» դու ես տալիս: Գագեթը ես եմ ստանում, հիմի...

— Լավ, լավ, կարդա, տեսնենք ել ի՞նչ կա,—ասում ե ծերունին հաշտեցուցիչ յեղանակով:

Մինասը կարդում ե.

— «Պարիզ. Բրիտանական ականակիրը Ոստենդեյի մոտ խարխախ ձգեց»... Ա՛յ տուր. եղպես ել հարկավոր ե...

— Ի՞նչ ե ասում,—հարցնում ե պայտարը գլուխը քորելով:



— Ասում ե՛ս ուսաները բոմբ քցեցին նեմեցների քաղաքի վրա:

— Պահ,—բացականչում ե տնտառապահը:

— Հապա՛. մերը չմեռնի ուսաների. սրանց ո՛վ կարա հաղթի: Ես ասել եմ՝ նեմեցները ենպես մի տուր պետք ե ուտեն, վոր ել ոխտը տարի մտներիցը չընկնի... Նրանց տեղն ե:

— Եդ լավ ե,—ասում են գյուղացիները և գոհունակությամբ նայում իրար,—դենը կարգա, տեսնենք ել ինչ կա:

— Մինաս, թե արեդ սիրես,—նորից ասում ե պառավը՝ ձեռքերը կըծքին խաչած,—մի տես Ներսեսի մասին բան կա...

— Մի քիչ սպասի,—ասում ե Մինասը և թերթը շուռ տալիս մյուս յերեսի վրա:

Պառավը լուռ ե և շարունակում անմիտ աչքերով սրան-նրան նայել:

— Լսեցեք,—կարդում ե Մինասը.—«Լոնդոն: Յապոնիան զորքեր ե ուղարկում Ռուսաստան... յեր... յակ համա... ձայնու... թյանը ոգնելու»... դա՛ եր պակաս: Գիտե՛ք՝ ինչ ե ասում: Ասում ե՛ս յապոնացիք գալիս են Ռուսաստան կռվելու: Հըը՛մ... Ի՞նչ կարան անեն: Յապոնացիք չե, թեկուզ նրանց պապի պապն ել գա, ուտին բան չեն կարող անել: Են վաղ եր, վոր եշը կաղ եր... են ժամանակ ոսի զորքի մեջ հայեր չկային: հիմի ինչքան ուղես...

— Դրուստ ե, հիմի շատ կան,—ասում են մի քանի գյուղացի միասին հառաչելով և հողնությունից հենվում են մյուս վտարների վրա:

— են ժամանակ իմ Ներսեսին ել չը տարան,—ասում ե պառավը ինքն իրեն:

— Իսկ դուք տեսել եք եդ յապոնացիներին,—հարցնում ե Մինասը իր ունկնդիրներին:

— Հա՛,—ասում ե պալտարը վիզը քորելով,—մեր բեխի գրքումը կա:

— Դու դեռ պատկերն ես տեսել,—ասում ե Մինասը խնդալով և դառնում գյուղացիներին.—Եդ յապոնացիներին վոր տեսնեք, ծիծաղներդ կզա. անձոռնի զատեր են՝ թիզ ու կես, վոր գլխերին խփես՝ կը հանգչեն, վոր փեշդ թափ տաս՝ սիրտները կը ճաքի... Դրանք Ի՞նչ են, վոր ուսաներին հաղթեն: Ա՛յ, ուրիշ բան են անգլիացիք—ինգլիզները: Նրանց ասածը ասած ե, խփածը՝ խփած: Ուղենան թե չե, սաղ աշխարհը կառնեն...

Գյուղացիները խորին հետաքրքրությամբ հետևում են Մինասի պատմությանը. նրանցից շատերի ղեմքին զարմանք ե նկատվում:

— Իսկ եդ ինգլիզները հայ-քրիստոնյա են չե՞, հետաքրքրվում ե Տոլստոյի նման ծերունին:

— Ի հարկե,—պատասխանում ե Մինասը,—նըրանք ել, Ֆրանցուզներն ել...

— Իսկ եդ նեմեցներն ի՞նչ ազգ են,—նորից հարցնում ե ծերունին:

— Նեմեցները,—մտածում ե Մինասը,—լավ միտքս չի. նրանք կամ Ֆրանզ պետք ե լինեն կամ... Ինչ վոր ե: Լսեցեք. «Պետրոգրադ: Ռուսները գրոհ տվին Յարոսլավի վրա. թշնամու աջ թեղ նահանջեց դեպի հարավ-արևելք, ձախ թեղ և կենտրոնը մնում են իրենց ղերքերում և թույլ ընդ... գիմազրություն են ցույց տալիս»...



— Իսկ կովի մասին բան չը կայ—ընդմիջում են մի քանի գյուղացի միասին, դրանց հետ և Տոլոտոյի նման ծերունին. — Կովի մասին կարդա...

— Դեռ չե. եդտեղ ել կհասնենք, — ասում է Մինասը և թերթը նորից շուռ տալիս մյուս յերեսի վերա: — Տնաշեններ, գազեթ կարդալու ժամանակ եդքան չեն խոսի. ինչվոր կարդում եմ, լսեցեք. չեք հասկանում—կը բացատրեմ...

Գյուղացիները մեղավորի պես իրար են նայում, ասես կամենում են մեղքը միմյանց վրա քցել, և վոչինչ չեն խոսում: Իսկ Մինասը, թերթը շուռ տալով նայում է վերեից ներքև և մեջտեղից կարդում.

— «Ֆրանսիական զորաճակատում թշնամին ընդհարվեց ֆրանսիական կապալերիայի հետ: Կապալերիան գրոհ տվեց և ստիպեց թշնամուն նահանջել: Թշնամին անկարգ նահանջում ե»:

— Եդ հեչ, Մինաս, ասում են գյուղացիները. — դու կովի մասին կարդա, տեսնենք ի՞նչ կա:

— Վոնց թե՛ հեչ, — ասում է Մինասը. — գաղթեթում ինչ վոր գրում են՝ պետք է կարգալ... Կովի մասին եք ուզում, կովի մասին ել կը կարդանք...

Գյուղացիներն ուրախացած բացազանչում են.

— Հա, հա, կովի մասին կարդա...

— Մինաս, — ասում է վերստին պառավը՝ — բա ներսեսի մասին չես կարդում:

Մինասը չի լսում պառավի խոսքը. նա ուշադրությամբ վորոնում է պատերազմի լուրերը: Յեվ յերկար վորոնելուց հետո, վերջապես, կարդում է.

— «Իտալական ժողովուրդը հուզված է: Իտալիան Ավստրիայից պահանջեց Տրիեստն ու Տրիենտը, հակառակ դեպքում զենքի յե դիմելու»:

— Ինչ է ասում, — հարցնում է դարբին Թորոսը, — լավ չհասկացա:

Մինասն ակնոցի վերից խեթ-խեթ նայում է նրան և խնդում:

— Եստեղ ի՞նչ կա չհասկանալու վոր, — ասում է նա, — պարզ հայերեն գրած է. ասում է՝ Իտալիան Ավստրիայից պահանջել է... — նայում է լրագրին, — Տրիեստն ու Տրիենտը... Հիմի հասկացա՞ր:

— Ձե, գլուխը շարժում է դարբինը. — դրուստն ասած՝ խելքս չի կտրում թե եդ ի՞նչ է պահանջում:

— Հա, դրուստ, ի՞նչ է պահանջում, — ասում են մի քանի գյուղացի միասին:

Մինասը նորից նայում է լրագրին:

— Տրիեստն ու Տրիենտը, — պատասխանում է նա:

— Իսկ ի՞նչ բաներ են դրանք, — հարցնում է դարբինը նորից:

— Պահ, քո տունը չքանդվի, — զարմացած ասում է Մինասը, — դու բոլորովին սարի անասուն ես յեղել, իսկի բան չես հասկանում... Եստեղ պարզ ասում է, թե Իտալիան Ավստրիայից պահանջում է ես ու են. ասում է, թե եդ բաները չտաս, սուրը վեր կառնեմ ու ամենքիդ սրի բերանը կը քաշեմ:

— Պահ, բացականչում է անտառապահը:

— Հապա, ասում է Մինասը, — հանաք բան գիտեք: Նրան Իտալիա կասեն: Ծառ զորեղ տերութիւն է...

— Եդ լավ, Մինաս — ասում է դարբինը ու նորից համառությամբ կրկնում իր հարցը. — ամոթ չըլի ասելը, յես ելի չհասկացա, թե եդ ի՞նչ բաներ են, վոր պահանջում է եդ... վո՞նց է...

— Իտալիան, — վրա են գցում այս ու այն կողմից:



— Հա, Իտալիան, — կրկնում է դարբինը:

Մինասը մի քանի վայրկյան, ակնոցի վերեից, անթարթ նայում է դարբնի չեչոտ դեմքին և բացականչում զարմացած.

— Վահ, քու տունը չը քանդվի, եղբան ել անհասկացող մարդ կը լինի, վոր դու ես: Ես ահագին խալիս (ցույց է տալիս իր ունկնդիրներին) հասկանում ե, դու չես հասկանում... Քեզ պարզ բացատրում եմ, վոր Իտալիան Ավստրիայից պահանջում է, — նայում է լրագրին, — Տրիեստն ու Տրիենտը. ասում ե՝ յեթե չտաք, բոլորիդ սրի բերանը կը քաշեմ, ձեր հերը կանիծեմ... Ել ի՞նչ կա եստեղ չհասկանալու...

— Դրուստն ասած, — ասում է դարբինը, — չեմ հասկանում, մեղքս ի՞նչ թաղցնեմ:

Մինասն ակնոցի վերեից, անթարթ հայացքով, նորից նայում է նրան և գլուխը շարժելով զարմանում դարբնի այդքան տգիտության վրա:

— Լավ, լավ, — ասում է Տոլստոյի դեմքով ծերունին, — կարդա, տեսնենք ել ի՞նչ կա:

— Ներսեսի մասին բան չը կարդացիր, Մինաս, — ասում է պառավը վիզը ծռելով:

Յեվ լրագրի ընթերցումը շարունակվում է նորից:

Ի Ն Վ Ա Լ Ի Դ Ը



հասցե - Զուլաբ Զուլաբյան

Հիմի, արագերս վոր դուք եք, պատմեմ ձեզ իմ  
յերկար պատմութեան վերջին մասը, թե վոնց զրկվե-  
ցի վոտից ու մնացի եսպես՝ կաստիլը թեխ տակ... Այ  
գիտի. յերեխա ժամանակս կաղ մարդ տեսնելիս՝ ծի-  
ծաղում եյի. կարծում եյի, թե մարդիկ հենց եղպես  
կաղ ել ծնվում են մորից... Ում մտքովը կանցներ,  
թե մի որ ել յես կզրկվեմ վոտից ու ման կըգամ կա-  
ղալով... Մի խոսքով...

Հիշում եք Շարուրի կոնվլը... Սրանից մի քանի  
տարի առաջ Շարուրի կոնվլ ժամանակ եր: Յերկու որ  
կոնվում եյինք մի թուրք գեղի վրա, բան չեր դուրս  
գալիս. վերջը, մեր հայոց զորքը հաղթեց ու մտանք  
գեղ: Քոստո, քանդված, գոմերի նման մի գեղ... Եղ-  
պես գեղեր դուք շատ տեսած կըլեք, ել կարիք չկա, վոր  
ասեմ: Գեղը մտանք թե չե՝ մեր հրամանատարը—դա-  
րաբաղցի մի տղա—թե՝ տղեք, մի քանիսդ գնացեք դես  
ու դեն՝ ակը տվեք, տեսեք ինչ կա, ինչ չկա... Եսպես  
մի հինգ-վեց հոգի վեր կացանք ես ու են կողմի վրա:  
Մի քանիսը իրար հետ, մի քանիսը մենակ: Յես ել  
մենակ եյի. հրացանը պատրաստ բռնած՝ գնում եմ:  
Շատ եյի գնացել, թե քիչ, մին ել տեսնեմ լացի ձեն  
ե գալիս: Մի յերկու քուչա ել—տեսնեմ մի թուրք կը-  
նիկ գլուխ-մուխը իրանց ձևով կապած, մի տան պատի  
տակ նստած՝ բարձր ձենով լաց ե րլում. կողքին ել ինչ



— վոր փալասներ կան թափված: Լաց ե ըլում ու, հետն ել, թուրքերեն հայհոյում մեզ. հսպես, հնպես.

— Ձեր յեկած ճամփին,

— Ձեր հավատը,

— Ձեր հոգին:

Ինձ վոր տեսավ ձենն ավելի բարձրացրեց.

— Շներ,

— Ձեր պաշտածը,

— Ձեր հերը. ձեր մերը...

Սոսում ե ու ձեռները թափ տալի ինձ վրա, հնպես կատաղած, կասես փրփուր ե թափում բերնից:

— Ձենդ կտրի, ասում եմ, շան քած, ռւմ ես եղպես հայհոյում...

Ասում եմ ու հրացանը բռնում վրեն:

Յես հրացանս նշան եմ բռնում իրան—նա հեչ. իսկի վեջը չի. ավելի յե կատաղում ու ձեռները թափ տալիս.

— Անհավատ շներ, չախկալներ, ասում ե. յես ձեր հավատը... Ել պետո խոսք չի մնում կարկուտի պես թափում ե հսպես:

Եստեղ իմ համբերություն բոլորովին հատավ, թվանքը բռնեցի դռին:

— Ձենդ կտրի, քած, ասում եմ ու ուզում եմ թըվանքի վոտը քաշել—հնպես կատաղել եմ:

Բայց, այ տղա, նա ելի հեչ... վոչ տեղիցն ե ժած գալի, վոչ ձենն ե կտրում:

— Սպանիր, ասում ե, շուն:

— Սպանիր, չեմ վախենում:

Ասավ, կռացավ կողքի չուլ ու փախար յետ քցեց:

Յետ քցի—ինչ տեսնեմ, այ տղա: Յերեք սպանված իրար կողքի: Յերկուսը յերեխա, մինը տղամարդ: Երեւում ա երեխեքը՝ տղերքն են, տղամարդը՝ մարդը: Շոգից ուռել, այլակերպ բան են դառել. ճանձները հավաքվել՝ ծեփ են դրել... Յետ քցեց փալասներն եղ կնիկը ու դժի պես զլխի մազերն ու ծծերը բաց արավ:

— Դե, անհավատ շուն, ասում ե, սրանց սպանելուց յեղը՝ ինձ ել սպանիր...

Տեսիլք բան եր, այ տղա: Ոխտը տարի կովի մեջ եմ ելել, շատ բան եմ տեսել, շատ բան ե պատահել ինձ, բայց եղպես բան—սկիւ իմ որումը չեմ տեսել: Սպանվածները տեսնելուց հո վատ ելա, դա հեչ, բայց վոր ինքը՝ եղ թուրքի կնիկը—մազերն ու ծծերը բաց արավ, առաջիս կանգնեց ձեռներս թուլացան... Հիմի կասեք ինչի... Դրուստն ասած, յես ել կարալ չեմ տեսել ինչի... Յերկար ժամանակ մորս տեսել չեյի. դա վոր եղպես բիրդան ծծերը բաց արավ—մորս հիշեցի: Յես կյանքումս, մենակ իմ մորն եյի տեսել եղպես ծծերը բաց, դրա համար եր, հալբաթ, մերս միտս ընկավ... Կախ ընկած, պատված ծծերն Լեքան նման եյին մորս ծծերին, վոր կարծեցի թե... Մի խոսքով հսպես բան ինձ սկի պատահած չի: Ենպես ելա, վոնց վոր տեսիլք տեսած: Հիմի ուզում եմ երեսս թեքել, հեռանալ—չի ըլում. մնացել եմ աղթածի պես կաղնած... Վերջը, ինչ յերկարացնեմ, չգիտացա. սիրտս փուլ յեկավ ինչ եր—մոտեցա եղ թուրքի կնիկն:

— Անա, ասում եմ, ներողություն արա...

Կմկմում եմ, ուզում եմ ձեռը բռնել, ներողություն խնդրել, վոր եղքան մեռելը կողքին, ես ել ուզում եյի իրան սպանել. բայց նա ձեռ չի տալիս.



նստել եւ անժաժ քարի պես ու ենպես եւ մտիկ անում ինձ, վոր ուզում եմ գետինը մտնել... Հասկանում եք, եսպես թուլացի՞լ կանգնեի եմ եղ կնկա առաջին ու ուզում եմ հիմի ել մխիթարել նրան։

— Աննա, ասում եմ, ներողություն արա...

Բայց թե դուք խոսում եք, նա ել ենպես։

Եղ ժամանակ եր, վոր յետեիցս ձեն տվին.

— Այ տղա, Կարո, եղ լ՞նչ բանի յես...

Դառնամ տենամ—մեր տեղերանցից յերկուսը թըվանքները ձեռներին կանգնել՝ ինձ են նայում։

Յես թվանքս առա ու սուս ու փուս յետ քաշվեցի։

— Եղ ընկածներին դժև սպանեցիր, հարցնում են։

— Ձե, ասում եմ։

— Բա լ՞նչ, ասում են,—քեզ զրկել են գործի, դու յեկել ես թուրք կնկա հետ սեր ես անում։

— Եղպես բան չկա, ասում եմ,— յես նրա հետ խոսում եյի։

— Ի՞նչ եյիր խոսում։

Դե հիմի արի սրանց հասկացրու, թե լ՞նչ եյի խոսում։ Ասեմ ինչ յեղել ե—վրես պըտի ծիծաղեն, թե վախկոտ ես, կնկա սիրտ ունես. եսպես, ենպես.

— Ոոսում եյի ելի, ասում եմ։

Ծիծաղում են։—Լավ ե, ասում են.—դե ասա սեր եյիր անում ելի...

Յես բան չեմ խոսում։ Նրանք ասում են, ծիծաղում, փեշս քաշում են, կանգնեցնում, վոր բան իմանան։ Տերը չեմ ըլում... Եսպես եկանք մեր տեղը. դրանք ելի ծաղրելով, ծիծաղելով տղերանց պատմում են, թե Կարո Արսենյանցը՝ եսպես. գնացինք տեսանք, մի թուրքի կնկա հետ սեր ե անում... Ասում են ու ծիծաղում, ասում են ու ծիծաղում...

Միրոս պատում ե ուզում եմ վեր կենալ, բորիս ել մի լավ հայհոյել, բայց պահում եմ ինձ։ Կըխոսեն, կխոսեն, ասում եմ, իրենք ել կբեզարեն։

Բայց չե. արի տես վոր բանը դրանով չվերջացավ։ Կամաց-կամաց եղ հանաքը դարձավ չանաք։ Բանը հասավ մեր հրամանատարի ականջը։ Մին ել տեսնեմ մեկը թե՛ «կամանդիրը կանչում ե»։ «Ի՞նչ կա»։ Թե՛ «Ի՞նքը քեզ կաթի»։

Գնում եմ։ Կամանդիրը նոր կերած խմած, վոնց վոր ջաղացի վորձակ, իրա ոթախում գնում ե գալիս։

— Դու, ասում ե, ինչ թուրքի կնիկ ես գտել եստեղ։

— Այո, ասում եմ, մինը կա ենտեղ։

— Տղերքը տեսել են, ասում ե, վոր դու նրա հետ սիլի-բիլի յես արել, ճի՞շտ ե։

— Վնչ, ասում եմ, պարոն հրամանատար, սնւտ ե. եղպես բան չկա։

Ձի հավատում. գնում ե գալիս ու աչքերը յերեսս քցում.

— Ծիշտն ասա. բա լ՞նչ եյիր խոսում,—ասում ե։ Յես վոչինչ չեմ խոսում։

— Պիտի ասես թե չե, շան վորդի, ասում ե։

Ձեն չեմ հանում։ Ի՞նչ ասեմ։ Ինչպես տղերանցից, ենպես ել սրանից վախենում եմ՝ ծաղրեն, թե կնկա սիրտ ունես, բան... Դիտեմ արածս վատ բան չե, բայց ամաչում եմ ասել...

Իսկ հրամանատարը բարկությունից տրաքում ե։ Բիվուը հանել ե, թե պիտի ասես, յեթե վոչ, քեզ շանատակ կանեմ. դու եսպես, ենպես. գնում ես եսպես բաներ ես անում...

Տեսավ ելի չեմ խոսում, բարկությունից Բիվուը



քաշեց վրէս. քաշելն ու տրաքիլը մեկ ելավ: Մին ել տեսա ծունկս տաքացավ:

Ձենին՝ տղերքը ներս թափվեցին: Վազեցին սանիտարը բերին, վոսս փաթաթեցին ու յերկու որ հետո ղրկեցին քաղաք:

Քաղաքում բժիշկները շատ դես ու դեն արին, վոր գյուլեն հանեն՝ ելավ վոչ: Մի որ ել թե՛ վոտդ սկսել ե փթել. քեզ փրկելու համար, ասում են, պետք ե կտրել...

Շատ մտածեցի, վեր ածեցի, վեր հանեցի, տեսա ճար չկա, ասի՝ թող կտրեն: Ու կտրեցին:

Եսպես ելավ իմ վոտի բանը:

Հիմի, յերբ եսպես կասիլը թեիս տակ անցնում եմ փողոցով, երեխեքը կաղնում՝ նայում են ինձ. նրանք ել, ով գիտի, ինձ նման կարծում են, թե մորից հենց եսպես կաղ եմ ծնվել...

1921.

Բ Ա Ն Տ



Վերադարձից և գալիս բախտը և վորո՞նք են նրա ճանապարհները—յես այդ մասին վոչինչ չգիտեմ. յես ուզում եմ պատմել միայն մեր հարեանուհի Մարգարիտի մասին, վոր իրեն համարում եր ամենադժբախտ կինը ամբողջ աշխարհում:

Այո, նա իրեն համարում եր ամենադժբախտ կինը բովանդակ աշխարհում: Դա մի ջահել, մոտ յերեսուն տարեկան, փոքր ինչ գեր, լիքը կրծքով ու կայտառ շարժումներով կին եր. մեկը այն գեղջկուհիներից, վորոնք կարծես ծնված են ավելի լայն աշխարհիկ կյանքի համար, բայց իրենց որերը մաշում են խուլ գյուղերում: Ունեւր նա սեփական տուն մի քանի սենյակից, ունեւր պտղատու այգի, յերկու կթան կով հորթերը տակին, և լավ զարդ ու զարդարանք—վզի վոսկի, մատանիներ ու շալ շորեր. այնպիսի շորեր, վոր յերը հագնում յեկեղեցի յեր գնում—բոլորը նախանձում եյին:

Բայց նա իրեն սաստիկ, սաստիկ անբախտ եր գգում, վորովհետեւ մարդը կտուապան եր:

— Թող շուն ըւեր, գել, մի աչքը կույր, մի վոտը կաղ, միայն թե ֆայտոնչի չըւեր,—ասում եր նա հաճախ, վշտահար սիրտը մորս առաջ բանալով:—Ուրիշներն ել մարդ են. ցերեկն աշխատում են, գիշերը հանգրստանում. իսկ իմս՝ վոչ քուն ունի, վոչ հանգիստ,



եղ ֆայտոնի պատճառով. ես ինչ ե՛ր Դիլիջան, ես ռւր—  
սսագցի՛ն. վոչ տանն ե նայում, վոչ կնկա... Երեխա  
չկա, բան չկա. գիշերները մնում եմ մենակ՝ դու-դո՛ւ  
կանչելով... Ամիսը մի անգամ տանը չի քնում...

Ու խնդրում եր մորս—համոզել մարդուն՝ կառ-  
քը ծախել և ուրիշ գործ սկսել գյուղում: Միթե քիչ  
գործ կա, վոր նա ֆայտոնի թարկը չի տալիս:

— Յես ասում եմ, ինձ լսում չի,—սովելացնում  
եր նա դժգոհ.—հեչ լսում չի...

Յե՛վ իրոք. Գալուստը կնոջը չեր լսում: Հաճախ  
եր պատահում, վոր նրանք, նույնիսկ մեր ներկայու-  
թյամբ, վիճում եյին այդ մասին: Կինը փնտրում եր  
կառքը, ձիերը և առհասարակ կառապանության ար-  
հեստը ու առաջարկում եր մի ուրիշ բան անել. բայց  
կառապանը միշտ մերժում եր կնոջ բոլոր պռաջարկ-  
ները:

— Խելքիդ գոռ մի տալ,— ասում եր.— ամեն մարդ  
ծնված ե մի բանի համար. տերտերը հո չի կարող  
վաճառականություն ան'լ. ենպես ել յես... Փայտոնը  
ծախեմ ի՛նչ անեմ...

— Վոնց թե՛ ի՛նչ,— զարմանում եր կինը գլուխը  
շարժելով.— Աշխարհը մեծ—դու միջին: Գործ եմքա՛ն...  
դու գրանից հլա մի ազատվի՛ր.

Բայց մարդը լսել անգամ չեր ուզում:

— Իմ հերը վոր ֆայտոն եր բանեցնում—պա-  
կաս մարդ եր, պակաս եր ապրում,—առարկում եր  
նա:—Ուրիշ գործը, կարծում ես, ֆայտոնից լավ ոգուտ  
ե տալի: Հը՞... Գիշեր ե պատահում՝ մի բուռը փող եմ  
տոնում, ռ՜վ ե եղբան աշխատում,—իրար յիտեից հար-  
ցիւր եր տալիս նա կնոջը և մեկին, զարմացած բացա-

կանչում.—Ախր ինչո՞ւ պետք ե փոխեմ գործս ե, ին-  
չո՞ւ... Թե չեմ կարում քեզ հաց, ջուր հասցնել—ասո՛ւ,  
թե շոր չունես՝ ասո՛ւ...

— Ինձ շոր-բան հարկավոր չի,—շարունակում եր  
կինը վշտացած,—յես քեզ համար եմ ասում, վոր հան-  
գիստ չունես, վոր վոչ մի գիշեր գլուխդ բարձի չես  
դնում...

— Ե՛ր, թող գործ ըլի,—բացականչում եր կառա-  
պանն անտարբեր.— բարձ հարկավոր չի...

Կինը, տեսնելով չի կարողանում կոտրել ամուս-  
նու համառությունը, նստում եր ու լուռ արտասովում,  
գոգնոցի ծայրով արցունքները սրբելով:

Այսպես եյին անցնում նրանց կյանքի որերը  
մինչև թուրքերի գալը:

Ո՛ր այդ ժամանակները... ողբ լցված եր սարսա-  
փով ու վախով... Շատերը, գյուղացիներից շատերը փա-  
խան գյուղից, թողնելով տուն, տավար ու այգի, թող-  
նելով այն ամենը, ինչ նվիրական ե գյուղացի  
մարդու սրտին—հայրենական հարկ, հարազատների  
գերեզման...

Բայց կառապան Գալուստն ու իր կինը տեղ-  
ներից չչարժվեցին բնավ: Թեև մարդ ու կին, յե-  
րեխա չունենալով, միշտ կարող եյին փախչել, թեև ի-  
րենց քառաձի կառքը ամեն լողե կարող եր թոցնել  
նրանց վո՛ր կողմն ուզեյին, այնու ամենայնի՜վ՝ չգնա-  
ցին, տեղահան չեղան:

— Ո՛ւր գնանք,—ասում եյին. միևնույն ե, յիթե  
մեռնելու ենք, ո՛ւր ել գնանք կմեռնենք. ավելի լավ  
չե՞ ասեղ ծնվել ենք, ասեղ ել մեռնենք... Թուրքերն  
ել մարդ են, հո մարդակեր չեն...



Թշուրքերը գյուղ մտան զինվորական յերաժըշտախմբի հաղթական նվագով, ու տեղավորվելուց անմիջապես հետո սկսեցին ընդհանուր խուզարկութիւն: Իրենց ասելով՝ վորոնում եյին զենք ու զինվոր, ուստի և մտնում եյին բոլոր տները, բանում եյին բոլոր փակ դռները, նայում եյին ամբարները, վառարանները, կացիններով պոկում եյին հառակի ու տառատաղի տախտակները՝ թագցրած իրեր գտնելու համար, և ուր չեյին գտնում այդ իրերը, վերցնում եյին այն, ինչ իրենց դուր եր գալիս: Յեվ գյուղի բնակիչները այդ բոլորը գտնում եյին բնական. «Թշնամի յէ, բա ինչ պիտի անի...» ասում եյին իրար:

Յերկրորդ օրը խուզարկութիւն կատարվեց մեր թաղում: Հրացաններով զինված տասն ասկյար, բարակ վոտներով մի ջահել սպայի տաաջնորդութամբ, մտան նախ հորեղբորս տուն, վորի դուռը բացվում եր հենց փողոցի վրա. վերցրին նրանցից միա ծեծելու մեծ դանակը և Թիֆլիսում նոր գնած սիպտակ սաճավարը, ու հետո, ըստ հերթի, անցան Գալուստի բակը:

Կառապանն ու իր կինը, վոր այդ ժամանակ իրենց փշե ցանկապատի յետև կուչ յեկած՝ դիտում եյին հորեղբորս տան կատարվող խուզարկութիւնը, նկատելով՝ թուրքերը շարժվում են իրենց կողմը—կուզե կուզ նետվեցին—կինը դեպի սենյակները, մարդը դեպի գոմը—փակ դռներն ավելի ամրացանելու:

Բայց թուրքերը բանում եյին բոլոր փակ դռները... Ամենից առաջ նրանք մտան սենյակները, ապա թոնրատունը: Յերկու տեղն ել բան չգտնելով՝ անցան դոմը: Կառապանը բոլոր ժամանակ բուխ մա-

տը խրած իր կառապանային շորե գոտին՝ լուռ, անշարժ հետևում եր թուրքերին, իսկ յերբ նրանք գոմը մտան, նա ել, ինչ վոր քթնջալով, հետևեց նրանց:

Չանցավ, սակայն, յերկու րոպե, ասկյարները մեկը մյուսի յետևից դուրս քաշեցին ձիերը՝ սանձերից բռնած: Գալուստն աշխատում եր խել ձիերը, արգելել տանելու, ուստի և ընկնում եր նրանց առաջը, թափ եր տալիս ձիերի սանձը, բայց ասկյարները հըրում եյին նրան, սպառնում եյին աքացով ու հրացաններով... Ձիերը դուրս բերելուց հետո, թուրքերը շրջապատեցին կղմինտրե թեք ծածկի տակ ընկած կառքը: Լծափայտի վրա թառած հավերը սրտապատառ կշկչոցով թռան այս ու այն կողմ: Թուրք սպան ինչ վոր կարգադրութիւն արավ, և յերեք չորս ասկյար միասին կառքը քաշեցին բակի մեջտեղը ու, ինչպես մտացու անասունի, սկսեցին դիտել ամեն կողմից: Ապա նրանցից յերկուսը վազեցին լծասարքը բերելու...

Վորքան ել Գալուստը աշխատեց արգելել կառքը տեղից շարժելու—չեղավ. վորքան ել ինդրեց, պաղատեց—սպան մնաց անդրդվելի և, նույնիսկ, տեսնելով կառապանը չի հանդատանում—փակեց նրան դոմում:

Ապա կառքը լծել տալով, նստեց մեջը և հորեղբորս սպիտակ սաճավարը սիրուհու պես կողքին տեղավորելով՝ դուրս յեկավ բակից: Մյուս յերկու ձին հեծան ասկյարներից յերկուսը և, թիկնապահների նման, հետևեցին կառքին:

Յերբ նրանք բոլորովին հեռացել եյին, Մարգարիտը վախվխելով դուրս յեկավ սենյակից և գոմի դուռը բաց արավ: Կառապանն իսկույն և յեթ, առանց



մի խոսք ասելու, գլուխը բաց (նրա գլխարկն ընկել  
էր քաջքշուկի ժամանակ) մրրկի նման վաղեց կառքի  
յետևից:

Ինչպես հետո իմացանք, նա գնացել էր Թուրք  
փառայի մոտ—խնդրելու, վոր կառքն ու ձիերը վե-  
րադարձնեն, բայց նրան չեյին լսել և սպառնալիքնե-  
րով հեռացրել էյին Փառայի դռնից:

— Գնա, կառքը մեզ պետք է...

Յեվ իսկապես—կառքը նրանց շատ պետք էր...

Փաշան ամեն ուր զբոսանքի յեր յեղնումայդ կառ-  
քով, պտտվում էր գյուղում, գնում էր շրջակայքը,  
յերբեմն էլ քառաձի՝ զանգակներով, բոժոժներով...

Ու այսպես վեց ամիս .. Իսկ յերբ, վեց ամսվա  
տիրապետութունից հետո, նրանք քաջվեցին, իրենց  
հետ տարան և Գալուստի կառքն ու ձիերը...

Յեվ Գալուստը հիմա, վորովհետև վոչ կառք ու-  
նի, վոչ ձի և վոչ էլ փող՝ նորից դրանց ձեռք բերե-  
լու,—ստիպված, իր գլուխը պահելու համար—մրգի և  
պապիրոսի առևտուր է անում: Յեվ, պետք է ասած,  
առևտուրը բավական հաջող է, վորովհետև խանութը  
յերկաթնուղու կայարանին մոտիկ է: Իսկ կինը՝ Մար-  
գարիտը, վոր յերբեմն ոգնում է ամուսնուն, մարդու  
գործի մասին խոսք բացվելիս, միշտ ասում է հարե  
վանուհիներին:

— Գործներս, փառք իրան, վատ չի: Թուրքերի  
յեկած ճամփան որհնվի. ֆայտոնը տարան, մարդս տա-  
նու յեկավ... Անջաղ գիշերները հանգիստ եմ ըլում...

Այո, այժմ Մարգարիտն իրեն շատ բախտավոր  
է գգում...

1919.

Ո Յ Ա Ն Ի Մ Ա Յ Ը



Ե՛հ, պատերազմի ժամանակ շատ բաներ անցան  
Կաղնուտի գլխով: Շատ: Տղերքը գնացին կռիվ ու նը-  
րանց կեսից ավելին յետ չդարձավ— դաշտերը մնացին  
անվար, հողերը անցան, հետո հացը պակասեց, հացը  
թանգացավ ու, վերջն ել, թուրքը յեկավ ու ծանր  
նստեց հինգ ամիս... Ու եդ որերին Կաղնուտի գլխով  
շատ բաներ անցան... Բայց են, ինչ վոր Ունանանց  
Ոհանի գլխով անցավ՝ դեռ չի անցել վոչ մի մարդու  
գլխով: Այո՛:

Դեռ թուրքերը չեկած — Կաղնուտի ժողովուրդը  
իրանց տավարն առաջ արին ու, վորը վոտով, վորը՝  
սայլով գնացին դորքի հետ, փախան Լոռի. մինչև ան-  
գամ տերտերն ել նրանց հետ. ու գլուղում մնացին  
միայն ծերեր, պառավներ ու կաղեր: Դրանց հետ մնաց  
և Ունանանց Ոհանը: Տղին, հարսին ու աղջկան ճամ-  
բու դրեց և ինքը մնաց, թե «տունն ու բոստանը չի  
կարելի անտեր թողնել»: Հասկանա՞ւ եք — չուզեց իր  
տունը, իր ձեռով ցանած բոստանը թողնել անտեր ու  
գնալ: Ինչպես կնոջը, հարսին, աղին — ենպես ել սի-  
րում եր իր տունը, բոստանը: Դեռ գուցե ավելի:  
Մարդ եր ու եղպես բնավորություն ուներ: Ինչքան  
ասին «վտանգ ա» — չլսեց: Մնաց ու մնաց. — ինչ կըլի-



կըլի...Վոնց վոր խալիւր, ենպես ել յես...Ինձ բան չի ըլի, դուք ձեր մտախն մտածեցեք...

Եսպես՝ հարեաններին, տանըցոց ճամբու գրեց ու ինքը մնաց։ Նրա մեծ վորդուն թուրքերը սպանել էյին Կարսի կովում, ու Ոհանը մտածում էր—նրանից հետո ինքը գնար ինչ աներ. նրան սպանելուց հետո թող իրեն ել սպանեն։ Մեկ ել մտածում էր, վոր թուրքը գա, միևնույն է, յերկար չի մնա—ել ինչո՞ւ տունը թողնել անտեր։ Ու մնաց...Նրանց թաղում մնացել էր և պառավ Յեղսանը իր կովի հետ։ Նա ել չուզեց գնալ, նա ել են կարծիքի յեր. թե թուրքը չէ, թեկուզ հարամի ել գա—պառավ կնկան բան չի անի... Թուրքերը յեկան և, իսկապես, վոչ Ոհանին ձեռ տվին, վոչ ել Յեղսանին. նրանք յեկան, մտան սրահնրա տուն. ման յեկան գենքի, գինվորի—բան չգտան. հետո տեղավորվեցին գանազան տներում—«փաշան» տերտերի տանը, ասկյարները՝ ուր պատահեց։ Դրանցից մի տասը հոգի ել՝ իրանց հրացաններով, բանով, յեկան Ոհանի տունը։ Յեկան՝ բռնեցին յերկու սենյակն ել ու նստեցին—Մենք ետեղ պիտի մնանք...

Ոհանը—Ինչ կարար ասի Ոհանը—մի քանի փալաս հավաքեց ու գնաց գոմը։ Դեռ թուրքերի գալուց առաջ, յերբ յերկյուզ կար, թե ահա պիտի գան—նա տան պղնձեղենն ու ամանեղենը թաղել էր այնտեղ՝ գոմում, սալի տակ, իսկ տավարը զրկել էր տղի հետ։ Ու յերբ թուրքերն եղպես սենյակները բռնեցին—նա ձեն ել չհանեց և անխոս գնաց գոմը։ Շատ դառնացավ, ի հարկե, մտքում հայհոյեց. բայց ինչ կարող էր անել—բոլոր զլխին չես կարող բռնեցրով խփել... Թշնամի յե, կովով յեկել և գեղը գրավել—կարձա բան

ասել...Ու հինգ ամիս մնացին եղպես՝ թուրքերը սենյակներում, Ոհանը գոմում. թուրքերն իրանց համար, Ոհանն իրա համար։ Եսպես՝ թուրքերը քնում, վեր էյին կենում, գնում էյին իրանց բանին, յերբեմն հեռանում էյին որերով, նրանց տեղ նորերն էյին գալիս, իսկ Ոհանը անխոս՝ ցերեկը միշտ դուռն առաջի բոստանում էր լինում—մարգեր եր քաղհանում, մարգեր եր ջրում, ու միշտ աչքի տակով նայում թուրքերին. մեկ-մեկ ել իր հին, հալից ընկած շորերը հագին, պառավ, փրչոտած կոճղի նման, տնկվում էր բոստանում ու աչքի տակով նայում ենպես, ինչպես կատուն մկան—մարաղ մտած։ Իսկ յերբ բակից անցնում էր դեպի բոստան կամ բոստանից դեպի գոմը՝ մազոտ հոնքերի տակից նայում էր նրանց և, յեթե առավոտ էր, ասում եր՝ «սաբան խեր», իսկ յերեկոյան՝ «ախշամը խեր»...Ու ել վոչինչ. չեր ուզում յերկար խոսել։ Յեթե մի բան հարցնեյին կը պատասխաներ, մնացած ժամանակը—սոսա։ Իրա գործին։ Բայց ասկյարները յերբեմն կանչում էյին նրան թեյի, յերբեմն ուտելիք էյին առաջարկում։ Չեր ընդունում. —Շնորհակալ եմ, դարդոսշ, շատ շնորհակալ եմ...Իսկ յերբ գորով միս կամ կերակուր էյին տալիս—վերցնում էր «նրանց չնեղացնելու համար» և տանում աղբանոց կամ գիշերը տալիս շանը։ Միշտ վախենում էր, թե թուրքերը կարող են թունավորել իրան, ու եղպես նրանց տվածը չեր ուտում—կամ դեն էր քցում կամ շանը տալիս...Յերբ ասկյարները, տարբերակ արտասանությամբ, կանչում էյին նրան՝ «Ոհան ա-մու»—«Ոհան ամուսն ձեր աչքը հանի» ասում էր մըտքում և, դարանակալ աչքերը գետնին, վորոնց մեջ



միշտ զգուշություն կար, մոտենում եր նրանց: Ու, պատահում եր, ասկյարները զրուցում էյին նրա հետ, տան առաջի գերաններին նստած հանաքներ էյին անում, բայց նա, ո՛ր, միշտ զգուշ եր, միշտ իրան պահում եր, վոր մի ավելորդ բան չասի: Իսկ ենքան բան ուներ իր սրտում, ենքան... Իր հին չուխեն հագին, մազի մեջ կորած դեմքով տնկվում եր բոստանում՝ կաղամբների, բազուկների մեջ և արևածաղիկների արանքում, ինչպես հին փրչոտած կոճղ, և աչքերի տակով նայում թուրքերին, թե ինչ են անում, ո՛ր են գնում, տնից բան չեն տանում արդյոք, կամ չեն գրնում դեպի գոմը, ուր թաղված եր պղնձեղենն ու ամանեղենը: Իսկ մեկ-մեկ ել, յերբ ասկյարները հրացանները վերցրած՝ վորևե տեղ էյին շտապում—նա կուշ եր գալիս արևածաղիկների յետև և ամբողջովին ուշադրություն դառած՝ հետևում եր, թե գուցե բացվում են, գուցե մերոնք հարձակվել են... Գիշերները մանավանդ, յերբ մենակ պառկում եր գոմում—համարյա չեր քնում. մտածում եր, մտածում, ու ենպես բաներ—վոր չեղած...

— Այ, մի մերոնք գան քամակից ու ջարդեն. այ մի մերոնք թոփը տրաքի սրանց մեջ—կոտորվեն. են ժամանակ ինքն ել սրանց հրացաններից. մինը կփերցնի ու մեկ, յերկու, տասերկու... Են ժամանակ կիմանան ինչ բան ե մարդ սպանելը... Մտածելով՝ հիշում եր սպանված վորդուն ու հառաչում գոմի խավարում: Յեվ գոմի լուսթյան ու խավարի մեջ նրա ականջները խշշում էյին, սիրտը փուլ եր գալիս ու Ոհանը, եդ ահագին մարդը, սկսում եր արտասով... Եղպես, վորդու կռիվը նրան եղպես բաներ եր մտածել տալիս և

նա արտասովում եր. արտասովում եր ավելի անգորությունից, վոր վոչինչ չի կարող անել, վորդու վրեժը չի կարող առնել: Հասկանում եք... Մեկ-մեկ մտածում եր, թե ինչ լավ կըլիներ դրանց մեկն ու մեկին, ջուր քաշելու ժամանակ քցեր ջրհորը. յերբ վեգրոն ձեռին հորի վրա կռացած կըլնի՝ բոթես յետևից՝ թող գնա... Գլուխը քարը թե ջուրը կը փչանա, ինքը հլա սիրտը կը հովացնի... Յիրբեմն ել գնում եր պառավ Յեղսանի մոտ և կամաց, զգուշ, շուրջը պահելով, վոր իրենց վոշ վոք չլսի, խոսում եր թուրքերի մասին.— Յեղսան հարս, ի՞նչ ես իմացել, յերբ են կորչում...

Յեղսան հարսը, տարիքով Ոհանից մեծ եր թե շուտ եր կարգված նրանից, իրան ավելի հեղինակավոր եր պահում.— Վոչ մի բան ել չեմ իմացել. թուրքերն իրենց սրտի խորուրդը ինձ չեն հայտնում: Գլուխը քարը, թե յերբ կերթան...

Ոհանը զարմանում եր Յեղսան հարսի անտարբերության վրա, բայց իսկույն հիշում եր, վոր նա թուրքերին կաթ ե ծախում. «խերվում ե—դրա համար. քավթառ»... Ու մի փոքր մտածելուց հետո, վերջոտ գլուխը բարձրացնում եր ու դառնում պառավին.

— Յեղսան հարս, հլի կաթ են տանում... Հա... Բիթնեհորվը գա...

Մի որ նույնիսկ նա ենքան հեռու գնաց, վոր Յեղսանին հարցրեց, թե չի կարող արդյոք կաթի մեջ մի ենպես բան քցի, վոր «չանստատակ ըլին»... Եսպես ել ասավ: Բայց Յեղսանը աչքերը, անմաղ կոպերի մեջ կորած աչքերը, ենպես հոլորեց Ոհանի վրա վոր.— «Ուղթեմ ես տունս քանդեմ»... Ոհանն զգաց իր անզգուշությունը ու եդ որվանից ել Յեղսանի հետ չեր խո-



սում եղպես անդգույշ բաների մասին. բայց ինքը շարունակ մտածում եր, թե ինչ անի, վոր մի սիրտը հովացնի, վոր վորդու կսկիծը մոռանա: Հասկանում եք, մարդը միշտ—ցերեկ թե գիշեր եղ մասին եր մտածում: Իսկ յերբ մարդի գլուխ մի բան է մտնում՝ ել հեշտ չի դուրս գալիս ենտեղից:

Ու մի գիշեր ել անա նրա գլուխը յեկավ մի սարսափելի միտք, ու այլևս քնիլ չկարողացավ... Շարժվեց յերկար այս ու այն կողմի վրա, նստեց անկողնի մեջ մի քանի անգամ, ուզեց վեր կենալ, բայց ելի չկարողացավ. աչքերը փայլում էին գոմի խավարի մեջ, ինչպես սոված գայլի աչքեր: Մազերը խռիվ, վիզ բարակ՝ նստել է թախտի վրա ու մտածում է... Յեվ ինչ է մտածում... Մտածում է տունը դրսից փակի ու, յերբ թուրքերը քնած կըլինեն, վառի. վառի ու, փախչի մերին կամ մի վորեւ տեղ—հըր կըպատահի... Յե նա յերեակայում է, թե ինչպես տունը բոցավառվում է՝ գերանները ճարճատում են ու ընկնում, և ասկյարները այրվում են դրանց մեջ... Ոհանի աչքերը վառվում են. դրանից լավ միտք յերբեք չեր կարող նրա գլուխը գալ...

Ու այս միտքը մի քանի որ կլանեց նրան:

Բոստանում, քրչոտ խրտվիլակի պես կանգնած, արևածաղիկների արանքով նայում է տանը, ես անգամ արգեն վայրի կատվի աչքերով... Թուրքերը դուրս ու ներս են անում, գնում են տերտերանց տուն—փաշի մոտ, գալիս են ենտեղից, և նա միշտ հետևում է նրանց, ինչպես կատուն իր վորսին...

Ու մի որ ել անա, յերբ արևածաղիկների արանքում կանգնած՝ նայում եր եսպես՝ նկատեց, վոր թուր-

քերն անհանդիստ գնում-գալիս են, անհանգիստ խոսում ու շորեր, հրացան, բան հավաքում...

«Եստեղ մի բան կա՝ մտածեց Ոհանը ու դիտողութունը լարեց, վոր ավելի լավ տեսնի, թե ինչ է կատարվում: Այո, թուրքերը անհանգիստ են... Նրանք հավաքում են տան բաները...

Հավաքեցին, հավաքեցին և, վերջը, զինվեցին—**ԵԻՃԵԼ**, ջրի աման և ուրիշ բաներ վերցրած՝ գնացին...

«Այ քեզ բան, մտածում է Ոհանը,—ես հըր են գնում»: Մտածում է ու բարձրանում գոմի կտուրը: Դանրա դիտարանն եր. սովորաբար այդտեղից եր նայում, վոր տեսնի, թե ինչ կա գեղում, վորովհետև եղտեղից յերևում եր գեղամեջը, գեղի մեծ ճամփեն, հետո հանդը ու եղպես՝ մինչև յերկաթուղին: Ես անգամ ել նա ուզեց տեսնել, թե վոր կողմի վրա յեն շարժվում թուրքերը: Ու տեսնավ, վոր թուրքերն առաջ դեռ գնացին տերտերանց տուն—**Փաշի** դուռը, հետո ենտեղ յեկան ուրիշ տներում ապրող ասկերներ ու, վերջը, բոլորը միասին, շարքով, կարգով ճանփա ընկան դեպի **սառցցիճ**... Գեղում կարծես ել թուրք չմնաց: Բայց—չէ... քիչ հետո նա նկատեց մի քանի ասկեր, վոր կանգնած էին եստեղ, ենտեղ. մեկն ել՝ տերտերանց դռանը.—**Ղարահը** են, մտածեց և, գոմի կտրից իջնելիս, նկատեց Յեղսանին, վոր իրա բակում լորի յի փռում: Շտապեց նրա մոտ:

— Տեսմը, Յեղսան հարս: Գնացին: Կոխվ կա, ինչ ա... Բան չէս իմացել...

**Չէ**. Յեղսանը բան չգիտեր, բայց անհանգստացավ:

— Գնացին, ասում ես.—բա մածուն են մերել



տվել... րիկվա համար... Յեվ նա գլուխը շարժեց մը-  
տածմունքի մեջ.—Չե, հալբաթ մոտիկ տեղ են գնացել,  
րիկունն ելի յետ կրգան...

Ու յերկուսով սկսում են զանազան յենթադրու-  
թյուններ անել, բայց Յեղսանին ամենահավանականը  
թվում է այն, վոր թուրքերը իրիկունն անպատճառ  
յետ կրգան, յեթե վոչ մածուն չեյին մերիլ տա: Ի  
հարկե... Հարևանները խոսում են եսպես, մեկ էլ ինչ-  
վոր ձայն, շարժում է լսվում գեղի ծերից, անտառի կող-  
մից... Ոհանը նորից վազում է իր դիտարանը—գոմի  
կտուրը և, ձեռը ճակատին նայում անտառի կողմը:  
Նայում է, նայում և ինչ—թուրք զորքը անհ յետ է  
գալիս, բայց ուրիշ տեսակ—իրար խառնված, անկարգ...  
Ու, կարծես, միայն գեղից գնացածները չեն, ավելի  
շատ են... Նրանց յետևից ել գալիս են ձիավորներ—քոփ,  
պուլիմոս են բերում... ու կամաց-կամաց մոտենում  
են գեղին... Փախչում են... Ահից Ոհանը կռացավ—  
կրնկատեն և, հվ է իմանում, փախչում են—գազա-  
զած կլինեն—կնկատեն ու վըզզ—մեկ էլ տեսար գըն-  
դակը յեկավ... Նա կուչ յեկավ ավելի ու շարունա-  
կեց դիտել...

Թուրքերն յեկան, անկարգ շարքերով մտան գե-  
ղի տակի շուքն ու՝ շուքով ուղիղ յետ... Մի քանիսը  
ջոկվեցին, յեկան մտան գեղ և ուղիղ տերտերանց  
տուն—փաշի գիվանգխանեց. մտան ներս, ինչ-վոր  
կապուցներ, բաներ առան ու հայդա... Նրանց հետ  
դնացին և դառաուկներ... Դրանք ել շոսեն ընկան  
ու գնում են ձիով, վոտով... Իսկ քոփը, պուլիմոսը  
վազեցնում են ձիերը, ու ճամփից ամպի պես փոշի յե  
բարձրանում...

—Քաշվում են... Փախչում են...

Յերբ եղպես շուքի փողին բարձրացնելով՝ հեռա-  
ցան բավական հեռու, ավելի շուտ, յերբ ծածկվեցին  
հեռվի փողում՝ Ոհանը ցած իջավ իր դիտարանից և  
ուղիղ տերտերանց տուն—թուրք չկա արդյոք: Տեր-  
տերանց հայաթում մարդ, շունչ, դարաուլ չկար: Տան  
դռները կրնկի վրա բաց են և ներսը՝ վոչ մի շունչ...  
Այ քեզ, ուրեմն ինքը չի սխալվում—բոլորը քաշվել  
են... Այ, անսպասելի բան... Ուզեց գնալ Ոհանը նորից  
Յեղսանի մոտ, հայտնել այդ մասին, բայց մտածեց, վոր  
լավ կլինի առաջ մի գնա իր տուն, տեսնի ինչ են  
արել ենտեղ թուրքերը:

Առաջ նա վախենում էր թե ինչ—իր սենյակները  
չեը մտնում, այժմ էլ, զգուշությամբ, դուռը բաց ա-  
րավ և մտավ առաջին սենյակը: Ու, ինչ ասես չը-  
կար եղտեղ. թափած, թափթփած էր ամեն բան—  
փամփուշտներ, գնդակներ, հին տրեխներ, շորի կը-  
տորտանք, թղթեր ու խոտ, քար. քար ու խոտ... Խոտը  
թուրքերը փռել եյին իրենց տակ, իսկ քարերը դրել  
բարձի տեղ, ու քարերի վրան՝ ելի խոտ... Յեվ ամեն կողմ-  
սեխի, վարունգի կեղևներ...

—Թովլա են շինել...

Մտքում հայհոյեց ու մոտեցավ մյուս սենյակի  
դռան:

Բայց հաղիվ մի քայլ եր արել, վոր մանի ներս—  
կանգ առավ քարացած: Նրա աչքերն ակամա չռվեցին,  
բիրերը լայնացան և ձեռները, ահապին ձեռները, կո-  
տրված թևերի պես, կախ ընկան կողքերից...



## II.

Այն, ինչ վոր Ոհանը տեսավ այդ րոպեյին և՛ անսպասելի յեր և՛ զարմանալի, և, յեթե կուզեք, յերկուդալի:

Սենյակի միակ տախտին, վորի վրա դարձյալ խոտ եր փռած, վորպեսզի քնողի համար փափուկ լինի, պռուկած եր, ի՞նչ եք կարծում՝ ո՞վ կամ ի՞նչ, վորից Ոհանը վախեցավ, վո՞չ—ավելի շուտ հանկարծակի յեկավ, զարմացավ և, յեթե կուզեք ապշեց... Պառկած եր մի թուրք, մի ահագին, վիթխարի մարդ իր ասկյարի շարերով, տրեխները հագին...

Մի քանի վարկյան, ի՞նչ—մի քանի րոպեյից ավելի Ոհանը մնաց եզգէս քարացած, վեր քաշված, և առաջին մտքը, վոր յեկավ նրա գլուխը այն եր, թե, ուրեմն, բոլորը դեռ չեն գնացել... Շատ կարելի յե ուրիշ տներում ել կան սրտ նման... Մտածում և Ոհանը շեմքում կանգնած, ինչպես կենդանի զարմանք, մտածում և ու մտքերը, ինչպես մեղվի պար, յեռում են նրա գլխում.—շատ կարելի յե գնացին մեզ խաբելու, մեզ փորձելու համար. հօը, շատ կարելի յե... Բայց գուցե սա մեռած և—դրա համար են թողել: Չե, մեռած լինեք—կը թաղեյին... Մտածում և Ոհանը շեմքում կանգնած, մտածում և, ու մտքերը, ինչպես մեղվի պար, յեռում են նրա գլխում: Մտածում և—մին ել թուրքը—ահա—շարժվում և ու տնքում քնի մեջ. տնքում և ծանր ու յերկար, և կուրծքը բարձրանում և՛ իջնում, բարձրանում և՛ իջնում...

«Մնացել և» մտածեց Ոհանը և նրա աչքերը, հոնքի մազերի տակ կորած մանրիկ աչքերը, պսպղացին

ուրախությունից: Ծեր, կուշ յեկած դեմքին յերեկաց ուրախ մի բան, զոհ տեսք, և նա իսկույն, իր հասակին անհամապատասխան արագությամբ, ցատկեց դռների արանքից և թեթև, անձայն քայլերով, վտտի մատերի վրա, վազեց դուրս:

Դուրս յեկավ և, ուղիղ, դեպի գոմը. վազում և թեթև և աչքերն ել, բոլոր ժամանակ, փայլում են հնպես, կարծես գանձ և գտել:

Վազեց, մտավ գոմը ու, քիչ հետո, դուրս յեկավ մի կացին ձեռին, ու նորից թեթև քայլերով դեպի սենյակները: Կացինը բռնել և վտտին կպցրած, կարծես վախենում և մարդ տեսնի: Եզգէս՝ կացինը վտտին սղմած մտավ ներս և զգուշ, շատ զգուշ քայլերով մոտեցավ յերկրորդ սենյակին... Մոտենում և և հետն ել սիրտը դողում և—չը լինի հանկարծ թուրքը զարթնած լինի... Մոտենում և ստամոքսը սղմած, մոտենում և, մոտենում և, շեմքի մոտ կացինը բռնում և յետևը...

Չե, թուրքը դեռ մեկնված և առաջվա պես՝ ամբողջ տախտի յերեսովը մեկ, և ծանր շնչում և ելի. կուրծքը բարձրանում և՛ իջնում, բարձրանում և՛ իջնում...

Ոհանը, աչքը թուրքին, մոտենում և քայլ առ քայլ զգուշությունից հավի քայլեր և անում ու կացինը կամաց-կամաց բարձրացնում... Նա բարձրացրեց կացինը, բարձրացրեց մինչև ուսերը, բարձրացրեց ուսերից վեր և, յերկու ձեռքով ուսերից վեր բռնած՝ քայլերը փոխեց դեպի տախտը, հնպես զգուշ, ինչպես կուտ ուտող կամ կանգնած հավին են մոտենում յետևից բռնելու... Հազիվ մի քանի քայլ եր արել—թուրքը անքաջ առաջվա պես ծանր, տանջանքով,



դժվարութեամբ, վոնց վոր ծանր յերազի մեջ: Տնքաց ու եդ տնքոցի հետ նրա բերանից թռավ մի բառ. — Անա...

Ոհանը մի ակնթարթ կանգ ե առնում, աչքերը քնածի վրա, կանգ ե առնում անշարժ, առաջվա նման քարացած, շունչը բերանում պահած և, ապա կացինը նույն դիրքով բռնած՝ մոտենում ե քայլ առ քայլ, մոտենում ե զգուշ, ինչպես գողն ե մոտենում աչքադրած բանին... Մոտենում ե կացնի կոթը վոսկրոտ մատներով պինդ բռնած: Ատամներն ել սեղծվում են իրար, իսկ աչքերը փայլում են, ինչպես վորս տեսած կատվի աչքեր, վոր զգուշ, գողե-գող մոտենում ե իր վորսին՝ մեկէն հարձակվելու համար:

Բայց այստեղ պատահեց մի բան, վոր կանգնեցրեց Ոհանի ձեռի թափը: Մի բան, վոր նա յերբեք չեր կարող սպասել:

Արդյոք նրա քայլերի ձայնից թե պատահաբար՝ պառկած թուրքը ծուլ յեղավ հանկարծ և զարմացած, լայն-լայն բացված աչքերով նայում ե Ոհանին, նայում ե ինչպես յերեսա, վոր կարծես տեսիլք ե տեսել յերազում—հայացքը ահով ու սարսափով լիքը: Նա ձեռները հովհարի պես բռնեց դեմքին, ասես պաշտպանվելու համար, հետո ձեռի մեկը կրծքին դնելով, մյուսով ցույց տվեց ուսը, և արցունքի յերկու կաթիլ ընկան նրա աչքերից... Արցունքի կաթիլներ, հասկանում եք. այդ ահագին մարդու աչքերից արցունքի կաթիլներ ընկան և գնացին, կորան միրքի մեջ... Եդ բոլորը նման եր փոքրիկ յերեսայի արածի, վորը առեց միայն մի ակնթարթ, մի վարկյան, գուցե և քանի ըտպե,—Ոհանը լավ չկարողացավ վորոշել—բարձ-

րացած կացինը իջավ նրա ձեռի հետ և մնաց նա իր տեղում մեխված... Իսկ թուրքը, նորից, մեջքի վրա ընկավ տախտին ու... արտասվում ե...

Ոհանը քարացած ե, զարմացած, ապշած...

Թուրքը արտասվում ե... Նա յերբեք չեր տեսած, յերբեք չեր սպասում, վոր թուրքը արտասվի... յերբեք չեր կարծում, թե թուրքը կարող ե արտասվել. արտասվել, այն ել յերեսայի պես... Ուրեմն վախեցավ իրանից ու արտասվում ե!.. Բայց չե—մենակ չի արտասվում. արտասվում ե ու տնքում՝ ծոնը, դժար տնքոցով, վոր, կարծես, մի ցավ ունի:

«Ինչ ցավ ունի տեսնես» մտածում ե Ոհանը, մտածում ե և ուզում ե հարցնել, թե վորտեղն ե ցավում: Այո, ենպես ծանր, դժվար ե տնքում թուրքը, վոր նա ուզում ե հարցնել, թե նրա ինչն ե ցավում. բայց չի համարձակվում—ամաչում ե ինքն իրանից, ամաչում ե, վոր թուրքն իր առաջ լաց յեղավ: Նշտնակում ե մի բան ունի ես թուրքը, մտածում ե.— ինչն ե ցավում, տեսնես:

Նա անշարժ մտածում ե, իսկ թուրքը մեջքին ընկած՝ շնչում ե արագ-արագ, յերբեմն հռաչելով, ինչպես ահարկու բանից փախա առած յերեսա... Ոհանը տարակուսում ե—չի իմանում՝ թուրքը իրանից վախեցավ, թե նրա մի տեղը ցավում ե: Ուզում ե հարցնել—ելի չի կարողանում. չի համարձակվում...

Վերջապես, մի քայլ ե անում և ձեռը մոտեցնում թուրքի ուսին:

Թուրքը վախեցած ծուլ ե լինում նորից և ուզում ե նստել:

— Վախիլ մի, վախիլ մի—դորխմա, —ասում ե







— Մեր ունեւ, հարցնում ե Ոհանը ուսը նայելուց հետո ե, հետո, ինքն ել զարմանում ե, թե ինչո՞ւ այդ հարցը տվեց:

Թուրքը չի հասկանում:

Ոհանը հիշում ե թուրքերենը.

— Անն, անն. վա՛ր, — կրկնում ե:

Թուրքը գլխով ե անում:

— Հա՛. դե շատ լավ, — շարունակում ե Ոհանը. — Անն՝ յախշի, չո՛խ յախշի...

Թուրքի դեղին դեմքով մի ժպիտ ե սահում:

— Իսկ հեր — աթան — վա՛ր, հարցնում ե նորից Ոհանը:

Թուրքը դարձյալ գլխով ե անում:

— Արվա՛դ:

Թուրքի գունատ դեմքը մթնում ե. աչքերը փակում ե, բայց պատասխանում ե ելի գլուխը շարժելով:

Ոհանի լեզուն բացվել ե. ել չի լուում. շարունակում ե իր հարց ու փորձը, հասնում ե յերեսաներին, աշխատում ե հիշել, թե թուրքերեն ինչ են ասում դրանց: Ու դժվարությամբ հիշելով՝ հարցնում ե.

— Ուշադ, ողլան — վա՛ր:

Թուրքի աչքերը լցվում են, շրթունքները դողում:

Յեվ իսկույն չի պատասխանում. աչքերը տրորում ե ու, քիչ հետո, ցույց ե տալիս յերեք մատը:

— Յերեք հմտ, — զարմանում ե Ոհանը ե գլուխը կախում. ելի ամաչում ե թուրքի յերեսին նայել, աչքերը փակցնում ե նրա աչքերից ու լուում, լռում...

Իսկ թուրքը այդ հարց ու փորձից կարծես ուշ-

քի յե պալիս մի փոքր ու շվար, շփոթված նայում ե դեպի դուռը, դեպի լուսամուտը, ու սմբողջ մարմնով ասես ուզում ե հասկանալ, թե ո՞ւր են իր ընկերները, իրենց ասկյարները: Նա նայում ե եդպես դուրս, իսկ Ոհանը իր միտքն ե մտածում, թե ինչո՞ւ գնացող թուրքերը մոռացել են սրան ու թողել, եդ ի՞նչպես ե պատահել... Մտածում ե, մտածում ե ուզում ե հարցնել իրան թուրքին, թե վո՞նց ե պատահել եդ: Բայց մինչ եդ՝ թուրքն ինքը հարցնում ե, թե ո՞ւր են «մերոնք».

— Բըզըմլար հարա՞ գեդտի...

Ոհանը ձեռը շարժեց իրանից շատ հեռու:

— Համսի գեդտի, գեդտի, ասում ե. — Հիմի մե-րոնք են պալիս... Բըզըմ ղոշուն... Սըզըն՝ գեդտի, հիմի բըզըմ՝ գյալ...

Թուրքը ամեն ինչ հասկացավ. հասկացավ, վոր իրենց զորքը նահանջել ե, իրենց բոլոր պահակները գնացել են, հիմա գալիս ե հայոց զորքը...

Նրա դեմքը ավելի դեղնեց, քան առաջ, ե նա վախով, անվստահ նայեց Ոհանին:

Ոհանը ժպտաց միայն ե ձեռը խփեց նրա մեջքին.

— Վախիլ մի՛ - ղորխմա...

### III.

Եսպես ե լինում ահա, վոր Ունանանց Ոհանը պատահում ե թուրքին, իսկ թե ի՞նչպես ե դրանից փորձանք գալիս իրա՞ Ոհանի գլխին — եդ մասին մի քիչ հետո: Առաջմ ասենք, թե ինչո՞ւ թուրքը, իրա պատմելով, յետ եր մնացել իրանց զորքից: Յերբ Ոհանը լուր առավ, վոր մեր հայոց զորքը գալիս ե —



Թուրքին իսկույն տարավ գոմը, վոր յեկողները չտեսնեն: Ու եղանդ՝ գոմում, տեղ հարմարեցրեց նրա համար, աշտինքն էն տեղը, ուր քնում եր ինքը, տվեց նրան: Հետո հնապես, ի միջի աշտց, հարցրեց, թե ինչպես է վոր նա յետ է մնացել իրանց զորքից: Յեվ թուրքը կարճ պատմեց, թե ինչո՞ւ: Յերբ ասկյարները գնում են — նրան մի քանիսի հետ դառաւ էն նշանակում գեղում, բայց նրա ուսը, հին վերքը, վոր քանի որ եր ցավում եր և տաքություն տալիս, եդ որն ել տաքությունը բռնում է, սաստիկ տաքություն է գալիս, հնապես վոր վորտի վրա չի կարում կանգնի, ու գալիս է մտնում հով ոթախները — պառկում: Ու մնում է եղպես... մինչև Ոհանը գալիս է: Այ ինչպես է յեղել, վոր նա յետ է մնացել իրանց զորքից: Տաքության մեջ նա մինչև իսկ չի իմացել ինչպես է յեկել ու պառկել:

— Այ, քեզ բան, ասում է Ոհանը. — Բա հիմի ինչ անենք, վոր մերոնք քեզ չտեսնեն...

Թուրքը լուռ, խեղճ-խեղճ նայում է Ոհանին, ու կարծես, ուզում է ասել — յետ բան չգիտեմ, իմ կյանքը քո ձեռին է:

Իսկ Ոհանը մտածում է, մտածում, ու վեր կենում:

— Յախշի, ասում է, դուր բուրդա...

Ու դուրս է գնում. գնում բարձրանում է իր դիտարանը — գոմի կտուրը և, ձեռը ճակատին՝ նայում ճամբաներին, թե չի՞ գալիս արդյոք մեր զորքը հայոց:

Բայց զորքը չեկավ այդ որը. առավոտը միայն 20—30 զինվոր մտան գյուղ, և տեսան գյուղը դատարկ՝ առաջ անցան. Հարցրին Ոհանին, թե թուրքերը յ՞երբ են գնացել. — «Մի որ առաջ» պատասխանեց Ոհանը:

Սրանք գնում են, յետեից՝ յերեկոյան գալիս է մեր զորքը հայոց — հետն ել ինքը գնեհրալ Նազարեկովը: Գալիս են ու գեղի տակի շուտով անցնում: Դրանցից մի քանի հոգի միայն — մի յերեսուն զինվոր ու յերկու աֆիցեք մնում են գեղում. մնացածը անցնում են առաջ, վոր գնան Ղարաքիլիսա: Աֆիցեքները տեղավորվում են ելի տերտերի տանը, զինվորները հար պատահում է: Ո՛ր, եդ զինվորները — վորտեղ մի հավ են տեսնում՝ ընկնում են յետեից: Ինչ վոր թուրք ասկյարներից ազատվել է, ուզում են բռնել դրանք:

Եսպես, Ոհանն սպասում է, վոր զորքի յետեից փախած ժողովուրդը կըգա, նրանց հետ ել իր տնեցիները: Բայց չկան: Զինվորներն ասում են՝ «Ժողովուրդը կըգա յերկու շաբաթ հետո»... Յերկու շաբաթ հետո... Շատ ուշ է: Արտերը հասել են, անտառի պլտուղները հասել են, — հավաքող է պետք, իսկ նրանք՝ յերկու շաբաթ հետո... Մեկ ել մտածում է — յեթե գան ու, հանկարծ, թուրքին տեսնեն իր մոտ...

Այ քեզ բան...

Բայց լավ է, դեռ յերկու շաբաթ կա. մինչև եդ մի բան կանի, մտածում է Ոհանը, ու հնապես է անում, վոր յեկած զինվորները թուրքին չտեսնեն. իսկ թուրքին պատվիրում է, վոր դուրս չգա բակը. «Բիւլլըսան, դուրս չգաս հան, ըլզըմ դոշուն գալդի»...

Գոմի մութի մեջ թուրքի աչքերը լայն բացվում են, և նա՝ անշարժ, զարմացած, ելի խեղճ-խեղճ նայում է Ոհանին: Իսկ Ոհանը նրան՝ «Դորխաւա, վախիլ մի», ասում է. ու այնուհետե գերեկով — մեկ-մեկ, իսկ իրիկունները — հաճախ, գոմում նստած՝ կես թուրքերենով, կես հայերենով, բայց մեծ մասամբ նշաններով



զրուցում ե թուրքի հետ—վորտեղացի՞ յի, քանի՞ տա-  
րեկան, վաղ՞ից յի ամուսնացած, ու եսպիս...  
— Ութ տարի յի ամուսնացած եմ, ասում ե  
թուրքը մատները ցույց տալով. նա միշտ կարծում ե  
թե Ռհանը խոսքերը չի հասկանում և հասկացնելու  
ամենալավ միջոցը մատներն են, ու ցույց ե տալիս  
ութ մատը:

— Ութ... իմ Մինասն ել ութ տարվա պսակ-  
ված եր, ասում ե Ռհանը ու հառաչում: Մինասը—  
այսինքն նրա սպանված վորդին ել ութ տարվա  
պսակված եր, այս, վոր սպանվեց Կարսի կովում:  
Բայց կինը, հարսը դեռ սպասում են նրան, թե կըզա մի  
կողմից: «Սրա մերն ու կինն ել կապասեն սրան», մտա-  
ծում ե Ռհանը ու հանկարծ հարցնում թուրքին. — յարեդ  
վճնց ա, — ցույց ե տալիս նրա ուսը. — Ելի ցավ՞ում ա...  
— Յոք, — ասում ե թուրքը, — առաջվա պես չի  
ցավում:

— Յախշի, յախշի, ասում ե Ռհանը, — մի յերկու  
անգամ ել փոխենք՝ կըլավանա... Ենպես չի՞...

— Տեսնենք, ասում ե թուրքը:

Անցնում ե մի քանի որ, ու մի որ ել վերքը  
փոխելու ժամանակ, թուրքն ասում ե — յիթե մի քիչ  
կաթ լինի, վերքը լվա — ավելի շուտ կըլավանա:

— Հա՛, ասում ե Ռհանը. — եդ յիս գիտեյի վոչ...

Ու գնում ե Յեղսանի մոտ կաթի:

— Կարա՛կ չես, Յեղսան հարս, մի քիչ կաթ տաա...

— Ի՞նչ կա, զարմանում ե Յեղսանը. — Ի՞նչիդ ե  
կաթը...

— Ենպես, ասում ե, սիրտս ուզում ե. յիթե ու-  
նեա՛ մի քիչ տուր:

Պառավը բերում ե մի բաժակ կաթ. «Ա՛ռ, Ռհան,  
խմի՛»...

— Ձե, տուն պաի տանեմ, ասում ե Ռհանը, — ու-  
զում եմ տաքացնեմ, փրթեմ:

— Հա՛, դե վոր ըթենց ա, բեր, ասում ե պառավը,  
— մի քիչ ավելացնեմ... Աֆիցերների համար տարան,  
մի քիչ մնացել ա...

Ու ավելացնում ե. փարչի մեջ ե լցնում ու տա-  
լիս Ռհանին:

Ռհանը բերում ե ու թուրքի վերքը լվանում:

Յեվ ի՞նչ եք կարծում — թուրքի ասածը ճիշտ  
դուրս յեկավ — կաթը ոգնեց: Ել ցավ, տաքություն չը-  
կա: Նրա դեղնած դեմքը կամաց-կամաց պարզվում ե:  
Որե-ցոր իրին լավ ե զգում:

— Հը՞, յախշի հարցնում ե Ռհանը իր պառա  
թուրքերենով:

Թուրքը գլխով ե անում ու ինչ-վոր մոմռում:

— Սարսաղ, սարսաղ, ասում ե Ռհանը ձեռը նը-  
րա գլխին դնելով ու գլուխը հուպ տալով. — Դե թեզ  
արա, լավացի ու ըստեղից ուղե ելի, թե չե...

Թուրքը նայում ե նրան. նրա խոսքերից բան չի  
հասկանում, բայց անհասկատանում ե: Իսկ յերբ Ռ-  
հանը հաց ե տալիս նրան — ուտում ե և միշտ աչքի  
պոչով Ռհանին նայում. կարծես վախենում ե նրա  
ներկայությունից թե կերակրից: «Կեր, շաշ անհավատ,  
կեր. քեզ զեղել չեմ. վախիլ մի... Կեր լավացի ու գը-  
նա, ախպիր»... Ու ելի հանաքով խփում ե նրա ուսին  
կամ գլխին... Իսկ յերեկոները գոմի դուռը փակում ե  
թուրքի վրա ու ինքը գնում սենյակում քնելու: Ես  
բանը, ինչպես յերևում ե, թուրքին շատ ե անհանգըս-



տացնում, վորովհետև ամեն առավոտ, յերբ ինքը՝ Ոհանը դուռը բացում է, ներս մտնում—տեսնում է թուրքը շորերը հագին անց ու դարձ է անում: «Ի՛նչ թեզ ես վեր կացել, տո՛ւ... Ինչպես բեկում ա՛լ իսկի քնել չես, հօը»: Թուրքը գլխով է անում, թե քնել է, ու ելի բերանը հուպ տված, անց ու դարձ է անում: Ինչպես յերևում է՝ կասկածում է, թե իր գլխին մի փորձանք չըբերի, ի վերջո, հա հայր: Ու զգուշանում է, մինչև անգամ չի ել հարցնում՝ ի՛նչ կա... Մտամուր շրջում է կամ տախտի վրա նստած՝ լուռ: Յերբեմն, շրջելու ժամանակ, կանգնում է՝ ականջը ձենի կամ աչքերը գոմի վոստայնով ծածկված յերդիկին: Հետո հառաչում է սըրտի խորքից, ենպես, կարծես սրտի թելերը կտրտվում են. «Կնկա, երեխանց մասին ա մտածում», ասում է Ոհանը մտքում: Ու եսպես—որը յերեք-չորս անգամ, Ոհանը մտնում է թուրքի մոտ—հաց է տալիս, արևածաղիկ է բերում բոստանից, վոր նա «մլուլ» տանի, զրուցում է կամ յերկու խոսք է ասում ու գընում՝ բոստանը բանելու կամ Յեղսանի հետ զրուցելու: Ու եդ ժամանակ գոմի դուռը յերբեմն փակում է, յերբեմն մոռանում ու—բաց թողնում...

Ու եղպես մի անգամ ել անա մոռացավ փակել, ու եդ մոռանալը ծանր նստեց նրան: Դա յեղավ պատճառ, վոր են փորձանքը յեկավ նրա գլխին, վոր չի յեկել, գուցե, վոչ մի մարդու գլխի:

Եսպես, իրիկնադեմ է ու Ոհանը, հայտնի չե՛ն ուր է գնացել (հետո, ասենք, պարզվեց, վոր գնացել էր բոստանի համար ջուր կապելու): Նա չկա, իսկ պառավ Յեղսանը յեկել, նրա բակում վորոնում է նրան: Նայում է բոստանը, նայում է արևածաղիկներին

ու սիմինդների արանքը: Չկա: «Բա ես յեղանը հարկավոր ա ու»... ասում է ինքն իրեն և նայում՝ դեռ ուղեն... Հետո կամաց կամաց դեպի գոմը—գուցե ենտեղ լինի. ինքը չլինի ել—յեղանը ենտեղ է լինում, կվերցնեմ, մտածում է Յեղսանը ու, դուռը բանալով՝ մտնում է գոմը... Մտնում է գոմը ու ինչ... Ոհանի փոխարեն— թուրքը նրա առաջ... Շատ ել Յեղսանը վոչ մի թուրքից չեր վախենում, բայց եստեղ վախենում է. վախենում հանկարծ տեսնելիս. տեսիլք է, ինչ է... հանկարծակի յե գալիս ու, զարհուրած, դուրս գընում. մտածում է—չլի թուրքերը յեկել են նորից... Ճոնեղին ուժ է տալիս ու գնում տուն, ու են է մոտենում է իրա տան—հանդիպում է Ոհանին, վոր թաց բահը ձեռին գալիս է առվի կողքով—ջուր է կապել... «Քեզ ի ման գալիս, Ոհան, ասում է պառավը իրան կորցրած.—Են ի՛նչ թուրք ա ձեր գոմում»...

Ոհանը շփոթվում է, բայց պահում է իրեն:

— Թուրք, ի՛նչ թուրք...

Պառավը շարունակում է մի քիչ զարմացած, հեվում է, գոգնոցով ճակատի քրտինքը սրբում ու ասում.—Յեկա յեղանին, ընտեղ չեյիր... Յեղանը հարկավոր էր. քամին խոտը թափել ա, ասում եմ՝ գնամ Ոհանի յեղանը բերեմ... Յեկա, դու չկաս: Ասի՛ մըտնեմ գոմը, իցե ընտեղ ըլի... Ու ինչ տեսնեմ—հրես մի թուրք...

— Թուրք, զարմանում է Ոհանը.—ինչ թուրք...

— Հա, թուրք... Սիրտս փորս ընկավ...

Ոհանը գլուխը պտտում է, չգիտես իրա մոռացկոտության վրա թե պառավի վրա.—Թուրքը վորտեղից, ա հարս, աչքիդ բևեցել ա...



— Ինչ յես ասում, ա՛ տղա, իմ աչքով տեսա...

— Սարսաղ բաներ յես ասում,—բարկանում ե Ոհանը.—Թուրքը իմ գոմում ինչ ա անում. աչքիդ բե-  
վացել ա, ուրիշ վոչինչ...

Ու ծիծաղում ե պառավի վրա...

Յեղսան տարակուսած՝ ձեռը դնում ե շուրթին ու  
մտածում, թե չլլի, իսկապես աչքին բևացել ե.—  
Ե՛հ, կլլե՞ վոր, հարցնում ե զարմացած:

— Խի չի լլի: Ենքան թուրք յես տեսել, ասում  
ե, թուրքից ա՛ն առած յես—բաղումդ ել կըտեսնաս, աչ-  
քիդ ել կբևա...

Շշմած, զարմացած պառավը գնում ե տուն կաս-  
կածը որտում, թե կարող ե պատահել, վոր աչքին  
թուրք յերևա... Իսկ Ոհանը, վախեցած՝ դեպի գոմը: Չը-  
գիտես ինչո՞ւ, նրան թվում ե, վոր թուրքը պառավին  
տեսնելուց հետո, փախած պիտի լինի. տեսնելու եմ—  
դա ել մի խայտառակություն. «վորտե՞ղ եյիր».—«Ես ին-  
չի տանը»... խայտառակություն...

Հով իրիկնապահը կամաց-կամաց մթնում ե: Մո-  
տիկից, Ծիրանանց հայաթից լսվում ե զինվորների  
յերգը և մի մաղիանի խրխնջոց, վոր կանչում, վորո-  
նում ե կարծես քուռակին:

Ոհանը անհանգիստ, գլուխը կորցրած իրեն քը-  
ցում ե գոմը: Գոմը մութն ե. յերգիկից հազիվ լույս  
ե ներս ընկնում: Թուրքը կանգնած ե գոմի մեջտեղը՝  
այլայլված, ակա՛նջը վոտնաձենի:

— Հը՞, նեչա սան, վրա յե պրծնում Ոհանը հե-  
վալով:

Թուրքը շփոթված, վախեցած ե. խոսում ե ընդ-  
հատվող ձայնով.—Վատ չի, բայց քիչ առաջ մի կին,

մի պառավ կին յեկավ ու իրան տեսավ ետեղ: Դրա-  
նից մի բան չի պատահի...

— Հը՞, Ոհան ամու, զատ ուժասը՞ն...

Նա խոսում եր կամաց, ձայնը կոկորդում խեղ-  
դելով, և մութի մեջ միայն նրա աչքերի սպիտակուց-  
ներն են յերևում սև դեմքին, և դրանից Ոհանն  
զգում ե, վոր թուրքը անհանգիստ ե, շատ անհան-  
գիստ: Ինքը նրանից ավելի յե անհանգիստ, բայց  
ձեռը խփում ե նրա մեջքին ու ծիծաղում.

— Վախիլ մի. դորխմա. բուրդա դուր, մի բան  
կանենք...

Ու դուրս ե գալիս և դուռը փակում թուրքի վրա:  
Լսվում ե ելի զինվորների յերգը Ծիրանանց հա-  
յաթից և մաղիանի խրխնջոցը, վոր կարծես կանչում,  
վորոնում ե քուռակին:

Դուրս յեկավ Ոհանը բակը ու մտածում ե՝ ինչպես  
անի, վոր թուրքի հետքը ծածկի, յեթե վոչ մի որ ել,  
տեսար, զինվորները յեկան... Դե եմ ժամանակ արի՛  
պատասխան տուր...

Մտածում ե Ոհանը ու գնում-գալիս տան առաջ:  
Աստղերը դուրս են գալիս յերկնքում, զինվոր-  
ների յերգը լուծում ե, ձին կտրում ե իր խրխնջոցը,  
բայց Ոհանը գնում-գալիս ե ու մտածում... Հոգնում ե,  
վերջապես, նստում ե շեմքի քարին ու նորից մտա-  
ծում, թե ինչ անի, վոր թուրքի հետքը կորցնի կամ,  
ինչպես անի, վոր նրան փաս չտան: Բռնելու ժամանակ  
ասի՝ մեր հարևան գեղերի թուրքերից ե—չեն հավա-  
տա. շորից, բանից կճանաչեն, վոր հստեղի թուրք չի...

Մտածեց Ոհանը, մտածեց յերկար ու, վերջը, վո-  
րոշեց—տանել նրան անտառ ու բաց թողնել. թող



գնա իրանց թուրքերի մոտ. թե չե՛կըբռնեն, իրա համար ել վատ ե: Ձե, թող գնա, մտածում ե ու վորոշում—այո, կըտանի անտառ ու ճամփեն ցույց կըտա, թե վոր կողմով պետք ե գնալ...

Բայց այդ մասին առաջուց գեռ պետք ե խոսել իրա թուրքի հետ—տեսնենք նա ինչ կասի...

Կես գիշերից անց եր արդեն, յերբ Ոհանը մըտավ գոմը:

Թուրքը արթուն եր. ըստ յերևույթին, շատ դարձացավ Ոհանի գիշերային այցելութունից: Իսկույն վեր թռավ՝ կանգնեց: Մութի մեջ աչքերի սպիտակուցներն են յերևում ելի:

Ոհանը մոտեցավ և ձեռը դրեց նրա ուսին:

— Գեղաղ, ասում ե:

Թուրքը զարմացած ե. չի հասկանում ո՛ւր պետք ե գնալ կես-գիշերին, ո՛ւր ե ուզում տանել իրեն Ոհանի ամուն:

— Գեղաղ, գեղաղ, ասում ե Ոհանը,—գնա՛ ձերոնց մոտ. հերիք ե ինչ-վոր մնացիր, ախպեր...

Ու իր պառտ թուրքերենով, հայերեն խառնելով, մասամբ նշաններով հասկացրեց թուրքին, վոր նրա տեղը իմացել են, ել մնալը վտանգավոր ե.—Հասկանում ես. քեզ վոր ետեղ տեսան՝ քեզ համար ել վատ կըլի, ինձ համար ել. Գյալ գեղաղ մեշա... Ենտեղ ճամփեն ցույց կըտամ—գնա, ախպեր, աստված քեզ հետ... Սան դա սաղ ոլ, ման դա սաղ ոլ...

Թուրքը զլխի ընկավ բանն ինչումի ե. հասկացավ:

— Յախշի, յախշի, բու սհաթ.—ասավ ու սկսեց շորերը կարգի բերել. գոտիքը կապեց, տրեխներ թելերը ամրացրեց:

— Գեղաղ...

Դուրս յեկան կանգնեցին դռներ ու ականջ դրին, թե մարդու ձայն, վոտի ձայն չի գալիս արդյոք: Ձե, վոչ մի ձայն չկա. զինվորներն ել չեն յերգում, գեղը քնել ե. շներն անգամ չեն հաջում—ինչպե՛ս խաղաղ ե: Ու գիշերն ել վոչ մութ ե, վոչ լուսավոր. լուսին չկա. աստղալույս ե միայն:

— Գյալ, ասավ Ոհանը, ու առաջ ընկավ:

Ուղիղ ճամփեն թողած՝ գնում ե բոստաններով, անցնում ե ինչ-վոր ցածրիկ պատերի վրայից, լոք ե տալիս փշոտ ցանկապատերից, նորից բոստաններ, նորից պատեր. տեղ-տեղ գնում ե կուզ-կուզ, ու շուտ-շուտ յետ նայելով՝ շշնջում. «Գյալ... գյալ»... Թուրքը հետևում ե և ամեն բանում որինակում նրան. ուր Ոհանը կռնում ե և կուզ-կուզ անում, ինքըն ել գնում ե կռացած ու կուզ-կուզ անում: Իսկ յերբ նա կանգնում ե և ականջ դնում, ինքն ել կանգնում ե և ականջ դնում:

Բոստաններից դուրս յեկան շուտով կալիքը, իսկ կալերից՝ ուղիղ գեպի անտառ: Տեղը դիւր ե—բարձրանում են կամաց-կամաց, հեռւմ են, քրտնում, իսկ Ոհանի սիրտը հնպես ե քցում, վոնց վոր խնոցի: Բայց վոչինչ. բարձրանում ե ելի թուրքից արագ. գնում ե նրա առաջից ու կանչում ե ելի. «Գյալ, գյալ»... Կանչում ե կամաց, զգուշ, ենպես վոր մարդ չլսի... Իսկ առաջը՝ անտառը կանգնած ե պարսպի նման, անշարժ, ու խուլ խշշոց ե գալիս միայն... Դա՛ կամ տերևներն են թափվում կամ ջրի ձեռն ե, ասում ե Ոհանն ինքն իրեն և մտածում ե—անտառ հասավ՝ ամեն ինչ վերջացած ե—թուրքին ճամփա կըդնի, կազատվի, կը-



հանդստանա... Ու զոռ ե տալիս վոտներին. դժվար տեղերը բռնում ե թփերից, մացառներից... Գնում ե ու թուրքը նրա յետևից...

Հասան, վերջապես, անտառի պոռնակը. Ոհանը մի խորը շունչ քաշեց:

— Դե, գեղ, ասավ:

Ու, հանկարծ, խոսքը դեռ բերանում, ծառերի տակից մի ձայն.

— Ո վ ե, կանգնեցեք...

Թուրքն իրան քցեց մերին, իսկ Ոհանը մնաց շշմած, հանկարծակի յեկած, ճիշտ ենպես, ինչպես, անսպասելի կերպով, թուրքին տեսնելու որը. ձեռներն ելլի կախ ընկան կողքերից, ու մնաց անշարժ՝ աչքերը ձայնի կողմը:

Կարծես գետնի տակից դուրս յեկավ մեկը և տնկվեց մերու պոռնակին: Հետո, արագ-արագ մոտեցավ հրացանը ձեռին: Պահակ գինվոր եր: Նրա ձայնի վրա մյուս կողմից յեկավ մի ուրիշ պահակ, ու յերկուսով շրջապատեցին Ոհանին. — Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, ո՞ր ես գնում...

— Վոչինչ, հավաքում ե իրեն Ոհանը. — ենպես յեկել եմ մերին...

— Իսկ են ո՞վ եր, վոր փախավ...

Ոհանն իրան չի կորցնում. — Փախավ... Ձե ասում ե, մարդ չկա. յես մենակ եմ:

— Յես քոն եմ, բարկանում ե գինվորը. — իմ աչքով տեսա, մինը փախավ մերին...

Ոհանը՝ չե. ինձհետ մարդ չի յեղել, յես մենակ եմ...

Նրան չհավատացին և բռնեցին բերան տերտերանց տուն՝ իրանց ափիցերները մոտ:

Մյուս որը, ճաշի դեմ, տերտերանց տան ափիցերները քննեցին նրան:

Սկզբում Ոհանը վոչինչ չեր ուզում ասել, ուրանում եր. բայց յերբ ափիցերները հայտնեցին, թե իրենք գիտեն, հաստատ իմացել են, վոր նա իր տանը, այսինքն գոմում, թուրք ե պահել և գիշերը ճանապարհ ե քցել, նա դարմացավ. — Եդ ձեզ ո՞վ ասավ:

— Նու, եդ կարևոր չի, ասում ե ափիցերը. — դու ասա տեսնենք ի՞նչ գործ ունեք թուրքը քեզ մոտ:

— Հիվանդ եր, ասում ե Ոհանը:

Ափիցերները ծիծաղում են. — Հիվանդ...

— Հա, հիվանդ եր, ասում ե Ոհանը ու զարմանում ե, վոր իրեն չեն հավատում:

— Իսկ քանի՞ որ ե քեզ մոտ եր:

— Կլի տաս որ...

— Տաս ո՞ր... Հապա ինչո՞ւ մեզ չեյիր հայտնում, վոր քեզ մոտ եղպես մարդ կա, թեկուզ հիվանդ, հը... —

Ոհանը միամիտ նայում ե ափիցերներին. նա եդ մասին իսկի չի մտածել. — Ինչո՞ւ համար հայտնեյի վոր... Ենա հիվանդ եր, ասի՛ թո՞ղ մնալավանա...

Ափիցերները իրար են նայում և գլուխներն որորում:

— Լավ, յեթե հիվանդ եր, ինչո՞ւ իրանց մարդիկ հետները չտարան: Հը... Ինչո՞ւ եյին թողել...

— Ինչո՞ւ եյին թողել... — յերկարացնում ե Ոհանը միրուքը բռնելով ու պատմում ե, թե ինչո՞ւ. — Նրանց գնալու ժամանակ դրա տաքությունը բռնում ա, մնում ա ոթախում ընկած: Նրանք ել, ինչպես յերևում ա, միտները չեն քցում, թե ենպես մեկը պակաս ա...

Ափիցերները իրար յերեսի յեն նայում ու գլուխներն որորում.



— Տարեք...

Յերկու որ հետո Ոհանին գնդակահարեցին, իր-  
րև թշնամու լրտես պահողի: Գնդակահարեցին ան-  
տառի ծայրում և հենց ենտեղ ել թաղեցին:

Գնդակահարելու ըոպեյին ել նա ասում, համո-  
զում եր, թե ինքը վոչ մի մեղք չունի, վոր թուրքին  
պահել ե ինչպես վիրավոր մարդու—եսպես, ենպես...  
բայց նրան չհավատացին և գնդակահարեցին...

Յերբ սպանության լուրը իմացվեց գյուղում,  
պառավ Յեղսանը գունատվեց սաստիկ, լիքը կովկիթը  
քցեց ձեռից ու ծնկներին խփեց.— «Լեզուս չորանար»...

Ու այնուհետև, մինչև եսոր ել, յերբ խոսք ե  
լինում Ոհանի մասին—նա ծնկները ծեծում ե միշտ  
և կրկնում ինքն իրեն.

— Լեզուս չորանար, օխ, լեզուս չորանար...

Բանից պարզվում ե—թուրքին տեսնելու մյուս  
որը՝ առավոտ, նա՝ դեռ անարեկ, աՓիցեռնեռի համար  
կաթ վերցնող զինվորին պատմում ե իր վախի մա-  
սին, թե ինչպես Ունանանց Ոհանի գոմում թուրք  
ե տեսել և սաստիկ վախեցել... Զինվորներն ել՝ ա-  
ֆիցեռներին: Խուզարկում են Ոհանի տունը, գոմը ու,  
վերջը, տեսնում են՝ Ոհանը են մարդն ե, վոր բռնվել  
ե անտառի պոնկին... Ու ամեն ինչ պարզվում ե...

Ահա թե ինչպես յեղավ Ոհանի մահը, վորի մա-  
սին շատ են պատմում թե Կաղնուտում և թե մոտիկ  
գեղերում...

1920.

Դաւիթ

Յ Ե Ր Գ Ը



Մի ծանոթ բժիշկ, վոր մի ժամանակ զբաղվել է  
և ռազմական գործերով, պատմում է.

...Յերեք որ անընդհատ կռիվ եր Շուշի քաղա-  
քում. յերեք որ հայ և թուրք կռվում եյին իրար դեմ,  
կռվում եյին անխնա ու մոլեգնած: Դիրք եյին մըտ-  
նում ուր պատահում եր—փողոցներում, տների տա-  
նիքներին, անկյուններում, քանդված շենքերի մեջ,  
և վորովհետև նահանջի ճանապարհ չկար ու ահը վեր  
եր քան մահը—կռվում եյին կատաղի: Մութ գիշերն  
անգամ հրացանաձգությունը չեր դադարում... Թրճի  
թնխ-թնխ-թնխ—լավում եր անվերջ այս ու այն թաղից,  
այս կամ այն գիրքից... Համազարկերից ու գողոցներից  
կռվողների՝ քաղաքը հաճախ ցնցվում ու զոլում եր վախ-  
վորածի նման. լուսամուտների ապակիները զնդզնդում  
եյին ու, մեկ ել տեսար, այստեղ կամ այնտեղ փշուր-  
փշուր լինելով՝ աղմուկով թափվեցին ցած... Բարեբախ-  
տաբար, թնդանոթ չկար, յեթե վոչ քաղաքը կկործան-  
վեր հիմնահատակ—կատաղությունն այնքան մեծ եր,  
այնքան խոր... Յերբ աչքերս փակում եմ, կարծես,  
բոլորը տեսնում եմ—վերև մութ, սև կամ աստղազարդ  
յերկինքն է, ներքևը խաված քաղաքը՝ կատաղած,  
զազաղած խմբերով: Ներքև ճարճատու եմ հրացան-  
ները՝ ջարդվող տախտակների նման, վերևից աստղերը  
ժպտում են հաճաքաբար. կամ մութ յերկինքն է անխռով  
նայում ցած: Ու հարևան խմբերը կռվում են—թնխ-  
թնխ-թնխ...



Յեա հայկական խմբերի ղեկավար եմ կամ, ուրիշ խոսքով, հրամանատար։ Հագել եմ յերկարաձիտ կոշիկներ, (ոսլայած շապիկ, ոձիք, շլապա նետել եմ մի կողմ) — հագել եմ հասարակ բաճկոն, գլխիս դրել մի փոքրիկ փափախ և տորճանակը կողքիս կախած կամ, շատ ժամանակ, ձեռիս բռնած՝ անցնում եմ խմբից-խումբ։

— Տղեք, զոչախ կացեք։

— Տղեք, չքնեք։

— Տղեք, այս ինչ խումբը նեղ տեղ է, ոգնու-թյան հասեք։

Ու յերեք յերեկո շարունակ այսպիսի կարգադրություններ։ Յերեկը, յերբեմն, դադարում եր կռիվը, բայց յերեկոն վրա հասնելուն պես՝ վերսկսվում առավել կատաղի թափով։ զիշերվա հետ մի անհայտ ձեռք, կարծես, ղեկավարում և շարժման մեջ եր դնում բոլորին։

— Տղեք, պատրաստ։

— Տղեք, ժամանակն է։

— Տղեք, կրակեցեք...

Ու սկսվում եր՝ թրակ-թակ-թակ-թակ...

Հրացանները ճարճատում են անվերջ, ու զիշերային յերկինքի տակ՝ մութ քաղաքում, ուր յերկշուղից կրակներ չեյին վառում, բայց ամեն կողմից, կարծես, վոխակալ աչքեր եյին քեզ նայում։

Չորրորդ յերեկոն եր։ Գլխավոր խմբին, վոր կռվում եր արդեն թշնամու ամենակարևոր դիրքերի դեմ, կարգադրություններ անելով՝ յերկու թիկնապահով անցնում եմ մյուս խմբերին։ «Տղեք, քաջ կացեք... Տղեք, նամուսով յեղեք... Տղեք, ձեր անունը գետնովը չտաք»...

Կռիվը վերսկսվել է բոլոր դիրքերում. հրացանները ճարճատում են ելի ջարդովոդ տախտակների նրման. զիշերային ոգի մեջ սուլում, վզգում են գնդակները, ու այդ ճարճատյունի միջով, սուլող գնդակների տակով՝ յես անցնում եմ խմբից-խումբ, դիրքից-դիրք և, վերջը, նորից վերադառնում գլխավոր դիրքը, ուր պետք է վճովի կռվի բախտը։

Վերադառնում եմ և — ինչ եմ տեսնում — ամբողջ դիրքը լռած։ Թողել եմ դրան տաք կռվի մեջ — հիմա՝ լռու, լուռ է, ինչպես գերզման։ Մի բոպե ինձ թվում է, վոր այդ դիրքի խումբը նահանջել է, տեղափոխվել մի այլ դիրք կամ, լուռ հետապնդում է թշնամուն։ Ականջս հեռավոր ձայների՝ մոտենում եմ դիրքին, մոտենում եմ ավելի։ Չէ, տեսնում եմ՝ չեն հեռացել։ Կամաց-կամաց նկատում եմ մարդկային ուրվագծեր, գլուխներ, հրացաններ... Սպանված են, ինչ ե... Վոչ տեսնում եմ՝ գլուխները շարժվում են. աղեքը հրացանները բռնած են, բայց լուռ են։

— Տղեք, ինչի՞ յեք լուռ, ասում եմ. — Տղեք...

— Մոռ, պատասխանում են։

Նրանց այդ խորհրդավոր ձայնից յես բան չեմ հասկանում և հարցնում եմ կրկին։

— Տղեք, ինչի՞ յեք լուռ... Տղեք...

— Ըստ... պատասխանում են դարձյալ, այս անգամ գրեթե բոլորը միասին։

Բարկությունից արյունը գլուխս է տվել, բարկությունից, ուզում եմ պայթել պատասխանատվություն, վտանգ և այլն, իսկ սրանք հրավիրում են ինձ լուռթյան, փոխանակ հասկացնելու՝ ինչ կա։ Մյուս դիրքերում արդեն կատաղի կռիվ է գնում, իսկ սրանք



լուել են և ինձ ել հրավիրում են՝ լուել: Յես ջղագրգիռ մոտենում եմ նրանց.

— Տղեք, ասեք, վերջապես, ինչ՞եւ յեք լուել:

— Սուս, լսիր, ասում են:

Ի՞նչը լսեմ—չեմ հասկանում. ջղերս դողում են և ջղերիս ցնցումից վռչինչ չեմ լսում:

— Ի՞նչը, ի՞նչը լսեմ:

— Լսիր, լսիր, ասում են հանգիստ:

Վերջապես, զսպում եմ ինքս ինձ և ականջ դնում: Ի՞նչ կա, ասում եմ, տեսնենք մի... Ականջ եմ դնում և... վերևից ինչ-վոր ձայն եմ լսում... Վերևից, ավելի շուտ ողի միջից... Ի՞նչ վոր մեկը յերգում ե... Ո՞վ ե, վերտեղ ե—լավ չեմ տեսնում... Վերջապես, տղերքը ցույց են տալիս մի յերկհարկանի տուն թուրքական թաղում... Տեսողութունս լարում եմ դեպի այդ տունը և, աստղերի լույսով, նրա տանիքի վրա նշմարում եմ մարդկային մի կերպարանք, վոր կանգնած ե և ձեռներն ողի մեջ տարածած: Իր այդ դիրքով նմանում ե նա թևատարած մի թռչունի, վոր հենց նոր իջել ե այդտեղ... Խոսում ե ինչ վոր և յերգում թուրքերեն...

Աստղավարդ յերկնքի տակ այդ մարդը թվում ե տեսիլք, գիշերային վոգի, վոր իջել ե խռոված քաղաքի գլխին և խոսելով՝ յերգում ե բարձր ու զի՛լ ձայնով:

Ի՞նչ ե յերգում—սկզբում վռչինչ չեմ հասկանում, չեմ ըմբռնում, վորովհետև ջղերս դեռ վոստովոսում են և միտքս, անհանգիստ, գիրքից—գիրք, խմբից—խումբ և թռչում: Բայց, հետզհետե, հանգստանում եմ և ականջ դնում՝ մի բան հասկանալու...

Թուրքը յերգում ե սկզբում կամաց, հետո ծոր տալով՝ տխուր յեղանակ ե վերցնում ու սկսում մի զի՛լ բայաթի... Յերգում ե ու թևերը տարածած դանում քաղաքի չորս կողմի վրա:

— Յեղբայրներ՝ հայեր, թուրքեր, լսեցեք ինձ... Կրկնում ե այս խոսքերը մեջընդմեջ ու շարունակում բայ-թին:

Նա յերգում ե, ու մոտիկ՝ հայ և թուրք դիրքերը լսում են նրան, իսկ հեռվում, հեռու դիրքերում՝ հրացանները ձարձատում են դեռ. նրանց դեռ չի հասել թուրք յերգչի ձայնը: Այդ բանը թուրքն ինքն զգում, լսում ե, կարծես, և ձայնը բարձրացնում ավելի.

— Յեղբայրներ՝ հայեր, թուրքեր, լսեցեք ինձ...

Ու յերգում ելի—զիլ, զանգակի պես զրնգուն ձայնով: Յեվ աստղավարդ յերկնքի տակ, խռովահույզ քաղաքի վրայով նրա յերգը ավիք—ավիք գնում ե հեռուները, դողանջում ե պարզ ոգում այնպես սուր, ուժգին, վոր նրա ձայնից աստղերն ել, կարծես, զըրնգում են յերկնքում:

Բայց ի՞նչ ե ուզում ասել թուրքն իր յերգով, ի՞նչ ե նրա նպատակը—չեա հասկանում... Սակայն, լսում են նրան հայ և թուրք խմբերը միասին. լսում եմ և յես վերասլաց մտքով, լսում եմ հիացած—այնքան նուրբ, գեղեցիկ ե յերգում թուրքը... Սկզբում, վոր սպասում եյի, թե թուրքն ահա մի բան պիտի ասի, վորպես պատգամավոր, այդ միտքն այլևս չի դբադեցնում ինձ. յես լսում եմ միայն նրա յերգը... Մի բովե թվում ե ինձ, թե դա խարդախ, դավադիր միջոց ե մեր ուշադրութունը գրավելու, վորպեսզի մեր



թիկունքից զարկեն կամ հանկարծակի բերեն, սակայն նկատում եմ, վոր թուրք ղերքերը նույնպես լուռ ունկնդիր են նրա յերգին, վոր շարունակում եր, զանգակի պես, զողանջել քաղաքի ամենաբարձր տանիքից... Ու մութ—կապույտ աստղադարձ յերկնքի տակ նրա յերգի յեկեջները լողում են ողում և փովում, տարածվում քաղաքի վրա...

Յերգեց այսպես թուրքը մի ժամ, յերկու ժամ, չորս ժամ, - դժվար և ասել վորքան ժամանակ,—նրա ձայնից հրացանաձգությունը հետզհետե լռեց բոլոր ղերքերում, և ամբողջ քաղաքը՝ շունչը պահած, կարծես մի սիրտ, մի ականջ՝ ունկնդրում եր նրան:

Այդ ղիշեր թե մեր և թե թուրքերի ղերքերը հրացան չարձակեցին: Յերգը վաղուց լռել եր, յերգիչ թուրքը աներևույթացել, բայց բոլորիս նայվածքը դեռ այն տան գլխին եր, ուր յերևաց ու անհետացավ յերգիչ թուրքը, վորպես գիշերային տեսիլք... Ողբ դեռ լիքն եր, ասես, նրա յերգի յեկեջներով և մենք, կարծես, լսում եյինք նրան ու վոչ-վոք չեր համարձակվում հրացանի ձայնով խանգարել այդ հանդիսավոր ժամը:

Յեւ այսպես՝ մինչև առավոտ...

1922.

Վ Ա Խ Ը



Գնում եյի գլուղ: Չորս հոգի եյինք միևնույն կուպեյում. Թիֆլիս գնացող մի ուսուցիչ, զանկապաններով և դերասանակերպ մի յերիտասարդ, վոր գնում էր Բաթում, քառասուն տարեկան մի ուսանող և յես:

Վորովհետև գարունն էր արդեն՝ փակ կուպեյում նստել չէր լինում, այդ պատճառով կուպեյից դուրս՝ միջանցքում՝ լուսամուտի առջև կանգնած՝ ծխում և զիտում եյի ջրադացի քարի պես պտտվող դաշտերը, բլուրներն ու լեռները, վոր շարունակ նորանոր տեսարաններով հաջորդում եյին իրար: Այս բոլորը, դրանց հետ և՛ գարնան յեռացող ողը, և՛ ձորակներում ու անտառի փեշերին մնացած շերտ-շերտ ձյունը, և՛ կռուկի պես շար ընկած գութանը—գրավիչ եյին ավելի, քան վագոնի ծանր մթնոլորտը, ուր պտտվում եյին սրամտությունը կորցրած անեկտոզներ և հնացած մասալներ: Գնացքը կանգ էր առնում կայարաններում, կիսակայարաններում, իջնում եյին հին ճամբորդները, յեկնում եյին նորերը, բերելով իրենց հետ նոր բարբառներ ու նոր իրեր,—յես սակայն, բոլոր այդ ժամանակ նայում եյի դուրս:

Յեվ ասիպես ժամեր անցան... Վերջապես, յերբ հոգնեցի, մտա ներս: Իմ տեղը բռնել էր մի նոր ճամբորդ իր փոքրիկ յերեխայի հետ միասին:



Յերկար վզով և խոնավ աչքերով նիհար մարդ եր: Ինձ տեսնելուն պես՝ նա ոտարոտի կերպով անհանգստացավ, այնպես, ինչպես շուն տեսնելիս պատրաստվում են պաշտպանվել: Նայեց աղջկան, նայեց ինձ. աշխատեց խանդարել իմ մոտքը աչքերի արտահայտիչ ակնարկով, վորով ասել եր ուզում կարծես. վոր ի դուր մտա ներս, վոր յես խանդարում եմ մի բան:

Ու այսպես այլայլված նայում եր ինձ, նայում եր կողքին պառկած յերեխային, վորի միայն խարտյաշ գլուխն եր յերևում ծոցավոր շալի տակից:

Առանց ուշադրություն դարձնելու նրա հուզումին՝ նստեցի դեմ ու դեմ մի այնպիսի ինքնավստահությամբ, վոր զգացնել տամ, թե յես նոր մարդ չեմ, այլ նորն ինքն ե, վոր առանց իմ հաճությունը հարցնելու, յեկել բազմել ե իմ տեղը:

Իմ լուռ հանդիմանությունը սակայն, նա կարծես չզգաց և շարունակեց անհանգիստ հայացքներ նետել իմ և քնած յերեխայի վրա: Տարորինակ եր... Բայց այս տարորինակ դրությունը յերկար չշարունակվեց: Խարտյաշ գլուխը շարժվեց հանկարծ և մանկական սպիտակ ու խմորի պես փափուկ մի թաթ դուրս յեկավ շալի տակից, ապա յերկրորդը, և նա աչքերը բացավ ու նայեց սուսառարկի:

Մարդն այլայլվեց ավելի քան առաջ. նորից անհանգիստ մի հայացք նետեց իմ կողմը և թիկունքը դեպի ինձ կռացավ յերեխայի վրա: Դրա կարիքը չկար, բայց կարծես նա ուզում եր, վոր յես յերեխային չտեսնեմ: Այնպես պատահեց սակայն, վոր յերեխան նրա թևի արանքով նայեց ինձ. մեր նայվածք-

ները հանդիպեցին և յես ժպտացի... Յերեխայի դալուկ դեմքով մի ցնցնում անցավ հանկարծ և նա՝ «հայրիկ, հայրիկ», կանչեց վախվորած, ու ձեռները, մեկնեց հորը:

Հայրն ամուր գրկեց աղջկան և աշխատեց նրա դեմքը ծածկել ինձանից: Բայց յերեխան թույլ չեր տալիս այդ և, աչքերը չռած, կարծես զարհուրած, նայում եր ինձ ու կանչում:

— Հայրիկ, նա յեկել ե, յեկել ե...

Հայրը նրա մազերը, այտերը, թաթիկները համբուրելով՝ հանգստացնում եր:

— Չե, սիրուն ջան, չե, գնում ե, գնում ե, այ գնում ե... Պարոն, խնդրում եմ, դուրս գնացեք, — դարձավ նա ինձ կամաց, աղերսաձայն. — խնդրում եմ...

Թե ինչու պիտի դուրս գնայի՝ չհասկացա, բայց նրա ձայնն այնքան աղաչական եր, այնքան պաղատազին, վոր յես լուռ դուրս յեկա կուպեյից՝ դուռն յետևիցս ծածկելով:

Չանցավ յերկու րոպե, մարդը դուրս յեկավ ավելի այլայլված, քան առաջ: Նրա շրթունքները դողում եյին, և յերկար ձեռների ու յերկար վզի անիմաստ շարժումները արտահայտում եյին ներքին հուզումը:

— Ներեցեք ինձ, ընկեր... Ներողություն... Յես ուզում եյի նախազգուշացնել ձեզ, բայց քաշվեցի... Ներեցեք, խնդրում եմ...

— Ի՞նչ պատահեց յերեխային:

— Վոչինչ, վոչինչ... Գիտեք նա... նա մոր մահից հետո այդպես ե. ակնոցավոր մարդ տեսնելիս վախենում ե...

— Ի՞նչու, — հետաքրքրվեցի:



— Վորովհետեւ, գիտեք, մորը խնամող բժիշկը ակնոցավոր եր... Յերեխան կարծում է, թե հենց այդ ակնոցավոր մարդը տարավ իր մորը և մեզ բոլորիս լացացրեց... Յեւ այժմ ամեն անգամ ակնոցավոր մարդ տեսնելիս՝ նրան թվում է, վոր յեկել են իրեն եւ տանելու...

Ու նորից նոր ներողություն խնդրելով ինձ անհանգստացնելու համար, նա վերցրեց յերեխային և գնաց փնտռելու մի այնպիսի տեղ, ուր ակնոցավոր չլինի:

Նրա գնալուց հետո յես ներս մտա կրկին և տեղավորվեցի իմ նախկին տեղը՝ այնտեղ, ուր յերեխան եր նստած քիչ առաջ: Ուղեկիցներս յերեքն եւ նստած եյին իրենց տեղերում:

— Վախի՛ւր, — գլուխը շարժեց ուսուցիչն ինձ տեսնելուն պես. — վախի՛ւր, — կրկնեց խորհրդավոր:

— Ա՛հ! բացականչեց ուսանողը բազմախորհուրդ և նայեց լուսամուտից դուրս այնպես, կարծես այդպիսի բաներ շատ եր տեսել. — վախի՛ւր...

— Այո, վախի՛ւր, — պատասխանեց ուսուցիչը. — վախի՛ւր ուրիշ զգացմունք ե: Սա ինձ հիշեցրեց յերկու տարի առաջ կատարված մի դեպք, — շարունակեց նա և, առանց վորև ե մեկիս կամքը հարցնելու՝ տրամադիր ենք իրեն լսել թե վոչ, սկսեց. —

## II.

## ԴԱՏԱՐԿ ՄԱՐԴԸ

Յերեք տարի առաջ Թիֆլիսում եյի. մի ամիս շարունակ թափառում եյի փողոցից փողոց՝ սենյակ չեյի գտնում:

Պատերազմի յերրորդ տարին եր, ամենաբոբե շրջանը: Այդ ժամանակ քաղաքում, յեթե յեղել եք՝ կհիշեք, բնակարանների սուր ճգնաժամ եր: Թերթերը, վոր առաջ լիքն եյին վարձու տրվող տների հայտարարություններով, այժմ վոչինչ, վոչ մի բան: Վորովհետեւ քաղաքի գրեթե մի քառորդը զինվորական հիվանդանոց եր, զինվորական հիմնարկություն և զինվորականների բնակարան, — յես ստիպված եյի, հասկանալով եք, մի ամբողջ ամիս թափառել մի քոսոտ սենյակ գտնելու, վորը, վերջապես, գտա ծանոթի միջոցով, Դիդուբե թաղում: Տանտիրուհիս պառավ վրացուհի եր՝ լաչակով, բանով: Ուներ ընդարձակ պարտեզ, փողոցի վրա յերկհարկանի տուն, վոր լիքն եր կենվորներով. այդ տնից բացի պարտեզի խորքում ուներ մի փոքրիկ տուն ևս՝ յերկու սենյակից բաղկացած:

Յես պետք ե ապրելի այս յերկրորդ տան սենյակներից մեկում: Իմ սենյակը հյուսիսակողմն եր, մի քիչ խոնավ, գետնից հաղիվ յերկու աստիճան բարձր, բայց և այնպես մի բան եր, ուր կարող եյի ապրել և ծանոթներիս ազատել անախորժությունից: Տանտիրուհիս, ինչպես հարկն է, առանձին արարողությամբ, վոր տանտիրուհիները միայն գիտեն, ցույց տվեց սենյակը, նրա չոր կահավորությունը, վարձի մասին



համաձայնություն չեկանք և հետեյալ որն իսկ փոխադրվեցի, առանց հարցնելու, թե ով է հարեանս, ինչ մարդ է և այլն:

Յերբ իրերս ներս եյի տանում, կողքի սենյակի լուսամուտից նայում եր ինձ մեկը՝ գլխի մազերը՝ խոփ, խոշոր աչքերով մի տղամարդ, ափելի շուտ մի յերիտասարդ սպիտակ վերնաշապկով:

Առաջին իսկ հայացքից հարեանս արտասովոր տպավորություն թողեց ինձ վրա իր մեծ-մեծ աչքերով և ոտաբոտի նայվածքով: Յերբ իրերս տեղավորեցի, տանտիրուհուս հարցրի հարեանիս ով լինելը՝ «Հէջ», ասավ պառավը, մատով գլուխը թխթխկացնելով և ձեռը շարժեց, վորով ուզում եր ասել թե՛ վոչինչ, դատարկի մեկն է:

Այդ «դատարկ մարդը», սակայն, այնքան ել դատարկ չթվաց ինձ. նա շատ տարրինակ եր իր արտաքինով, վորը նման եր Հիսուսին. լայն, յերկար վերնաշապիկը, մինչև ուսերը իջած մազերը—ուրիշ բան եյին ասում. մանավանդ աչքերը, վորոնց մեջ նյութական և յերկրային վոչինչ չկար կարծես: Այդ խոշոր աչքերը ինքնամփոփ եյին, մի՞ ուրիշ տեսակ, այնպես, կարծես թե դուրս չեյին նայում, այլ դեպի ներս, հասկանում եք... Այդ տեսակ աչքեր ունենում են արեւիյան կրոնավորները աղօթքի ժամանակ, յեթե տեսել եք...

Մի խոսքով, առաջին իսկ որը հարեանս տարրինակ յերեաց ինձ: Առաջին որերը նրա զբաղմունքը պարզ չեղավ—ո՞վ եր, ի՞նչ եր, ինչո՞վ եր զբաղվում—դժվար եր վորոշել: Տանտիրուհիս ել՝ վրացուհի—իրար լեզու չեյինք հասկանում: Ինքը «դատարկ մարդն» ել

զրեթե դուրս չեր գալիս սենյակից կամ յեթե դուրս եր գալիս՝ չեյի տեսնում, վորովհետև առավոտը գնում եյի պաշտոնի, կեսորից հետո վերադառնում. այնուամենայնիւ, տանը յեղածս ժամանակ—առաջին որերը—յես նրան դուրս գալիս չտեսա: Գիշերները մի յերկու անգամ միայն լսեցի, թե ինչպես նա շատ զգուշ դուռը բանալով՝ յեղնում է սենյակից: Մի ամբողջ շաբաթ, ափելի, ապրեցի—մենք դեմ առ դեմ չհանդիպեցինք իրարու: Մի յերկու անգամ միայն տեսա նրան իր լուսամուտի առջև՝ մալարուսական քաթանի վերնաշապիկը հագին, իր խոշոր աչքերով ինձ նայելիս, վոր ասես զննում եր թափանցիկ հայացքով, և անմիջապես հեռանում լուսամուտից:

Մի անգամ, պաշտոնից դառնալիս, տեսա նրան դարձյալ լուսամուտի առջև կանգնած: Չգիտեմ, ինչպես յեղավ (նման անբացատրելի բան հաճախ է պատահում), յես ժպտալով՝ գլխարկս բարձրացրի և բարեկեցի նրան: Նա նույնպես ժպտաց և գլխով արավ: Յեւ այնուհետև մի առ ժամանակ՝ որամեջ կամ յերկու որը մի անգամ, մենք այդ ձևով բարեկամ եյինք իրար: Բայց դարձյալ առիթ չեր լինում իմանալու նրա ով լինելը և զբաղմունքը: Իսկ այդ բանը սաստիկ ցանկանում եյի, վորովհետև գիշերները նրա սենյակից ինչ-վոր տարրինակ ձայներ եյին գալիս. նա կարծես ինչ-վոր բան եր կտրտում, ծեծում, կապում իրար. թե ի՞նչ՝ դժվար եր իմանալ: Յեւ այս բոլորը շատ խորհրդավոր եր ու կասկածելի. թվում եր, վոր նա զբաղված է մութ գործերով: Մտածում եմ՝ կեղծ դրամ է կտրում արդյոք, կեղծ տոմսեր և պատրաստում, թե՛ հեղափոխական թուղթիկներ և տպագրում



խմորատիպով: Յեվ, յերևի, իզուր չէ, մտածում եմ, վոր ընտրել ե այս հեռավոր թաղը և մի այսպիսի առանձնացած մենավոր տուն:

Հազար ու մի յենթադրություն, բայց վորեւեքան հասկանալ՝ չեմ կարողանում:

Մի յերեկո ել պառկած մտածում եմ այսպես— լսում եմ նույն կասկածելի ձայները—կտրել, ծեծել, կապել:—Թվում ե նույնիսկ լսում եմ նրա մատներին շարժումը—այնքան լսողությունս լարված ե հետաքրքրությունից. տեսնում եմ, կարծես, ինչպես են նրա գունատ ձեռները գործում. բայց ինչի՞ վրա— ահա եղ հարցն եր, վոր տանջում եր ինձ: Մտածում եմ այսպես— մեկ ել, հարկարծ, նրա սենյակում ինչ-վոր բան զընգոցով ընկնում ե հատակին: Յիրկնթ եր, վորեւեք գործիք, ափսե՛— ձայնից դժվար ե իմանալ:

Այս հանգամանքն ինձ ավելի կասկածի մեջ դրցեց:—Վերջապես, մտածում եմ, այս մարդն իր մուկ գործերով կարող ե ինձ վտանգել. յեթե կառավարությունը բռնի սրան և պարզվի, վոր կեղծ դրամ կտրող ե կամ հեղափոխական թուղթիկներ տպող, —ինձ ել պիտի կասկածեն և բանտարկեն: Յես մի խեղճ վարժապետ—հանկարծ կեղծ դրամ կտրող կամ հեղափոխական: Ու վախենում եյի: Յեվ կարծում եմ ով ել լիներ իմ տեղը, այս պայմաններում—կվախենար: Ու ընական ե, վոր յես հիվանդագին հետաքրքրություն ցույց տալի դեպի իմ տարրինակ հարեանը: Հենց այդ գիշեր վորոշեցի մի պատրվակով առավոտը մտնել նրա սենյակը: Կերթամ ե կասեմ—«Լուցկի չունե՞ք արդյոք»... և կգլտեմ, կտեսնեմ թե ինչ կա նրա սենյա-

կում իսկապես կասկածելի և կամ՝ կփարատեմ իմ կասկածները:

Այդպես ել արի:

Առավոտները, սովորաբար, նա ինձնից շուտ եր զարթնում և լվացվում: Հագնվելուն պես գնացի նրա մոտ: Մտածեցի առանց նախազգուշացման ներս մտնել և նրան հանկարծակի բերել, հասկանում եք. այնպես մեծ եր հետաքրքրությունս այդ խորհրդավոր, լուսկյաց մարդու գործի անունն իմանալու: Յես այդ բանը մի քանի անգամ փորձել եյի բանալիի անցքով, բայց ապարդյուն, վորովհետեւ նա անցքը խցել եր ինչ-վոր բանով: Կա մի տեսակ նախապաշարմունք, թե ինտելիգենտ, բարեկիրթ, քաղաքակիրթ մարդը չպետք ե բացի ուրիշի նամակները, չպետք ե զանազան անցքերից նայի հարեանի սենյակը, չպետք ե միջամտի կողմնակի մարդկանց խոսակցության և այլն,—այս բոլորը, գիտե՞ք, շատ լավ բաներ են քաղաքավարության դասագրքում, բայց յերբ հետաքրքրությունը վառում ե ձեզ, այնպես տենդագին մի դող ե գցում ձեր մարմինը,—դուք մոռանում եք քաղաքավարության բոլոր կանոնները և դառնում մի գոհիկ, մի յերեխա՝ պապղուն հուլունքներով շլացող:

Այսպես, մի կողմից վախը, մյուս կողմից այրող հետաքրքրությունը ինձ տարան նրա գուռը: Ինչպես մտադրել եյի, այնպես ել արի: Մոտեցա դռան և թափով բաց արի՝

—Ներողություն, լուցկի չունե՞ք. ասում եմ և, միաժամանակ, սենյակի ներսը դիտում: Յեվ առաջին բաները, վոր աչքիս ընկան՝ շատ սովորական եյին. մի մահճակալ, յերկու աթոռ, մի հին պահարան և այլ



մանր-մուշեր իրեր: Միակ տարրերինակ բանը, վոր  
զարմացրեց ինձ, դա այն էր, վոր սենյակի մի ան-  
կյունը լիքն էր ամեն տեսակի թիթեղներով, վոր մանր,  
խոշոր կտորներով թափված էյին իրար վրա. այդտեղ  
կային և թիթեղե վառարանի խողովակներ, և արկղ-  
ների կափարիչներ, տանիքի ջրորդան և դարձյալ թի-  
թեղի մանր-մուշեր կտորներ: Մի խոսքով, սենյակի  
այդ անկյունը հիշեցնում էր թիթեղագործի արհես-  
տանոց:

Ինքը հարեանս, վոր այդ ժամանակ հատակին  
չոքած թիթեղի մի կտոր եր կտրում մկրատով, ինձ  
տեսնելուն պես՝ սարսափած, ծուլ յեղավ տեղից: Իմ  
անսպասելի մուտքը շփոթեց և, իսկապես, հանկար-  
ծակի բերեց նրան. նա քնաց զարմացած, ապշած:  
Շփոթվեց այնպես, կարծես յես յերկնքից եյի իջել:

Նրան այդ գրությունից հանելու համար յես  
հարցս կրկնեցի ավելի մեղմ. «լուցկի չունե՞ք»... Նա  
ավելի շփոթվեց, խոշոր աչքերն հածեց այս ու այն  
կողմ և ապա, թիթեղի կտորը կրծքին սեղմելով՝ ժրպ-  
տաց: Ուղղակի յերեսայի պես: Ասես հաշտվեց արդեն  
և մտերմացավ ինձ: «Ի՞նչ էք շինում», հարցրի նրա  
տարրինակ վարմունքից զարմացած: Նա թիթեղի  
կտորն ավելի ամուր սեղմեց կրծքին և մյուս ձեռով  
խփեց նրան: Դրանով ինչ վոր բան եր ուզում հա-  
կացնել կարծես, բայց յես վռչինչ չհասկացա:

— Այսինքն ի՞նչ, — հարցնում եմ:

Նրա դեմքը լրջացավ: Նայեց պատուհաններին,  
կարծես ուզում եր տեսնել, թե մեկը չի նայում ար-  
դյոք և ապա, մոտեցավ ինձ խորհրդավոր ձևով, ինչ-  
պես խորին գաղտնիք հաղորդող մեկը, ու յերեսն յե-

րեսիս մոտեցնելով՝ խոշոր աչքերը հառեց աչքերիս և  
շշնջաց.

— Կովի համար ե...

Յես բան չհասկացա:

— Ի՞նչը, հարցնում եմ:

Նա թիթեղի կտորը նորից սեղմեց կրծքին և նու-  
րից ձեռով խփեց նրան.

— Սա, — ասում ե, — ես բանը:

Յես դարձյալ բան չհասկացա:

Իմ վարանումը նկատելով՝ նա ավելացրեց, բա-  
ռերը հատ-հատ արտասանելով:

— Վոր կռվում գնդակը չծակի, ասում ե:

Ասում և ու ժպտում այնպես, վոր կարծես ու-  
զում ե, վոր դու զարմանաս իր արածի, իր հնարա-  
գիտության վրա: Հետո ցույց և տալիս ինձ անկյու-  
նի թիթեղները, վերցնում ե մեկ-մեկ այդ ժանգոտ  
կտորները, լրջությամբ մոտեցնում ինձ և նորից խը-  
նամքով տեղը դնում: Գոհ ե, վոր այդքան թիթեղ  
ունի:

— Այս բանը վորտեղից էք հավաքել, հարցնում եմ:  
Նա ձեռը բերնին դրեց:

— Սը՛սս, — ասում ե. — մարդու բան չասեք:

Ու դողում ե:

— Այս բոլորը պիտի շինե՞ք, հարցնում եմ:

— Այո, այո, — ասում ե խորհրդավոր. — մարդու  
բան չասեք. — շշնջում և նորից և աչքով անում ինձ. —  
կուզե՞ք ձեզ համար ել յինեմ:

— Շնորհակալ եմ:

— Դուք ունե՞ք ուրեմն, հարցնում ե զարմացած:

— Վո՛չ, չունեմ, ասում եմ. — բայց ինձ՝ հարկա-  
վոր չի...



Նա զարմացած, տարակուսած նայում է ինձ:

Բա կովում, ասում է ինչ պիտի անեք, յերբ գնդակներ՝ վը՛ղղղ, վը՛ղղղ, վը՛ղղղ—գան ձեզ վրա...

Ու ձեռներով ցույց է տալիս, թե ինչպես պետք է գնդակները գան՝ տարափի պես. ցույց է տալիս ու աչքերը լայն չռած նայում ինձ. զարմանում է, վոր յես այդ տարափի պես յեկող գնդակների դեմ միջոց չեմ ուզում. — Ի՞նչպես, ինչպես կարելի յէ, — հարցնում է ապշած:

Զվիճելու համար՝ համաձայնեցի:

— Լավ, լավ, ասում եմ. ձերը շինեցեք, հետո ինձ համար...

Նա, հանգստացած՝ գործի կացավ: Յես զուրս յեկա:

Ու, դրանից հետո, առաջվա պես, ելի իր սենյակում փակված, նա կտրում եր, ծեծում, կապում: Նույնը անում եր յերբեմն գիշերները: Անցավ մի շաբաթ, մեծ յեղբայրը յեկավ գյուղից, ուր գնացել եր, իր առեկով, «ընտանեկան գործերով»: Դա գործակատար եր, մեկը այն գավառացիներից, վոր քաղաքում աշխատում են—գյուղում ընտանիք պահում: Յեկավ և հետեյալ որն իսկ յեղբորը փոխադրեց հիվանդանոց: Իմ հարցին՝ ինչ է պատահել յեղբորը, պատմեց, վոր յեղբայրը, «գերմանական ֆրոնտում» վիրավորվելուց հետո՝ «այդպես տարորինակ բաներ» և անում... Այնուհետև նա մնաց (և կարծեմ, մինչև այսօր ել մնում է) հիվանդանոցում: Այնտեղ ել՝ հիվանդանոցում, յեղբայրը պատմում եր, թե շարունակ թիթեղի կտորներ է հավաքում, վերցնում է հիվանդանոցի տանիքից կախված ջրախողովակները, թազուն տանում է իր

սենյակը և ուզում է նորից իր և, սահասարակ, իր բոլոր ծանոթների համար զրահ շինել, վոր կովի ժամանակ գնդակներից անփնաս մնան...

— Да!, — բացականչեց ուսանողը, յերբ ուսուցիչն ավարտեց իր պատմությունը, և ավելացրեց բազմախորհուրդ. — Վախը...

Իսկ մեր զանկապաններով և ղերասանակերպ ուղեկիցը ուղղվեց նստած տեղը, մի քիչ առաջ յեկավ, ձեռներով բռնեց ծնկները և կոկորդը մաքրեց.

— Դե վոր այդպես է, ասավ, — թույլ ավել մի բան ել յես պատմեմ վախի մասին:

Ու սկսեց.

### III.

#### ՎԱԽԿՈՏ ԴԱՆԵԼԸ

Ամեն անգամ, յերբ այսպես խոսք է լինում վախի մասին՝ միշտ հիշում եմ իմ զինվոր ընկերներից մեկին՝ Դանելին: Ա՛յ թե վախկոտ եր: Ուրիշ վորեւ բանից չեմ վախենա—միայն զենքից: Հրացան տեսնելիս՝ դողում եր տերևի պես: Մեր զորամասի զինվորները (ի միջի այլոց մենք ծառայում էյինք ուլրայնական մի ավանում՝ Կիևի շրջանում), բոլորը՝ ոռւս, հայ, լեհ, վրացի, ծիծաղում էյին վրան. նա ամենքի համար առակ եր դարձել. «Դանելի պես վախկոտ ե», ասում էյին: Զեզ, յերևի, տարորինակ կթվա, թե ինչպիսի զինվոր եր, վոր զենքից վախենում եր:



Յերեակայեցեք, թեև զինվոր, բայց զենքի հետ  
գործ չունեի։ Այդ բանը պարզվեց հետո։ Չգիտեմ,  
ինչպես եր հաջողել, զորամաս մտնելու հենց առաջին  
որերին ընդունվել եր գեներալի։ Ծառայում եր զար-  
մանալի սերով, յեռանդով, նվիրված. անում եր ամենը,  
վորպեսզի դուր գա իր սպային. տունը հավաքում եր,  
մաքրում. հատակը լվանում եր. սրբում եր սպայի  
կոշիկները, շորերը. յերբեմն կերակուր եր յեփում նրա  
համար. մի խոսքով՝ անում եր այն բոլորը, ինչ պար-  
տավոր եր անել, հեղափոխությունից առաջ, ամեն մի  
գեներալի։ Յերբ սպան փոխվում եր (այդպիսի փոփո-  
ւթություններ մի քանի տնգամ յեղան), նա զիմում  
եր ամեն միջոցի, վոր նորեկն իրեն չհեռացնի։ Նրա  
հայրենակիցներից մի յերկուսը (Դանիլը լուսեցի յեր),  
վոր զինվոր եյին մեր զորամասում՝ պատմում եյին,  
թե Դանիլը հենց զինվոր ընկնելու որից յերազում եր  
գեներալի լինելու մասին։ Յեա իբրև զորամասի գրասկիբ,  
հաճախ առիթ եյի ունենում Դանիլի հետ խոսելու։  
Նա գրագետ, կարգացած, բանիմաց տղա յեր. մեր  
զորամասի գրեթե բոլոր զինվորներից բանիմաց, ու-  
շիմ, խելոք, հանաքչի։ Մի քանի անգամ յեա հարցրի  
նրան, թե ինքը խելքը գլխին տղա—ինչո՞ւ ե գեներալի  
ստոր պաշտոն կատարում, մինչդեռ շարքի մեջ՝ կարճ  
ժամանակում կարող ե բարձրանալ նույն իսկ ունե-  
թիցեի աստիճանի։ Բայց նա, ամեն անգամ, ձեռը  
թափ տալով՝ ասում եր. «Ն՛հ, բան չունեա. չիմ մեկ  
չի»...

Մի որ ել այսպես խոսելով՝ յեա նրան հանդիմա-  
նեցի.

— Հենց բանն այն ե, վոր մեկ չի, ասում եմ.—

դա գոհնիկ, անկիւթ մարդու գործ ե, վոր ամեն որ  
պոր, կոշիկ սրբի։

— Ինչո՞ւ, ասում ե,— սա ել ծառայություն ե—ելի։

— Բայց քեզ անվայել, ասում եմ, քեզ այդ բանը  
չի սաղում։ Յեա ուղղակի զարմանում եմ, ասում եմ,  
թե ինչպես ե քո ինքնասիրությունը թույլ տալիս այդ  
ստոր գործը կատարելու։

— Ինչ կա վոր,— ասում ե,— մեկը պիտի կատա-  
րի, չե՞...

— Բայց վոր քեզ նման մեկը,— ասում եմ,— ա-  
մոթ ե ուղղակի։

— Յեա վոր դժգոհ չեմ, ասում ե,— դու ինչո՞ւ յեա  
դժգոհում իմ փոխարեն։

— Քեզ ափսոսալուց, ասում եմ։

Այսպես ասի ու վշտացած հեռացա, մտածելով,  
վոր մեկը իր գլխի պատիվը չգիտի—ել ինչ ասես նը-  
րան։ Գնացի ուղիղ իմ սենյակը։ Ճաշելուց հետո սո-  
վորաբար կարդում եյի։ Հայ լեզվից չխորթանալու հա-  
մար տնից ստանում եյի հայերեն գրքեր և, իբրև նախ-  
կին ճեմարանական, շարունակ կարդում, կարդում։  
Մահճակալիս վրա պառկած կարդում եմ՝ հանկարծ մե-  
կը գուռս ծեծեց.

— Մտեք, ասում եմ։

Դանիլը։ Դուրը բանում ու շեմքին կանգնում։

— Կարելի՞ յի, ասում ե ամաչելով։

— Արի, ասում եմ, ի՞նչ կա։

Չի խոսում։ Տեսնում եմ՝ քաշվում ե։ Չգուցե եմ  
ինչ վոր ասելիք ունի, բայց չի ասում։ Աչքերը գե-  
տին գցած՝ նայում ե չորս կողմը և քայլ առ քայլ մո-  
տենում ինձ։



— Ի՞նչ կա, Դանել, ասում եմ:

— Վոչինչ, ասում ե: Ասում ե ու ելի աչքերը գետին զցում:

Պարզ տեսնում եմ—ամաչում ե, ու չեմ ստիպում: Վերջը ինքն ել, անհարմար նկատելով իր լուծթյունը, — «Քիչ առաջ», ասում ե, «ինձանից նեղացած հեռացար: Քանի անգամ ե, ասում ե, դու յերեսովս ես տալիս, վոր յես զԵՏԵՅԻԿՈՒՔՅՈՒՆԵՑ եմ անում: Յե՛վ մի անգամ սկի չես հարցնում պատճառը»:

— Պատճառը, — հետաքրքրված յելա պառկածս տեղից. — լսվ, ի՞նչ կա վոր, ի՞նչ ե պատճառը, ասում եմ: Նա յերեսիս նայեց ամանչելով և՛

— Հենց այն վոր, ասում ե, յես գենք չեմ կարող բանեցնել:

— Զենք. ինչո՞ւ...

Մի քիչ տատանվեց, կասկածով նայեց ինձ ու՛

— Վախենում եմ, ասում ե:

Այնքան անսպասելի եյին այդ խոսքերը և այդքան պարզ ու հասարակ կերպով ասավ, վոր յես զարմացած նրա աչքերին նայեցի:

— Վախենում ես: Ինչո՞ւ...

— Այնպես, ասում ե: — Յես գենք տեսնել չեմ կարող. բռնել—մանավանդ:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, ասում եմ: — Պատճառը: Ի՞նչ ե պատճառը:

— Բա պատճառ կա, ասում ե. — Ի հարկե, առանց պատճառի չի: Դու հենց կարծում ես թե առանց պատճառի եմ յես եղ ստոր բանը անում... Քու խոսքերն, ասում ե, ինձ շատ զիպան, զբա համար յեկել եմ հի-

մի յեղածը պատմեմ: Դե, դու ել, ասում ե, հնքան մոտիկ, կրթված մարդ ես, վոր վրաս ծիծաղել չես:

— Պատմիր, ասում եմ, ինչո՞ւ պիտի ծիծաղեմ: Յեթե ծիծաղելի կլինի, ես ժամանակ միասին կը ծիծաղենք:

— Զե, ասում ե, հաճաքը մի կողմ, ինչպես հայ մարդ, խոսք տուր, վոր ուրիշի բան չես ասիլ ու ծիծաղիլ չես:

— Լսվ, ազնիվ խոսք եմ տալիս, ասում եմ: — պատմիր, տեսնենք:

Յե՛վ ահա ինչ պատմեց. «Յերբ յես յերեսիս եյի,— ասում ե,— մի որ ծնողներս գնացել եյին մեր բարեկամի տուն՝ մեռելի վրա: Տանը մնացել եյինք յես և ինձանից փոքր ախպերս: Եղ ժամանակ, ասում ե, /եկավ մոտիկ գեղից մեր ճանաչներից մեկը, ինչ վոր մի քեռի. յեկավ, ձին գոմը քաշեց, խուրջինը տուն բերեց և ատրճառակը գրպանից հանեց ու գրեց մութթաքի տակ: Դրեց, ասում ե, ու մատը թափ տվեց, վոր ձեռ չտանք: Թափ տվեց ու գնաց: Բայց, ասում ե, յես ու յեղբայրս սաստիկ ուզում եյինք տեսնել, թե ինչ բան ե ատրճառակը: Ու սկսեցինք մտիկ տալ, ասում ե, սկզբում պատյանի մեջ, հետո կամաց-կամաց պատյանից հանեցինք և սկսեցինք խողալ: Մեկ ել՝ հանկարծ, ասում ե, ատրճառակը բացվեց իմ ձեռին և ախպերս ճչալով՝ ընկավ գետին... ու մի քանի րոպեյից հետո մեռավ»...

Պատմեց Դանելը և մի խոր, յերկար հոգոց հանելով՝ լռեց: Քիչ հետո տեսնեմ այդ ահագին մարդը արտասվում ե:



— Լսով, ինչ յեղով, ասում եմ, անցած-գնացած բան ե. ել ինչ ես արտասովում. յերեխա հո չես:

Նա մի փոքր հանգստացավ և՛ «Ահա ես դեպքից հետո, ասում ե, յես վախենում եմ ձեռս հրացան, տալըճանակ առնել. վախենում եմ հլե հանկարծ մեկին սպանեմ. և ամեն անգամ զենք տեսնելիս, ասում ե, տխպորս զիակն եմ հիշում»...

Նա խոսում եր միանգամայն անկեղծ, ու կասկած չկար, վոր այդպես բան պատահել է նրան. բայց, չգիտեմ, նման դեպքից հետո մարդ հասուն հասակում զենքից կվախենա, թե չե, այնուամենայնիվ Դանելն իր վախը բացատրում եր զբանով և դա յեր համարում պատճառը, թե ինչու ինքը **գեներալի** պաշտոն ե կատարում և չի մտնում շարքերը:

Այդ ամենը, ի հարկե, հոգեբանի գործ ե. բայց դուք տեսեք, թե այնուհետև ինչ պատահեց Դանելին: Չմոռանամ ասել, վոր պատմությունս վերաբերում ե վերջին պատերազմի որերին:

Թե Դանելը, թե յես և թե պատերազմից առաջ գնացած շատ զինվորներ մեր հասակի՝ շարունակում եյինք ծառայել. ծառայության յերեք տարին դարձավ վեց, յոթը տարի. կային այնպիսիները, վոր ծառայում եյին տաս տարի: Մենք, այսպես—մոտ յոթը տարի: Յեվ այդ յոթը տարվա մեջ Դանելը շարունակում եր իր պաշտոնը: Ինչպես ասի, սպաները փոխվում եյին, բայց նա մնում եր նույն դերում նոր յեկողի մոտ և իր վիճակից, կարծես, գոհ եր: Նախկին սպայի տեղ հենց վոր գալիս եր նորը—նա ձեռ ու վոտ եր ընկնում նրան դուր գալու, նրա բնավորությունը հասկանալու և նրա քմահաճույքները կատարելու:

Պատերազմի չորրորդ տարին մեր զորամասի կրթության սպան՝ Դանելի սպան, վոր մի բարի լեհ եր, տիֆից մեռավ: Յերկու շաբաթ անց նրան փոխարինելու ուղարկեցին մի զգվելի մարդ, մոնղոլի կերպարանքով մի հարբեցողի, վորի դեմքին նայողը կարող եր կարծել, թե անթիվ մարդ ե սպանել: Կապույտ քիթ, գարու հասկերի նման բարակ, շեկ բեղեր և բուրթ, մսի մեջ կորած բուրթ աչքեր: Դրան կարնեյ Պետրովիչ եյին ասում: Չար, բարկացկոտ և կասկածամիտ արարած եր: «Ամեն ինչ թագավորի և աստծու համար»—այս եր նրա ուզածը. ախանջին ել հին, մոռեկանդ, անկիրթ ոռւսների նման արծաթե ող եր կրում և «0»-ով ել խոսում—կոզգա, վոյնա...

Առաջին իսկ որվանից այդ մարդը Դանելին չըսիրեց: Չգիտեմ, ինչ ատելի բան եր գտնում նրա մեջ, բայց չուզեց նրան պահել: Յեկավ մի որ ինձ մոտ և ասում ե, վոր մի զինվոր ուղարկեմ իրեն ծառայելու և Դանելին վերցնեմ: Տեսնելով հարբած ե, յես վոչինչ չխոսեցի, բայց այդ մասին հայտնեցի Դանելին: Խեղճ տղան այլալվեց, գունատվեց և քիչ մնաց ընկներ գետին: Ու խնդրում, աղաչում ե, վոր համոզեմ կարնեյ Պետրովիչին իրեն պահի:

— Հոգուդ մեռնեմ, Պավլի ջան, ասում ե ազատիր ինձ: Ինչ ուզում ե՝ կանեմ միայն թե...

— Լսով, լսով, ասի,—կխոսեմ: Ու հետևյալ որը, հենց Դանելի ներկայությամբ, խոսք բաց արի այդ մասին կարնեյ Պետրովիչի մոտ: Բացատրեցի, հասկացրի, վոր զորամասում Դանելից ավելի լավ, հմուտ սպասավոր հազիվ թե գտնվի, և, առհասարակ, նրա նը-



ման չկա: Յես ասում, բացատրում եմ, իսկ նա զու-  
լը շարունակ շարժում է բացատրար:

— Ձե, չե, ասում ե, — յես սրան չեմ ուզում, —  
ու ցույց է տալիս Դանելին: — չեմ ուզում, ինձ ուրիշը  
տվեք: Իսկ դա, ասում է Դանելին: — Կերթաս շարքե-  
րը: — քեզ չեմ ուզում: Հետաքրքիր է իմանալ՝ ինչո՞ւ  
մինչև հիմի շարքերում չես, հարցնում է իրեն՝ Դանե-  
լին:

— Յես դենչիկ եմ յեղել, — ասում է Դանելը:

— Դենչիկ. — ծիծաղեց Կարնեյ Պետրովիչը. —  
լավ ե... Նշանակում է ծառայությունից խուսափել  
ես, հա... Ու բարկացած կարգադրեց, վոր նա վազն է  
եթ գնա շարքերը:

Դանելն այնքան շփոթվեց, խեղճացավ, վոր իրեն  
կորցրեց:

— Բայց յես, վառե վիսոկորոգիե, ասում  
է, — զենք բանեցնել չգիտեմ. չեմ կարող...

Կարնեյ Պետրովիչն ալյոտեղ բորբոքվեց. նրա մոն-  
ղոլական դեմքը ծամածովեց և բուխ աչքերում յերե-  
վաց կառվի կատաղություն:

— Ինչպես. զենք բանեցնել չգիտես. չես կա-  
րող — ու ծիծաղեց մի չար ծիծաղով. — Ձես կարող: Ին-  
չո՞ւ: Հետաքրքիր է իմանալ: Դուխորո՞ր ես, ինչ է:

— Վնչ, ասում է, հայ եմ:

— Հապա ինչո՞ւ չգիտես:

Դանելը լուռ է: Նայում է ինձ աղերսու հայաց-  
քով, վոր գոնե յես հասկացնեմ Կարնեյ Պետրովիչին,  
թե ինչո՞ւ ինքը զենք բանեցնել չի կարող: Բայց ի՞նչ  
կարող եյի ասել յես մի կատաղած սպայի այդ բո-  
պելին:

— Չգիտես, չես կարող, կրկնեց Կարնեյ Պետ-  
րովիչը և կարգադրեց զինվորներից մեկին՝ մի հրա-  
ցան բերել անմիջապես:

Սախուլի մեկը վազեց մի հրացան բերեց:

— Վերցրո՛ւ, հրամայեց Կարնեյ Պետրովիչը Դա-  
նելին:

Դանելը հրացանը ձեռն առավ այնպես, կարծես  
իրեն կծում եր:

— Ուսի:

Դողդողալով դրեց ուսին:

— Գնա քայլով:

Գնաց մի տասը անկանոն քայլ:

— Յետ արի: Քայլով — մեկ, յերկու. մեկ, յերկու...

Յետ յեկավ նույն անկանոն քայլերով:

Այդ անկանոն քայլերը տեսնելով Կարնեյ Պետ-  
րովիչը, շրթունքները կոծելով՝ հազիվ զսպում եր իրեն:

— Այժմ՝ նշան բռնիր, — կարգադրեց նա. — այն  
ծառին. — ցույց տվեց գորանոցի առաջի լորիններից մեկը:

Խեղճ Դանելը չգիտեր ի՞նչ անի և ի՞նչպես: Հը-  
րացանը դեմ եր արել աջ ուսին և չեք իմանում ըս-  
կզբում վոր աչքը խփի: Հետո ձախի փոխարեն աջը  
խփեց ու սկսեց դողդողալ: Նրա այդ դիքը և ծիծա-  
ղելի յեր և խղճալի: Այդ տեսնելով Կարնեյ Պետրովի-  
չը մոտեցավ և՛ շրճիկ — ապտակեց Դանելիս: Այնքան  
անսպասելի և այնքան ուժեղ եր այդ ապտակը, վոր  
խեղճ Դանելը հրացանը քցեց և յերեսը բռնեց: Մենք՝  
մի քանի զինվոր, վոր ներկա էյինք, չգիտեյինք, իս-  
կապես, ծիծաղենք թե խղճանք — այնքան ծիծաղելի  
և վողորմելի յեր նա:

— Վերցրո՛ւ, — հրամայեց սպան, — շոտ:



Դանեիլը դողդողալով կռացավ և հրացանը նորից ձեռն առավ ելի այնպես, կարծես իրեն կծում ե:

— Ուսի: Նշան բռնիր...

Նորից ձախի փոխարեն աջն է խփում:

— Փակիր ձախը, ձախը, հրամայեց Կարնեյ Պետրովիչը վրդովված:

Դանեիլը փորձեց փակել ձախը, բայց աջն ել հետն եր փակվում:

Մարդիկ կան, վոր մի աչքն առանձին փակել չեն կարողանում և մեկի տեղ՝ յերկուսն ել խփում են. կան և այնպիսիները, վոր կարողանում են խփել միայն մի աչքը—աջը կամ ձախը: Այսպես ել Դանեիլը. չեր կարողանում միայն ձախը փակել, իսկ յերբ փորձում եր՝ յերկուսը միասին ելին խփվում:

— Չախը, ձախը, կրկնում եր սպան շարունակ:

Յեւ Դանեիլը փորձում եր ձախը: Մի ժամի չափ զբաղվեցին դրանով: Յերկրորդ որը նույն ժամին, նույն տեղը, սկսեցին նույն փորձերը: «Յես պետք է սովորեցնեմ սրան. սա դիտմամբ է անում, կեղծում է, ասում եր Կարնեյ Պետրովիչը.—ի՜նչ է, սովորել եք ուրիշները կովին, հայրենիք պաշտպանեն, դուք ձեր գլուխը պահե՛ք: Ներողություն կանեք»... Այս խոսքերը ուղղում Դանեիլին:

Ու, այսպես, իր խոսքին հավատարիմ, Կարնեյ Պետրովիչը համառորեն շարունակեց Դանեիլի վարժությունները: Բայց Դանեիլը քիչ եր առաջադիմում, ավելի շուտ՝ բոլորովին չեր առաջադիմում: Սպան կատաղում եր, փրփում. «Այս անպետքը դիտմամբ չի ուղղում սովորել: Բայց յիս ցույց կտամ. մի շաբթից

պետք է սրան ֆրոնտ ուղարկեմ: Սիմուլյանս Գես-յասնի»...

Ու սովորեցնում եր: Սովորեցնում եր հրացանն ուսած, բռնած քայլել, վազել, չոքել, պառկել: Կարնեյ Պետրովիչը դիտմամբ պառկեցում եր նրան ցեխոտ տեղերում, քարերի վրա և, մանավանդ, սովորեցնում եր նշան բռնել: Որական մի ժամ, ժամուկես աշխատեցնում եր այսպես, վորից հետո Դանեիլը հոգնած, դադրած, գնում մեկնվում եր Գարի վրա և տնքում, գլուխը շարժում հուզված ու անվերջ հառաչում:

— Հը՞, Դանեիլ, ասում ելին տղերքը, վճնց ես:

— Վա՛ռեց, շան վորդին, վա՛ռեց, մոնչում եր նա հուսահատ և զսպված կատաղությամբ:

Մի շաբաթվա ընթացքում Կարնեյ Պետրովիչը սովորեցրեց նրան հրացանով քայլել, պառկել և հրացանի մեջ գնդակ տեղավորել: Յեւ, այդ բոլորի հետ միասին, Դանեիլս որը մի կամ յերկու ապտակ եր ստանում:

Այդ ամենն այնպես եր հետաքրքրել մեր գորամասի տղերանց, վոր խմբով գնում ելին տեսնելու, թե Դանեիլն ինչպես պետք է հրացան արձակել սովորի: Մի որ ել, վերջապես, տղերքը հայտնեցին, թե Դանեիլն այսոր պետք է նշան խփի—գնանք թամաշա: Կարնեյ Պետրովիչը թեև ձևացնում եր, վոր չի ուզում գլխին արդիկ հավաքվեն, բայց, իսկապես, սիրում եր, վոր գնան տեսնեն իր արած գործը: Գնացին: Յեւ որ եր՝ յերկինքը ամպած. բարակ անձրև եր շողում: Փորձերը նոր սկսվել ելին գորանոցի առաջ: Կարնեյ Պետրովիչը կանգնած հրամաններ եր տալիս Դանեիլին: Այդ մարդը իր սովորեցնելու յեղանակն ուներ. մի տարվա ուսումը



նա ուզում էր սովորեցնել մի շարքում, և դրա համար զանազան խաղեր ու վարժություն միացրել էր և շուտ-շուտ կրկնել էր տալիս: Գնացինք հասանք այնտեղ, վոր ասում էր. «Քայլով մարշ! մեկ, յերկու, մեկ, յերկու»:

Դանելը հրացանն ուսին գնաց մի քսան քայլ:

— Յետ... Քայլով... Մեկ, յերկու...

Յետ յեկավ Դանելը նորից. գլուխն ուղիղ բռնած, ինչպես կարգն է, աչքերը դեպի մեզ: Յեկավ, յեկավ ու, հանկարծ, վտոր դիպավ ինչ-վոր քարի և թրջ՝ մի — ընկավ:

Մենք ծիծաղեցինք: Բայց Կարնեյ Պետրովիչը փրփրեց:

— Հիմար, մոտեցավ նա բարկացած և վտրոյով խփեց Դանելի հետույքին:

Տղերքը նորից ծիծաղեցին:

Դանելը վեր կացավ կաս-կարմիր կտրած. նա մանավանդ կարմրեց, յերբ տղաների ծիծաղոտ դեմքերը տեսավ: Ամոթից թե բարկությունից՝ աչքերն ուզում էին թուրս գալ իրենց բնից. քթածակերը լայնացել էին փրփրած նոսրագի ուռնոցների պես: Յեկավ, ուզեց ծկների ցեխը մաքրել, բայց Կարնեյ Պետրովիչը հրամայեց անմիջապես.

— Ուղիղ:

Դանելը ձգվեց լարի պես ու կանգնեց հրացանի հետ:

Այդ ժամանակ սպան հրամայեց նրան՝ նշան բռնել լորին, վորի վրա այս անգամ արծաթե ուռբլիտ-նոցի չափ սպիտակ թուղթ էր կպցրել իբրև նշան: Դանելը մի յերկու քայլ առաջ յեկավ, հրացանը դեմ

արավ ուսին, գոգգողաց մի քիչ ու, իրեն հավաքելով նշան բռնեց, բայց... ձախ տեղ ելի աջ աչքը խփվեց: Մի յերկու անգամ նորից փորձեց: Ապարդյուն: Շարունակ աջն էր փակվում.

— Չախը, իշակ, ձախը, բացականչեց Կարնեյ Պետրովիչը վրդոված նրա ապիկարություն վրա և, վերջապես, համբերությունը հատնելով՝ մոտեցավ շափոնները շխշիկացնելով և—շրճիկ—մի ապտակ:

Այդ ապտակելը տեսանք: Նույն վայրկյանին Դանելը սպրդեցած գոգգողաց ու... քացով Կարնեյ Պետրովիչի փորին: Հասկանում էք—քացով. զինվորը՝ սպային...

— Բռնեցեք, բռնեցեք,—գոռաց Կարնեյ Պետրովիչը փորը բռնած:

Բայց մինչ կմոտենայինք՝ Դանելի հրացանը պայթեց հանկարծ. Կարնեյի Պետրովիչը յերերաց, նրա գլխարկը թռավ գլխից և նա՝ թավալ-թավալ ընկավ գետին: Այդ ըրպեյին նա զարհուրելի յեր. բիբերը լայնացած, ատամները բաց ու իրար սեղմած՝ մատներով ճանկատում էր հողը, ուզում էր յեկնել մոլեգին թափով, ինչպես վերավոր մի վագր, բայց... Հեր կարողանում: Մեջքը, կարծես, կոտրել էր: Քաշկոտվելուց ամբողջ համազգեստը մի ըրպեյի մեջ ցեխոտվեց, ապականվեց... Անմիջապես, ի հարկե, վերցրինք և տառանք իր սենյակը: Բայց մի քանի ռոպեյից, մինչև բժշկական ոգնություն հասցնելը՝ մեռավ: Վերքը մահացու յիր...»:

Իսկ Դանելը, — ընդհանառեց ուսուցիչը սրա-



տիկ հետաքրքրված, վոր մինչ այդ լուռ լսում եր.—  
Դանելն ինչ յեղավ հապա:

«Դանելը—շարունակեց պատմիչը.— Դանելը...  
Հրացանը պայթելուց հետո նա մնաց իր տեղն անշարժ  
կանգնած, ինչպես ստում են, աղոթածի պես: Չգիտես  
ապուշ եր կարե՞լ թե ինչ,—տեղից չշարժվեց. հրացանը  
ձեռին կանգնել և բուժ կերպով նայում եր, թե ինչ-  
պես ե սպան հողը ճանկոտում: Մենք նրան, ի հարկե,  
բռնեցիք և, մինչև կարգադրություն լինելը, բանտար-  
կեցինք խահանոցում ու վրան պահակ կարգեցինք:  
Վաշտի թե սպաները և թե զինվորները զարմացել  
եյին Դանելի համարձակության վրա: Մի մասը կար-  
ծում եր, վոր նա Կարնեյ Պետրովիչին խփել չի ցան-  
կացել, այլ հրացանը բացվել ե պատահաբար. մյուս-  
ները, վոր ներկա եյին փորձերին՝ գտնում եյին, վոր  
նա հրացանն ուղղակի բացել ե նրա վրա, և, իբրև ա-  
պացույց, բերում եյին Կարնեյ Պետրովիչի փորին հաս-  
ցըրած աքացին: Ինչ վերաբերում ե աքացուն—դա  
ճիշտ եր. ինքս ել տեսա: Բայց թե զիտմամբ եր ար-  
ձակել գնդակը—գովարանում եյի հաստատել, վորով-  
հետև լավ չեյի տեսել: Մի խոսքով, այս ամենից վճռն  
եր ճիշտ, վճռը՝ սխալ, գովար եր ասել: Փաստն այն  
եր, վոր սպան սպանվել եր զինվորի ձեռքով: Զինվոր-  
ներն ահ բեկված եյին: Բոլորն այն կարծիքի եյին,  
վոր Դանելին մահապատիժ ե սպանում—գնդակա-  
հարում: Ուրիշ պատիժ լինել չեր կարող, ի հարկե,  
յեթե...յեթե Դանելը մտար:

Նույն այդ գիշերը նա խոհանոցի լուսամուտի  
փեղկերը հանում ե և փախչում: Նրա տեղը բռնեցին  
պահակին և գնդակահարեցին: Իսկ թե ինչ յեղավ ին-

քը, ուր գնաց—չիմացանք: Սակայն զինվորները հա-  
ճախ հիշում եյին նրան և այլևս վնչ թե ծիծաղում ե-  
յին նրա ապիկարության վրա, այլ զարմանում այն  
խիզախությանը, վոր ինքը վախկոտ, հասարակ մի  
զինվոր՝ զենք բարձրացրեց Կարնեյ Պետրովիչի պես  
խիստ սպայի վրա: Դրանից հետո մենք բոլորս սպա-  
սում եյինք, վոր մեր զբոսը յուր պիտի վատանա,  
մեզ պիտի նեղեն, կանոնների խտություն չենթարկեն:  
Բայց, ընդհակառակը, սպաներն ավելի մեղմացան: Իսկ  
Կարնեյ Պետրովիչին փոխարինելու յեղած սպան՝ մեզ  
հետ վարվում եր ուղղակի ընկերաբար:

Բայց թե ինքը՝ Դանելը ուր գնաց, ինչ յեղավ  
—չգիտեյինք զարձյալ:

Սակայն, մի տարի անց, հեղափոխությունից մի  
քանի ամիս հետո, յես անսպասելի հանդիպեցի նրան  
Հյուսիսային Կովկասում՝ հեղափոխության ամե-  
նայեռուն, խառնակ շրջանում: Յես, իբրև զորացրման  
յենթակա զինվոր, բազմաթիվ հայ, վրացի զինվորնե-  
րի հետ վերադառնում եյի հայրենիք: Մեզ հետ կային  
և՛ ուսու զինվորներ և՛ սպաներ և՛ կանայք և՛ քաղաքա-  
ցիներ—մի ամբողջ կառախումբ ապրանքատար վագոն-  
ների, վոր ավելի շուտ նման եր Նոյան տապանի: Ինչ  
տեսակ մարդ, կենդանի ասեք—կար մեզ մոտ: Տեղա-  
փոխվող մի ընտանիք իր հետ տանում եր վանդակի  
մեջ զրված թութակ, վորը շուտ-շուտ կանչում եր ուս-  
սերեն՝ «Иди, Иван, иди!». Կար և մի կատու, վորին,  
տերերը, չկորցնելու համար, թելով կապել եյին սնդու-  
կից: Մի խումբ զինվորներ վերցրել եյին իրենց հետ,  
ըստ յերևութիւնի, իրենց զորամասի շունը, վոր շարու-  
նակ հաչում եր վագոնից՝ հեռու դաշտերում յեղած



մարդկանց, հովիթներ, անասունների վրա. հաչում եր, հաչում և անարձագանք մնալով՝ սկսում եր վռնանալ...

Հանքային ջրերի շրջանում մեր գնացքը կանգ առավ մի փոքրիկ, աննշան կայարանում: Մութն է, ցուրտ, ամառի: Շենքերը դատարկ են, քանդված, անպատահան, ու քամին վզովում է նրանց մեջ: Մի փոքրիկ սենյակում միայն յերկու յերեք սովեր են նկատվում. դրանք ել կանդուկտորի լապտերի լույսով ինչ-վոր բան են անում գլուխ գլխի դրած: Թվում են դավադիրներ, վոր վոճիրներ են նյութում այդ մութ ամայության մեջ: Բայց հետո պարզվեց, վոր դրանք կայարանի ծառայողներն էին: Ցուրտ է, վագոնից դուրս գալ անկարելի յե. դեկտեմբերյան այն սուր, կծու ցուրտը. յերբ մի շնչով մարդու բեղ ու հոնք յեղյամ են բռնում: Բոլորս վագոններում կծկվել, աշխատում ենք միմյանց սեղմելով՝ տաքանալ: Ու հենց վագոնի մեջ թեյ ենք յեփում և հերթով խմում: Բայց գնացքը չի գնում, կանգնում է ավելի, քան պետք է: Բոլորը ջղայնացել են: Ինչո՞ւ չի գնում: Բայց վոչ-վոր չի իջնում պատճառն իմանալու: Թուֆակը շարունակ կանչում է. «Иди, Иван, иди!». մյուս կողմից շունն է վռնում անհանգիստ, յերեխաներն են լալիս: Բայց վոչ-վոր չի իջնում: Ու գնացքը կանգնում է մի ժամ, յերկու ժամ, յերեք ժամ... Վերջապես, մեր դիմումին կայարանապետը պատասխանում է.

— Կարգավորված է չթողնել!

Կարճ, անողոք խոսքեր, վորոնց տոնը վոչ մի առարկութուն չի վերցնում:

Անցան հավիտենության չափ յերկար ժամեր: Ցուրտ, սուր, դառը ժամեր: Վերջապես, լուսարացին

կայարան յեկան մի խումբ մարդիկ՝ վոտից գլուխ գինված. գնացքը շրջապատեցին: Ահաբեկում ու սարսափ: Յերեք հոգի մտան ներս և, վագոնից վագոն անցնելով՝ սկսեցին դուկումենտներ ստուգել: Վորոնում էյին սպաներ: Վերջապես, գտան 13 հոգի. դրանց թվում և ինձ: Չգիտեմ, ինչո՞ւ ինձ ել ընդունեցին սպայի տեղ: Դուկումենտներս համարեցին կեղծ և ատաղարին ու տարան: Դրանում, անշուշտ, մեղավոր եր իմ արտաքինը, վոր գինվորի տպավորութուն չի թողնում, ինչպես տեսնում եք (ժպտաց մեր դերասանակերպ ուղեկիցը), և իմ սպիտակ ձեռները, վոր նուշնայես, ինչպես տեսնում եք, նման չեն գինվորի ձեռների:

— Հետո, հետո,— հետաքրքրվեց ուսուցիչը:

«Այսպես, ուրեմն, տասերեքիս ել շրջապատած տարան ինչ-վոր սահմիցա, վորի անունը մոռացել եմ հիմա: Տարան, արին մի սենյակ ու դուռը փակեցին:

— Սպասեցեք, ասում են, հիմա կըգա Դանիլոն...

Ո՞վ է Դանիլոն,— չեմ հասկանում: Սպասեցինք, սպասեցինք, վերջապես, դուռը բաց արին և մի յերեք հոգի ներս մտան: Մեկը, վոր, ըստ յերևույթին, միծավորն եր, ձեռը կանթեց մեջքին և նայեց մեզ սարսափելի կատաղի աչքերով: Այդ աչքերը, և նրա ամբողջ կերպարանքն առհասարակ, ինձ ծանոթ թվացին: «Վերտեղ եմ տեսել». մտածում եմ և չեմ հիշում: Վերջապես,— տեսնեմ— յերևակայեցեք— մեր Դանիլը...

Բանից պարզվեց, վոր նա այդ շրջանում, մի խմբի գլուխ անցած, գործում է: Ձեռն ընկած սպան բաց չի թողնում, ով ել նա լինի՝ հասարակ սպա թե



զեներալ. միևնույն է. — խմբերով զնդակահարում և  
անխնա...

Այստեղ մեր գնացքը շրխկոցով կանգ առավ և  
պատմութիւնն ընդհատվեց:

Մեր կայարանն էր:

Յեա, ուղեկիցներին հրաժեշտ տալով, իջա: Այնու-  
հետև թե ինչպէս պիտի վերջանար Դանելի պատմու-  
թիւնը, չիմացա: Բայց մինչև տուն, իմ մօթ ու ա-  
մայի ճանապարհին, միտքս բոլոր ժամանակ զբաղ-  
ված էր այն հարցով, թե ինչպէս պիտի լիար զենք չսի-  
րող Դանելը դարձել էր սպաներ կոտորող Դանել...

1922.



Յ Ա Ն Կ



|    |              |      |   |   |   |       |
|----|--------------|------|---|---|---|-------|
| +X | ՊԱՏԵՐԱԶՄԸ    | 1920 | . | . | . | Յերես |
| X  | ՎԱՀԱՆԻ ՑԱՎԸ  | 1916 | . | . | . | 7     |
|    | ՇՈՒԿԱՅՈՒՄ    | 21   | . | . | . | 51    |
| X  | ԶՐԶՈՐԻ ՄՈՏ   | 20   | . | . | . | 79    |
| +X | ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ  | 18   | . | . | . | 101   |
|    | ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ | 19   | . | . | . | 117   |
| +X | ԻՆՎԱԼԻԴԸ     | 21   | . | . | . | 129   |
| X  | ԲԱԽՏ         | 15   | . | . | . | 139   |
|    | ՈՀԱՆԻ ՄԱՀԸ   | 10   | . | . | . | 147   |
|    | ՅԵՐԳԸ        | 22   | . | . | . | 155   |
|    | ՎԱԽԸ         | 22   | . | . | . | 187   |
|    |              |      | . | . | . | 195   |







պարհ 3-52

ՀՀ Ազգային գրադարան



NL0342115



30118